ածելիների պատյաններ. խոռոչների գայլիկոններ (շաղափներ) (ձեռքի գործիքների մասեր). փոցխեր (ձեռքի գործիքներ). թիեր (ձեռքի գործիքներ). բահեր (ձեռքի գործիքներ). էտելու մկրատներ. գերանդիներ. գերանդիների օղակներ. սրոցաքարեր գերանդիների համար. արդուկներ (ոչ էլեկտրական, ձեռքի գործիքներ). ծալքավորման գործիքներ ողորկման գործիքներ. նախշառանդաների սայրեր. մատնեքահանման դանակներ. գործվածքները ծալքավորելու հարմարանքներ. տավրեր. գչրակ (ձեռքի գործիքներ). սառը զենքերի պատյաններ. մազերը գանգրացնող ձեռքի ոչ էլեկտրական հարմարանքներ. գազոնահնձիչներ (ձեռքի գործիքներ). սառցատապարներ. կիսակլոր դուրեր (ձեռքի գործիքներ). ոստիկանական մահակներ. փորագրական ասեղներ. պայտելու դանակներ. բանջարեղեն մաքրելու դանակներ. փոխպատվաստման դանակներ (ձեռքի գործիքներ). եզրակոսահաններ. բանջարեղեն կտրատելու հարմարանքներ. սակրեր (տապարներ). մանրատիչներ՝ որպես դանակներ. կացնիկներ (ձեռքի գործիքներ). որսատեգեր (հարպուններ)*. ուրագներ (գործիքներ). քաղհանիչներ. ոստրեներ բացելու գործիքներ. միջատասպան նյութերի փոշեցիրներ (ձեռքի գործիքներ). ձեռքով կառավարվող այգե-բանջարանոցային գույք. պատվաստի դանակներ. ագույցներ ատաղձագործական կամ տակառագործական աշխատանքների համար. ածելիների սայրեր. սայրեր (ձեռքի գործիքներ). շեղբեր (զենքեր). սղոցների տափուկներ (ձեռքի գործիքների մասեր). լծակներ. մաչետե. թակեր (ձեռքի գործիքներ). մուրճեր (ձեռքի գործիքներ). կռաններ. քարտաշի մուրճեր. հատիչներ. մետաղական ժապավենները ձգելու սարքեր (ձեռքի գործիք). անվիկավոր դանակներ (ձեռքի գործիքներ). դրամահավաք հարմարանքներ. սանդեր տրորելու համար (ձեռքի գործիքներ). պատրույգները կտրելու մկրատներ. պիտոյատուփեր սափրվելու պարագաների համար. համարներ փորագրելու գործիքներ. եղունգների սղոցիկներ. պահածոյի ոչ էլեկտրական դանակներ. բրիչներ (ձեռքի գործիքներ). թակեր (ձեռքի գործիքներ). ատրճանակներ (ձեռքի գործիքներ). կետանշիչներ (ձեռքի գործիքներ). ձուլաշերեփներ (ձեռքի գործիքներ). ռանդաների սայրեր. խոշորաքարթ խարտոցներ (թորբու, տովրիկ) (ձեռքի գործիքներ). էլեկտրական և ոչ էլեկտրական ածելիներ. անցքահատներ. վառքի կրակխառնիչներ. գամիչ գործիքներ (ձեռքի գործիքներ). կարճ կոթով գերանդիներ. եղաններ քաղհանելու համար (ձեռքի գործիքներ). քաղհանիչներ (ձեռքի գործիքներ). սղոցների շրջանակներ. գզող հարմարանքներ (ձեռքի գործիքներ). այգեգործական կոր դանակներ. մանգաղներ. հեղուկների պարզվածքազատման գործիքներ (ձեռքի գործիքներ). կտրող առարկաներ (ձեռքի գործիքներ). ներպարուրակիչներ (ձեռքի գործիքներ). հորատներ (ձեռքի գործիքներ). ոչ էլեկտրական պտուտակահաններ. դուրեր (ձեռքի գործիքներ). փոխովի ծայրեր (ձեռքի գործիքներ). խողովակներ կտրելու գործիքներ. շաղափիչներ. ձեռքով կառավարվող գյուղատնտեսական գործիքներ. հեսանասկավառակներ (ձեռքի գործիքներ). միջատասպան նյութերի ցրցայտիչներ. ճաշի արծաթե սպասք (դանակներ, պատառաքաղներ և գդալներ). փորիչներ (ձեռքի գործիքներ). դանակներ. աքցաններ. ունելիներ. սուսերներ. թրեր. ցցահար մուրճեր (ձեռքի գործիքներ). տոմսերի դակիչներ. եղունգների էլեկտրական սղոցիկներ. եղունգները ողորկելու էլեկտրական կամ ոչ էլեկտրական հարմարանքներ. գայլիկոնի կապիչներ (ձեռքի գործիքներ). անձնական օգտագործման էլեկտրական և ոչ էլեկտրական մեքենաներ մազերը խուզելու համար. գյուղատնտեսական եղաններ (ձեռքի գործիքներ). եղունգներ կտրելու էլեկտրական և ոչ էլեկտրական գործիքներ. կենդանիներին խուզելու գործիքներ (ձեռքի գործիքներ). խուզելու դանակներ (ձեռքի գործիքներ). արդուկներ. զմռնիտե սկավառակներ. խարտոցներ (գործիքներ). անցքահան աքցաններ (ձեռքի գործիքներ). մամլամատներ (ձեռքի գործիքներ). կտրող գործիքներ (ձեռքի գործիքներ). գործիքների հավաքակազմեր մատնահարդարման համար. ձեռքի ատրճանակներ մածիկներն արտաճզմելու համար. քաղհանիչներ խաղողի այգիները մշակելու համար (ձեռքի գործիքներ). քերակներ (ձեռքի գործիքներ). երկբռնակ դանակներ մսի համար, դանակ հանդիսացող մսի կտրիչներ. քերաններ (ձեռքի գործիքներ). ականջ դակելու գործիքներ. մազազրկման էլեկտրական և ոչ էլեկտրական հարմարանքներ. էլեկտրական գործիքների հավաքակազ-

մեր մատնահարդարման համար. մամլակներ. ձեռքի պոմպեր. դաշույններ. ձեռքի գործիքների կալիչ գոտիներ. պանիր կտրելու ոչ էլեկտրական դանակներ. պիցա կտրելու ոչ էլեկտրական դանակներ. լինգեր. ձու կտրելու ոչ էլեկտրական դանակներ. նրբուներ թարթիչները ոլորելու համար. թեք (անկյան տակ) եզրակտրման ձեռքի գործիքներ. փոցխեր գոլֆի արահետները խնամելու համար. բուխարիների փուքսեր (ձեռքի գործիքներ). ապարատներ դաջվածքի համար. զմռնիտե խարտոցներ. ձգովի մետաղալար (ձեռքի գործիքներ). մեկուսիչ հանելու գործիքներ (ձեռքի գործիքներ). էջատման մամլակներ (ձեռքի գործիքներ). ոչ էլեկտրական ատրճանակներ ճեղքերը փակելու համար. մետաղալարերը ձգելու սարքեր (ձեռքի գործիքներ). դանակներ ստեղծագործական ժամանցի համար (հերձադանակներ). ձեռքով կառավարվող օդային պոմպեր. խեցեղեն դանակներ. ստվարաթղթից զմռնիտե սղոցիկներ. դահուկների եզրակները սրելու ձեռքի գործիքներ. դաջվածք անելու ասեղներ. մածկիչներ նկարիչների համար. դուրեր քանդակագործների համար. սեղանի պլաստմասսայե գդալներ, պատառաքաղներ և դանակներ. սեղանի մանկական գդալներ, պատառաքաղներ և դանակներ. քերակներ դահուկների համար. ձեռքով կառավարվող ձեռքի գործիքների կոթեր. դանակների կոթեր. գերանդիների մետաղական կոթեր. ձեռքով կառավարվող պարուրաձև բանջարակտրատիչներ. բանջարամաքրիչներ (ձեռքի գործիքներ). դանակներ դուրս հանովի սայրով. մազ հյուսող էլեկտրական գործիքներ. ներկեր խառնելու փայտիկներ. գինու շշի փայլաթիթեղը կտրող ձեռքի գործիքներ. միրգ կտրող դանակներ. մրգի միջուկը հանելու դանակներ. խոհանոցային մանդոլիններ. ճանկեր մսի համար. մանրէազերծված գործիքներ մարմնի պիրսինգի համար. մազահեռացման լազերային սարքեր, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. վթարային մուրճեր. բանջարեղենի դանակներ. կտրատելու պատառաքաղներ. կտրատող դանակներ. բազմաֆունկցիոնալ դանակներ. եգիպտացորենի կողրերը մաքրող ձեռքի գործիքներ. միրգ կտրելու ձեռքի գործիքներ. ձեռքով կառավարվող խոհանոցային պրոցեսորներ. ձեռքով կառավարվող շարժական մանածագործական հաստոցներ. ձեռքով կառավարվող խողովակաձև մամլիչներ, բացառությամբ կենցաղային նպատակների համար օգտագործվողների.

դաս 9. էլեկտրական կոճեր. մասնիկների ուժեղարարներ. հագուստին ամրացվող լույս անդրադարձնող սկավառակներ տրանսպորտային վթարները կանխելու համար. դժբախտ պատահարներից պաշտպանության անհատական միջոցներ. դժբախտ պատահարներից, ճառագայթումից և կրակից պաշտպանող հագուստ. էլեկտրական կուտակիչներ տրանսպորտային միջոցների համար. կուտակիչների բանկաներ. էլեկտրական կուտակիչների պատյաններ. կուտակչային մարտկոցների խտաչափներ. ջրաչափներ. կուտակիչի թիթեղներ. տագնապի ազդասարքեր. ձայնային ազդանշանային սարքեր. ձայնահաղորդիչներ. ձայնագրման սկավառակներ. խոսափողեր. ճառագայթաչափներ. գումարման սարքեր. գազախտաչափներ. լուսախոշորացուցիչներ. երկաթուղային ուղեփոխ սլաքների հեռակառավարման էլեկտրադինամիկական ապարատուրա. մագնիսներ*. էլեկտրամագնիսների կոճեր. օդի բաղադրության անալիզի ապարատներ. վթարային ազդասարքեր. սպիրտաչափներ. շարժաքանոններ. սննդամթերքի և կերերի անալիզի սարքեր. էլեկտրական հեռավառոցքային ապարատներ. վառոցքի համակարգերի մարտկոցներ. բարձրաչափներ. դժբախտ պատահարներից պաշտպանող ասբեստե գործվածքից ձեռնոցներ. կրակից պաշտպանող հագուստ ասբեստե գործվածքներից. ամպերաչափներ. ձայնի ուժեղարարներ. էլեկտրոնային ուժեղարար լամպեր. հողմաչափներ. տրամաչափիչ օղեր. կրակմարիչներ. անոդներ. անոդային մարտկոցներ. ալեհավաքներ. հակաշլացման լուսապաշտպան ապակիներ. սաղավարտների հովարներ. խանգարումապաշտպան սարքեր (էլեկտրականություն). տրանսֆորմատորներ (էլեկտրականություն). բացվածքաչափներ (օպտիկական). դրամները հաշվելու և տեսակավորելու մեքենաներ. բաշխիչ տուփեր (էլեկտրականություն). տեղագրական գործիքներ. չափիչ ժապավեններ. օբյեկտիվներ աստղալուսանկարչության համար. ջերմաէլեկտրոնային լամպեր. ուսուցման տեսալսողական միջոցներ. կանխավճարով աշխատող երաժշտական ավտոմատներ.

կանխավճարով աշխատող ավտոմատների մեխանիզմներ. ժետոնով աշխատող ապարատների մեխանիզմներ. տրամաչափիչներ. համեմատիչներ. հրդեհի ազդանշանիչներ. ավտոմեքենայի անվադողերում ցածր ճնշման ավտոմատ ցուցիչներ. հատուկ պաշտպանիչ կոմբինեզոններ օդաչուների համար. վթարային էլեկտրական զանգեր. ձողիկներ ստորգետնյա ջրերի աղբյուրների տեղադրությունը որոշելու համար. փրկարարական լաստեր. կշեռքներ. օդերևութաբանական զոնդ-գնդեր. մագնիսական ժապավենների մագնիսաթափման սարքեր. մագնիսական ժապավենների վրա գրանցման սարքեր. մագնիսական ժապավեններ. ճնշաչափներ. կշռման սարքավորանք. հարթակավոր կշեռքներ. հրդեհաշիջման ժամանակ օգտագործվող հարվածող հարմարանքներ. լիցքավորիչներ էլեկտրական կուտակիչների համար. բետատրոններ. տոմսեր բաշխող տերմինալներ, էլեկտրոնային. բարձրախոսների պատյաններ. մակրոոսպնյակներ, հավելադիր ոսպնյակներ. ծայրային կցորդիչներ (էլեկտրականություն). ճնշման ցուցիչ խցաններ փականների համար. գալվանաչափներ. զանգերի կոճակներ. ճյուղավորման տուփեր (էլեկտրականություն). նվագարկիչների տոնարմներ. սպիրտային հարթաչափներ. գրասենյակային սարքավորանք ծակոտաքարտերի օգտագործմամբ. էլեկտրական մալուխների պարուտակներ. շրջանակներ դիապոզիտիվների (պատկերների) համար. հաշվիչ սկավառակներ, լոգարիթմական շրջանաձև քանոններ. լոգարիթմական քանոններ. հաշվասարքեր. բացովի տրամաչափիչներ. ձևանմուշներ (չափիչ գործիքներ). լուսապատճենման ապարատներ. կինոնկարահանման խցիկներ. մազական լաբորատոր խողովակներ. ձայնագրությունների կրիչներ. պաշտպանիչ սաղավարտներ. շնչադիմակներ, ոչ բժշկական նպատակների համար. եռակցողի դիմապանակներ. ակնոցների շղթաներ. ջերմակարգավորման սարքեր. լուսանկարչական լաբորատորիաներ. ստուգիչ-չափիչ սարքեր շոգեկաթսաների համար. չորացուցիչներ (լուսանկարչություն). կինոֆիլմերի (կինոժապավենների) մոնտաժման հարմարանքներ. տպասխեմաներ. լուսաազդանշային (առկայծումային) ապարատներ. ազդանշանային զանգեր. մանրադիտակների առարկայական ապակիների պատյաններ. էլեկտրական կոլեկտորներ. արտադրական գործընթացների հեռակառավարման էլեկտրական տեղակայանքներ. փակ անջատիչներ (էլեկտրականություն). կոմուտատորներ. ծովային կողմնացույցներ. օկուլյարներ (ակնապակիներ). ջուլիակային խոշորացույցներ. քայլաչափներ. հաշվիչներ. մետրոնոմներ. էլեկտրական կոնդենսատորներ. էլեկտրահաղորդիչներ. էլեկտրական մայրուղիներ. էլեկտրական շղթայի գործարկիչներ. միացիչներ (էլեկտրականություն). միացման տուփեր (էլեկտրականություն). կոմուտացման վահաններ. էլեկտրական հպակներ. նամականիշներով վճարումների վերահսկողության ապարատներ. էլեկտրական կարգավորող սարքեր. հսկողության էլեկտրական սարքավորումներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. տրանսպորտային միջոցների արագությունը վերահսկող սարքեր. էլեկտրական կերպափոխիչներ. լուսապատճենման սարքեր (լուսանկարչական, էլեկտրաստատիկ, ջերմային). ակնոցների նրբաքուղեր. թորանոթներ. թորանոթները պահող հարմարանքներ. ուղղիչ ոսպնյակներ (օպտիկա). օբյեկտիվներ (ոսպնյակներ) (օպտիկա). տիեզերագրական գործիքներ. կոստյումներ ջրասուզակության համար. կոմուտացման էլեկտրական ապարատներ. էլեկտրական փոխարկիչներ. սահմանափակիչներ (էլեկտրականություն). խցակի էլեկտրական երկժանիներ. հոսանքի ուղղիչներ. ռեդուկտորներ (էլեկտրական). դերձակների մետրեր. հալքանոթներ (լաբորատոր). կաշիների հաստությունը չափող սարքեր. ցիկլոտրոններ. կեղծ դրամների դետեկտորներ. փականակներն իջեցնող մեխանիզմներ (լուսանկարչություն). խտաչափներ. մուլտիպլիկացիոն ֆիլմեր. լաբորատոր տակդիրներ. մետաղադետեկտորներ արդյունաբերական կամ ռազմական նպատակների համար. սոնարներ. դետեկտորներ. լուսանկարչական փականներ. մեմբրաններ (ակուստիկա). դիապոզիտիվների կենտրոնադրման սարքեր. լուսանկարչական ապարատներ. դիապոզիտիվներ (լուսանկարչություն). դիասկոպներ. հեռավորություն չափող սարքեր. դիկտոֆոններ. դիֆրակցիոն ապարատներ (մանրազննություն). բարձրախոսներ. էլեկտրա-

կան ապահովիչներ. նվագարկիչներ. մանրադիտակներ. հեռաձայնագրման սարքեր. հեռաչափներ (սարքեր). բաշխիչ վահաններ (էլեկտրականություն). բաշխիչ կառավարակետեր (էլեկտրականություն). չափակարկիններ. չափիչներ. չափիչ սարքեր. դինամոմետրեր (ուժաչափներ). ջրի մակարդակի ցուցիչներ. հրշեջային փրկասանդուղքներ. բռնկումային լամպեր (լուսանկարչություն). հեռախոսափողեր. ֆլուորեսցենտող (լուսածոր) էկրաններ. պրոյեկցիոն էկրաններ. աշխատողների դեմքը պաշտպանող վահաններ. էկրաններ (լուսանկարչություն). լուսանկարչության մեջ օգտագործվող չորացման հարմարանքներ. հոսանքի կորստի էլեկտրական ցուցիչներ. էլեկտրական չափիչ սրքեր. էլեկտրական մալուխներ. էլեկտրահաղորդագծեր. կառավարման վահաններ (էլեկտրականություն). գալվանական տարրեր. էլեկտրական գծերի միացքներ. էլեկտրական միացքներ. էլեկտրական ռելեներ. էլեկտրոնային ազդանշանների հաղորդիչներ. ռադիոհաղորդիչներ (հեռակապ). ակուստիկ սկավառակները մաքրելու հարմարանքներ. ձայնագրման ժապավեններ. տրանսպորտային միջոցների անցած տարածության (կմ, մղոն) հաշվիչներ. կոճեր (լուսանկարչության). մեխանիկական ցուցանակներ. էպիդիասկոպներ. փորձանոթներ. հավասարակշռման սարքեր. թերմոստատներ (ջերմապահպանիչներ). էրգաչափներ. նյութերը փորձարկելու մեքենաներ և սարքեր. ձվադիտակներ. տվիչներ. բենզինի մակարդակի ցուցիչներ. կայծմարիչներ. լուսանկարչական ապարատների և լուսանկարչական պարագաների հատուկ պատյաններ. ապարատուրա անալիզների համար, բացառությամբ բժշկականի. բեկումաչափներ. լուսակայացույցներ (լուսավորվածության չափիչներ). հաշիվները դուրս գրելու սարքեր. խմորման լաբորատոր ապարատներ. երկաթուղային տրանսպորտում անվտանգություն ապահովող սարքեր. էլեկտրահաղորդալարեր. մագնիսական լարեր. ուղղալարի ծանրոցներ. ուղղալարեր. ցանցեր դժբախտ դեպքերից պաշտպանելու համար. փրկարարական ցանցեր. բրեզենտ փրկարարական աշխատանքների համար. ժապավեններ կտրելու սարքեր. շնչադիմակների զտիչներ ոչ բժշկական նպատակների համար. լուսանկարչությունում օգտագործվող զտիչներ. լիցքավորիչներ կուտակիչների համար. բարձր հաճախականության ապարատուրա. հաճախաչափներ. հալուն ապահովիչներ. ռադիոսարքեր. գալենիտային բյուրեղներ (դետեկտորներ). գալվանական տարրերի մարտկոցներ. դժբախտ պատահարներից պաշտպանող ձեռնոցներ. ջրասուզակների ձեռնոցներ. ռենտգենյան ճառագայթումից պաշտպանող ձեռնոցներ արդյունաբերական նպատակների համար. գազաանալիզարարներ. գազաչափներ (չափիչ գործիքներ). երկրաբաշխական սարքեր և գործիքներ. նշաձողեր (գեոդեզիական գործիքներ), մակարդակաչափ ցցանիշներ (գեոդեզիական գործիքներ). լուսանկարները չորացնող սարքեր. լուսանկարչական փայլարկիչներ. քանոններ (չափիչ գործիքներ). աստիճանավորված ապակե անոթներ. ռաստրեր (պատկերացանցեր) լուսատպվածքների համար. էլեկտրական կուտակիչների թիթեղների ցանցեր. կրակից պաշտպանող հագուստ. ընդունիչներ (ձայնա- և տեսա-). արևագրիչներ. հոլոգրամներ. խոնավաչափներ. էլեկտրական լարերի նույնականացման ջղեր. էլեկտրական լարերի նույնականացման պարուտակներ. փրկարարական սարքեր և սարքավորումներ. հրշեջ փողրակների ծայրապանակներ. հրշեջ ավտոմեքենաներ. հրշեջ պոմպեր. թեքաչափներ. սակահաշվիչներ. քանակի ցուցիչներ. վակուումաչափներ. արագաչափներ. ինդուկտիվության կոճերի միջաձողեր (էլեկտրականություն). խարիսխներ (էլեկտրականություն). տեղեկատվության մշակման սարքեր. հայելիներ զննման աշխատանքների համար. խոսակցական ապարատներ. լուսանկարչական թիթեղների տուփեր. կերպափոխիչներ (էլեկտրականություն). իոնարարներ, բացառությամբ օդը մշակելու համար օգտագործվողների. դռան օպտիկական դիտանցքեր (խոշորացուցիչ ոսպնյակներ). հարմարանքներ զգեստների ներքևի մասը շտկելու համար. հատուկ կահույք լաբորատորիաների համար. կաթնախտաչափներ. կաթնաչափներ. լամպեր լուսանկարչական լաբորատորիաների համար. օպտիկական համակարգով լապտերներ. մոգական լապտերներ. ազդանշանային լապտերներ. լազերներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. օպտիկական ոսպնյակ-

ներ. գրասենյակային կշեռքներ նամակների համար. լագեր (չափիչ գործիքներ). խորաչափների գծեր. խոշորացույցներ (օպտիկա). լուսային ցուցանակներ. նեոնային խողովակներ ցուցանակների համար. ակնոցներ (օպտիկա). օպտիկական մակարդակաչափներ. ակնոցների ապակիներ. օպտիկական իրեր. ճնշաչափներ (մանոմետրեր). շրջադիտակներ. պաշտպանիչ դիմակներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. մաթեմատիկական գործիքներ. կանխավճարով աշխատող մեխանիզմներ հեռուստացույցների համար. մեգաֆոններ. համակարգիչների հիշողության բլոկներ. ատաղձագործների քանոններ (մետրեր). սնդիկային հարթաչափներ. արագություն չափող սարքեր (լուսանկարչություն). ճշգրիտ չափման սարքեր. չափիչ գործիքներ. օդերևութաբանական սարքեր. քանոններ, մետրեր (չափիչ գործիքներ). օպտիկական սարքերի և գործիքների մանրաչափական պտուտակներ. միկրոֆոններ. մանրահատիչներ. ժամանակի ավտոմատ ռելեներ. անդրադարձիչներ (օպտիկա). շնչառական ապարատներ ստորջրյա լողի համար. ծովային սարքեր և գործիքներ. ծովային ազդանշանային սարքեր. նավագնացական սարքեր և գործիքներ. ակնոցների շրջանակներ. էլեկտրական մարտկոցներ. էլեկտրական կուտակիչներ. հարթաչափներ (հորիզոնական դիրքի որոշման սարքեր). մակարդակաչափական գործիքներ. պրիզմաներ (օպտիկա). դիտասարքեր. օկտանտներ (անկյունաչափներ). օմաչափներ. ալիքաչափներ. օպտիկական սարքեր և գործիքներ. օպտիկական ապակիներ. համակարգիչներ. համակարգչային գրառված ծրագրեր. օսցիլոգրաֆներ (տատանագրիչներ). թթվածնի վերալցման (տարաթողման) սարքեր. միկրոմետրեր (մանրաչափներ). լուսատու կամ մեխանիկական ազդանշանային պանելներ. շանթարգելներ. ավտոմեքենաների կայանման վճարովի ժամանակի հաշվիչներ. աստղագիտական սարքեր և գործիքներ. մաշկի հաստությունը չափող սարքեր. թթվաչափներ. կշռման սարքեր և գործիքներ. աղային լուծույթների խտության որոշման խտաչափներ. լվացման ռեզերվուարներ (լուսանկարչություն). լուսանկարչական ապարատների կանգնակներ. լուսանկարչական ապարատների դիտաններ. լուսաչափներ. լուսահեռագրական ապարատներ. ֆիզիկական սարքեր և գործիքներ. տրանսպորտային միջոցների ավտոմատ կառավարման սարքեր. քթակնոցներ (պենսնե). լաբորատորային կաթոցիկներ. պլանշետներ (երկրաբաշխական գործիքներ). մակերեսաչափներ. ականջի ներդրակներ ջրասուզակների համար. զանգեր (տագնապի ազդասարքեր). կշռաքարեր. բևեռաչափներ. ռադիոհեռախոսային կայաններ. ռադիոհեռագրական կայաններ. ճնշման չափիչներ. ճնշման ցուցիչներ. պրոյեկցիոն ապարատներ. կոռոզիայից պաշտպանող կաթոդային սարքեր. ատամնապաշտպանիչներ. հրաչափներ. ռադարներ. ռադիոհաղորդիչներ տրանսպորտային միջոցների համար. ռենտգենյան ապարատներ արդյունաբերական նպատակների համար. անկյունաչափներ (չափիչ գործիքներ). ռենտգենյան ճառագայթման արտադրման (գեներացման) ապարատներ և տեղակայանքներ, բացառությամբ բժշկության մեջ օգտագործվողների. ռենտգենյան խողովակներ, բացառությամբ բժշկության մեջ օգտագործվողների. ռենտգենյան ճառագայթներից պաշտպանող սարքեր, բացառությամբ բժշկության մեջ օգտագործվողների. հեռախոսային ապարատներ. բեկումային աստղադիտակներ. ռենտգենյան ապարատներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. սպեկտրադիտակներ. էլեկտրական դիմադրություններ. ջերմաչափներ, բացառությամբ բժշկական ջերմաչափների. շնչադիմակներ օդի զտման համար, ոչ բժշկական նպատակների համար. շնչառական ապարատներ, ոչ բժշկական նպատակների համար. ռեոստատներ. բեզմեններ (կշեռքներ). լուսային կամ մեխանիկական ազդասարքեր. շաքարաչափներ. զոնդեր գիտական հետազոտությունների համար. արբանյակներ գիտական հետազոտությունների համար. մեմբրաններ գիտական ապարատուրայի համար. ուսուցանող սարքեր. ինդուկտիվության կոճեր (փաթույթներ). սեղմակներ (էլեկտրականություն). էլեկտրական փականներ. սեքստանտներ. ազդանշանային սուլիչներ. կանխող եռանկյուններ անսարք տրանսպորտային միջոցների համար. ազդանշանների հեռակառավարման էլեկտրադինամիկական ապարատուրա. տրանսպորտային միջոցների կառավարման կամ ստուգման նմա-

նակիչներ. շչակներ. ձայնի հաղորդման ապարատներ. ձայնագրիչ ապարատուրա. ձայնի վերարտադրման սարքեր. խորազննման սարքեր և մեքենաներ. զոնդերի ծանրոցներ, խորաչափների ծանրոցներ. սոնոմետրեր. սպեկտրագրիչներ. գնդոլորտաչափներ. տարածադիտակներ. տարածադիտական ապարատներ. նվագարկիչների ասեղներ. սուլֆիտաչափներ. հեռատիպներ. պտուտաչափներ (դարձաչափներ). պարուրակային տրամաչափիչներ. հեռագրասարքեր (ապարատներ). հեռուստացույցներ. հեռագրալարեր. հեռակառավարման ապարատուրա. ռադիոկայմեր. հեռուստահուշարարներ. հեռախոսային հաղորդիչներ. հեռագործ ընդհատիչներ. հեռադիտակներ. աստղադիտակներ. ջերմաստիճանային ցուցիչներ. ժամանակը գրանցող սարքեր. թեոդոլիտներ (անկյունաչափ գործիքներ). թերմոստատներ փոխադրամիջոցների համար. տոտալիզատորներ. պտուտաթվերի հաշվիչներ. նվագարկիչների պտուտաթվերի կարգավորիչներ. հաղորդիչներ (հեռակապ). ճշգրիտ կշեռքներ. խազքաշներ (ռեյսմուսներ). վակուումային կաթոդային լամպեր (ռադիո). միզաչափներ. փոփոխաչափներ. վերնիներներ. մագնիսական ժապավեններ տեսագրման համար. մածուցիկաչափներ. էլեկտրական սարքեր գողությունները կանխելու համար. լարման կարգավորիչներ տրանսպորտային միջոցների համար. ընտրաձայները հաշվելու մեքենաներ. վոլտաչափներ. հարմարանքներ նվագարկիչների ասեղները փոխարինելու համար. լաբորատոր թորիչ ապարատներ. հալուն մետաղալար. հակակաթոդներ. սուլիչներ շներին հրահանգներ հաղորդելու համար. օպտիկական նշանոցներ հրազենի համար. պահպանական ազդանշանային սարքեր. անկյունաչափական գործիքներ. լուսատու ազդալողաններ. էլեկտրական կոճերի հիմնակմախքներ. լուսակայված ժապավեններ. լույս արձակող կամ մեխանիկական ճանապարհային նշաններ. փրկարար ազդալողաններ. ազդանշանային ազդալողաններ. զումմերներ. ուղղորդող կողմնացույցներ. հակամառախուղային ազդասարքեր, բացառությամբ պայթուցիկների. դրամարկղային ապարատներ. ռենտգենյան ապարատների էկրաններ արդյունաբերական նպատակների համար. նույնականացման մագնիսական քարտեր. փակող շերտով լուսատարրեր (ֆոտոէլեմենտներ). օպտիկական խտաչափներ. մագնիսական սկավառակներ. դիսկետներ. ընթերցող գլխիկների մաքրման ժապավեններ. տեսագրման սարքեր. համակարգիչների ստեղնաշարեր. ինտեգրալ սխեմաներ. կիսահաղորդիչներ. չիպեր (ինտեգրալ սխեմաներ). կաթոդներ. փրկարար բաճկոնակներ. փրկագոտիներ. քիմիական սարքեր և գործիքներ. լուսակայված կինոժապավեններ. նյութեր էլեկտրահաղորդման գծերի համար (լարեր, մալուխներ). հպաոսպնյակներ. հպաոսպնյակների պատյաններ. մանրէական կուլտուրաների ինկուբատորներ. արևային մարտկոցներ. մեկուսացված պղնձալար. գազապարպիչ էլեկտրական խողովակներ, բացառությամբ լուսավորության համար օգտագործվողների. դիաֆրագմաներ (լուսանկարչություն). թորիչ ապարատներ գիտական նպատակների համար. դոզիմետրեր. դռան էլեկտրական զանգեր. ակնոցների պատյաններ. լաբորատորիայի վառարաններ. օպտիկական մանրաթելեր (լույս հաղորդող շիկացման թելեր). հեռախոսալարեր. լուսակայված ռենտգենյան ժապավեններ. լուսանկարչության մեջ օգտագործվող ուլտրամանուշակագույն ճառագայթների զտիչներ. բարձրախոսների խոսափողեր. լուսանկարչական ապարատների կալաններ. գծիկավոր կոդերն ընթերցող սարքեր. գնդականթափանց բաճկոնակներ. ցուցիչ ազդալողաններ. մեկուսատախտակներ ինտեգրալ սխեմաների համար. լաբորատոր քրոմատագրիչներ. ժամանակագրիչներ (ժամանակի գրանցման սարքեր). խտասկավառակներ (ձայնա-, տեսա-). խտասկավառակներ (չվերագրանցելի). համակարգչային գործառնական գրառված ծրագրեր. համակարգիչներին կից սարքեր. համակարգչային գրառված ծրագրային ապահովում. լուսահավաք ոսպնյակներ. կապի ձայնային սարքեր. կոմուտացման սարքեր (տեղեկատվության մշակման սարքավորանք). ճնշամեղմման խցիկներ. կորակառուցիչներ. ստորջրյա սուզման դիմապանակներ. էլեկտրոնային մատիտներ (ցուցասարքերի տարրեր). մագնիսական ծածկագրով քարտեր. ֆաքսիմիլային ապարատներ. հրշեջ նավեր. ինտերֆեյսներ համակարգիչների համար. սկավառակակիրներ սկավառակների ավտոմատ հերթափոխու-

թյամբ համակարգիչների համար. ծնկակալներ բանվորների համար. լուսավորության էլեկտրական կարգավորիչներ. մագնիսական տեղեկակիրներ. մագնիսական կոդավորիչներ. մագնիսական ժապավենի բլոկներ համակարգիչների համար. միկրոպրոցեսորներ. մոդեմներ. մոնիտորներ (համակարգչային սարքավորանք). մոնիտորներ (համակարգչային ծրագրեր). «Մկնիկ» տեսակի մանիպուլյատորներ (կից սարքավորումներ). նշաններն ընթերցելու օպտիկական սարքեր. օպտիկական տեղեկակիրներ. օպտիկական սկավառակներ. համակարգչային տպիչներ. պրոցեսորներ (տեղեկատվության մշակման կենտրոնական բլոկներ). ընթերցող սարքեր (տեղեկատվության մշակման սարքեր). անվտանգության գոտիներ, բացառությամբ տրանսպորտային միջոցների նստոցների և սպորտային սարքավորանքի համար նախատեսվածների. պատկերամուտներ (սարքավորանք տեղեկատվության մշակման համար). ծխի դետեկտորներ. տրանզիստորներ (էլեկտրոնիկա). ռենտգենագրեր, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. մալուխների միացման կցորդիչներ. համրիչներ. էլեկտրոնային ծոցատետրեր. հեռախոսային ինքնապատասխանիչներ. տեսախցիկներ. պարկուճային նվագարկիչներ. խտասկավառակների նվագարկիչներ. ախտորոշման սարքեր, բացառությամբ բժշկական նպատակների համար նախատեսվածների. սկավառակակիրներ համակարգիչների համար. հաղորդաձողեր լույսի կետային աղբյուրների մոնտաժման համար. գրպանի էլեկտրոնային թարգմանիչներ. ապրանքների էլեկտրոնային բեռնապիտակներ. հակահրդեհային պաշտպանիչ ծածկոցներ. բռնկալամպեր (լուսանկարչություն). սմարթ-քարտեր (միկրոսխեմաներով քարտեր). չափագդալներ. դյուրակիր համակարգիչներ. հայտարարությունների էլեկտրոնային տախտակներ. գրպանի հաշվասարքեր. դժբախտ պատահարներից, ճառագայթումից և կրակից պաշտպանող կոշկեղեն. հակահրդեհային ջրցաններ. գործարկման մետաղաճոպաններ շարժիչների համար. արևապաշտպան ակնոցներ. հաշվառման (հաշվեցուցակային) ժամացույցներ (ժամանակ գրանցելու սարքեր). տեսաժապավեններ. տեսախաղերի քարթրիջներ. տեսաէկրաններ. տեսահեռախոսներ. սպորտային ակնոցներ. քթասեղմիչներ լողորդների և սուզորդների համար. պաշտպանական սաղավարտներ սպորտսմենների համար. էլեկտրոնային ներբեռնվող հրապարակումներ. համակարգչային ներբեռնվող ծրագրեր. նավագնացական սարքեր տրանսպորտային միջոցների համար (նավակողային համակարգիչներ). դեկորատիվ մագնիսներ. անլար հեռախոսներ. մկնիկների գորգեր. դյուրակիր տարածաընդունիչներ. դաստակների հենարաններ համակարգիչների հետ աշխատանքի համար. համառանցք մալուխներ. օպտիկաթելքային մալուխներ. պաշտպանիչ կափարիչներ խցակի վարդակների համար. խորջրյա զոնդեր. էլեկտրաֆիկացված ցանկապատեր. գրառված ծրագրային ապահովում համակարգչային խաղերի համար. ականջակալներ. լուսավորման համակարգերի բալաստային դիմադրություններ. փեյջերներ. արբանյակային նավագնացական սարքեր. սոլենոիդային կափույրներ (էլեկտրամագնիսական փոխարկիչներ). գերլարումից պաշտպանող կարգավորիչներ. դյուրակիր ռացիաներ. կոներ քամու ուղղությունը ցույց տալու համար. լուսային էմիսիայի էլեկտրոնային ցուցիչներ. մանեկեններ օգնություն ցուցաբերելուն վարժվելու համար (վարժասարքեր). բեմի լուսավորման կարգավորիչներ. թայմերներ (ավազի ժամացույցներ) ձու եփելու համար. ԴՆԹ-չիպեր. DVD -նվագարկիչներ. բանկոմատներ. լուսացույցներ (ազդանշանային սարքավորումներ). անլար հավաքակազմեր հեռախոսների համար. ասբեստե առաջակալներ հրշեջների համար. սաղավարտներ ձիավարության համար. լաբորատորիայի հատուկ հագուստ. անհատականացման մագնիսական ապարանջաններ. տրանսպոնդերներ (հաղորդիչներ-պատասխանիչներ). ներբեռնվող հնչյունային ֆայլեր շարժական հեռախոսների զանգերի համար. ներբեռնվող երաժշտական ֆայլեր. ներբեռնվող պատկերների ֆայլեր. մանեկեններ վթարային փորձարկումների համար. լաբորատոր ցենտրիֆուգներ. տպատախտակներ. ՀՀԴ (USB) ֆլեշ-կրիչներ. դիրքորոշման համաշխարհային համակարգի ապարատներ (GPS). դյուրակիր մեդիանվագարկիչներ. նրբաքուղեր բջջային հեռախոսների համար. լույս արձակող դիոդներ

(ԼԱԴ). տրիոդներ. բարձրացնող տրանսֆորմատորներ. անձնական դյուրակիր համակարգիչներ. հրդեհաշեջ փողրակներ. պայուսակներ դյուրակիր համակարգիչների համար. ծածկոցներ դյուրակիր համակարգիչների համար. թվային ֆոտոշրջանակներ. Պետրիի բաժակներ. Պիտոյի խողովակներ. ստրոբոսկոպներ. ճանապարհային ազդանշանային կոներ. ջերմաստիճանի կպչուն ցուցասարքեր ոչ բժշկական նպատակների համար. ներբեռնելի համակարգչային ծրագրային հավելվածներ. էլեկտրոնային գրքեր. սմարթֆոններ. դատարկ տոներային քարթրիջներ տպիչների և լուսապատճենահանող ապարատների համար. լսա-տեսասարքեր երեխաներին հսկելու համար. տեսախցիկներ երեխաներին հսկելու համար. օբյեկտիվների լուսապաշտպանիչ բլենդներ. պլանշետային համակարգիչներ. կոդավորված բանալի-քարտեր. 3D ակնոցներ. հիշողության քարտեր տեսախաղերի սարքերի համար. զրահաբաճկոններ. արագացումաչափներ. էլեկտրական ձայնահաններ (ադապտերներ). փրկարար պարկուճներ բնական աղետների համար. համակարգչային սարքավորումներ. արևային մարտկոցներ էլեկտրաէներգիայի արտադրության համար. շարժական հեռախոսներ, բջջային հեռախոսներ. հեռադիտական նշանոցներ հրանոթների համար. թվային ստորագրություն. մարմնի վրա կրվող սարքեր ֆիզիկական ակտիվությանը հետևելու համար. լիցքավորիչներ էլեկտրոնային սիգարետների համար . էլեկտրոնային ապարանջաններ (չափիչ գործիքներ). սմարթֆոնների ծածկոցներ. սմարթֆոնների պատյաններ. մոնոպոդներ (ձեռքի ամրակալաններ). կալորիաչափներ. ծախսաչափներ. լույս անդրադարձնող փրկարարական բաճկոններ. էլեկտրական վզնոցներ կենդանիներ վարժեցնելու համար. կառավարման լծակներ համակարգիչների համար, բացառությամբ տեսախաղերի համար նախատեսվածների. սմարթ-ակնոցներ. սմարթ-ժամացույցներ. հակահիրդեհային ապարատներ. համակարգչային էկրանների պաշտպանիչ թաղանթներ. սպորտային սարքեր ատամները պաշտպանելու համար (կապպա). սպորտային սաղավարտներ. ասեղներ գեոդեզիական կողմնացույցների համար. անվտանգության սարքեր (կոդավորման սարքեր). ինֆրակարմիր դետեկտորներ. պատյաններ անձնական թվային օգնականների (ԱԹՕ) համար. կշեռքներ մանկիկների համար. էլեկտրոնային մուտքի հսկման համակարգեր դռների փակման համար. ջերմադիտման տեսախցիկներ. մարմնի զանգվածի վերլուծիչներով կշեռքներ. պլանշետային համակարգիչների պատյաններ. սև արկղեր (տվյալների գրանցիչներ). թվային օդերևութաբանական կայաններ. էլեկտրական տրանսպորտային միջոցների համար լիցքավորման կայաններ. ինտերակտիվ սենսորային տերմինալներ. սմարթ-մատանիներ. էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ երաժշտական գործիքների համար. ձայնային ինտերֆեյսներ. էքվալայզերներ (ձայնային ապարատներ). ցածր հաճախականության բարձրախոսներ. լոգարանի կշեռքներ. ջերմախոնավաչափներ. կենսաչիպեր. սմարթֆոնների համար հարմարեցված պաշտպանիչ ժապավեններ. վիրտուալ իրականության գլխադիր սաղավարտներ. ինտերակտիվ էլեկտրոնային գրատախտակներ. արհեստական բանականությամբ մարդանման ռոբոտներ գիտական հետազոտություններում օգտագործելու համար. ձայնային խառնիչներ. Էլեկտրոնային սիգարետների մարտկոցներ. էլեկտրոնային բանալի-բրելոկներ հեռակառավարման համար. ներբեռնելի էլեկտրոնային գրված երաժշտություն. գծագրական T – աձև քանոններ չափման համար. անկյունաքանոններ չափման համար. քառակուսի քանոններ չափման համար. էլեկտրոնային թվային ցուցասարքեր. լաբորատոր ռոբոտներ. ուսուցողական ռոբոտներ. անվտանգության ապահովման ռոբոտներ. անձնական թվային օգնականներ (ԱԹՕ). համակարգչային ծրագրային ապահովման հարթակներ, գրառված կամ բեռնվող. արբանյակային որոնիչներ. մատանու չափիչներ. մատի չափիչներ. բարակ հաճախորդ համակարգիչներ. հետևի տեսախցիկներ տրանսպորտային միջոցների համար. գրպանի էլեկտրոնային բառարաններ. մարզասարքեր վերակենդանացման հմտությունների ուսուցման համար. էլեկտրական մետաղալարեր ավտոմեքենաների համար. ակվալանգի խողովակներ. սպորտային սուլիչներ. համակարգչային էկրանները պաշտպանող ծրագրային ապահովում, գրառված կամ բեռնվող. ինքնան-

կարահանման (սելֆիի) օբյեկտիվներ. բեռնվող գրաֆիկական տարրեր բջջային հեռախոսների համար. հեռահաղորդակցային ապարատներ ոսկերչական զարդերի տեսքով. վրան կրովի համակարգիչներ. վրան կրովի մոնիտորների ցուցասարքեր. մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի (ՄՌՏ) ապարատներ, ոչ բժշկական նպատակների համար. փրկարարական լազերային ազդանշանային լույսեր. դատարկ թանաքային քարթրիջներ տպիչների և լուսապատճենահանող ապարատների համար. վահվահ ոտնակներ. հասակաչափներ. վարսահարդարների համար մանեկեն-գլուխներ (ուսումնական սարքեր). սարքեր վիրտուալ ստեղնաշարերի նախագծման համար. փրկարարական ծածկոցներ. փրկանավակներ. նանոմասնիկների չափերի վերլուծիչներ. բարձիկներ ականջակալների համար. վիրտուալ իրականության ձեռնոցներ. գնդաձև մկնիկներ (համակարգիչներին կից սարքեր). բջջային հեռախոսների համար բեռնվող զգայապատկերներ. հեռաներկայության ռոբոտներ. օդակարգավորման թվային թերմոստատներ. պիեզոէլեկտրական տվիչներ. օրգանական լուսարձակող դիոդներ (ՕԼԱԴ). քվանտային կետերով լուսարձակող դիոդներ (ՔԼԱԴ). աստիճանավորված կաթոցիչներ, բացառությամբ բժշկական կամ կենցաղային նպատակներով օգտագործվողների. խցակի էլեկտրական վարդակներ. խաղային բեռնվող ծրագրեր համակարգիչների համար. փրկարարական, ոչ պայթուցիկ և ոչ հրատեխնիկական ազդանշաններ. դյուրակիր համակարգիչների տակդիրներ. գլխարկներ՝ որպես պաշտպանիչ սաղավարտներ. էլեկտրոնային կախովի կողպեքներ. ծանրագոտիներ ջրասուզակների համար. ականջակալներ հեռավոր կապի համար. տրանսպորտային միջոցների կայանման տվիչներ. տոմսերի տպիչներ. բեռները բարձրացնելիս օժանդակելու համար մարմնի լծասարքեր. անասուններին ուղղորդելու համար նախատեսված ազդանշանային չխչխկաններ. տեսապրոյեկտորներ. ներբեռնվող ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) բանալիներ կրիպտոակտիվների ստացման և ծախսման համար. ներբեռնելի էլեկտրոնային դրամապանակներ. վարկային քարտերի տերմինալներ. կենսաչափական անձնագրեր. նույնականացման կենսաչափական քարտեր. խելացի տան հանգույցներ, տան ավտոմատացման հանգույցներ. տվյալների հավաքածուներ, գրառված կամ բեռնվող. տրանսպորտային միջոցների դիմապակու վրա տեղեկատվության ցուցադրման սարք. խելացի բարձրախոսներ. կենսաչափական կողպեքներ. հրդեհաշիջման գնդակներ. կրելի բարձրախոսներ. գերմանր փոշու մասնիկների շարժական հաշվիչներ. ծալովի սմարթֆոններ. լուսաբռնկումներ սմարթֆոնների համար. 3D սկաներներ. գերբարակ թաղանթով բարձրախոսներ. անլար խոսափողներ բարձրախոսներով. սկաներներ (սարքավորումներ) ավտոմեքենայի ախտորոշում կատարելու համար. հապտիկ կոստյումներ, բացառությամբ բժշկական նպատակների համար. ինքնանկարահանման (սելֆիի) օղակլույսեր սմարթֆոնների համար. բջջային հեռախոսի լիցքավորիչներ. բջջային հեռախոսի էկրանի պաշտպանիչներ. նախազգուշական նշաններ (լուսավորված). անվտանգության նշաններ (լուսավորված). բջջային հեռախոսի օղակ-բռնիչներ. բջջային հեռախոսի օղակ-կանգնակներ. խոսափողով ականջակալներ. խոսափողով ականջակալներ տեսախաղեր խաղալու համար. ներբեռնվող համակարգչային ծրագրային ապահովում՝ ծածկագրային (բլոկչեյն) տեխնոլոգիայի միջոցով կրիպտո-ակտիվներով գործարքների կառավարման համար. լաբորատոր էլեկտրոլիզարարներ. չափաբերման նպատակով գազի գեներատորներ. կրծքի կաթի թեստավորման սարքավորումներ, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. էլեկտրաէներգիայի դյուրակիր լիցքավորիչներ. ուժեղացուցիչներ սերվոմոտորների համար. էլեկտրոնային կառավարման սարքեր սերվոմոտորների համար. քվանտային համակարգիչներ. երաժշտական գործիքների թվային ինտերֆեյսի կարգավորիչներ՝ որպես աուդիո միջերեսներ. լաբորատոր կենսաառեակտորներ. բջիջների կուլտիվացման կենսաառեակտորներ գիտական հետազոտությունների համար. բջջային հեռախոսների և սմարթֆոնների համար հարմարեցված բռնիչներ. հեռախոսի բռնիչներ մեքենայի համար. գլխին ամրացված ցուցասարքեր. անլար շարժական տպիչներ՝ դյուրակիր համակարգիչների և շար-

ժական սարքերի հետ օգտագործելու համար. գունավոր կուրությունը ուղղելու ակնոցներ. հպաոսպնյակների պատյաններ՝ ուլտրաձայնային մաքրման գործառույթով. անկումից պաշտպանվելու համար անվտանգության բարձիկներ. նյարդային սաղավարտներ, ոչ բժշկական նպատակների համար. շարժական բարձրախոսներ. ալկոտեստերներ. դյուրակիր համակարգիչների հովացման բարձիկներ. հովացման օդափոխիչներ համակարգիչների համար. արտահայտչության ոտնակներ կիթառների համար. ներբեռնվող համակարգչային ծրագրային ապահովում՝ որպես բժշկական սարք. տարհանման աթոռներ. վահանակի գորգեր, որոնք նախատեսված են բջջային հեռախոսների և սմարթֆոնների համար. կարգավորող սարքեր սերվո շարժիչների համար. փոշու դիմակներ օդի մաքրմամբ. էլեկտրական շարժաբերներ. էլեկտրական գծային շարժաբերներ. դժբախտ պատահարներից պաշտպանող մեկուսիչ ձեռնոցներ. չափաբաժնով բաշխիչներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների (չափիչ սարքեր). չոր հիդրոկոստյումներ. հիդրոկոստյումներ ջրասուզակության համար. թաց հիդրոկոստյումներ. համակարգչային ցանցի երթուղարարներ. հաճախականության ընդլայնիչներ. շփման և ուսուցման գործառույթներով օժտված մարդանման ռոբոտներ՝ մարդկանց օգնելու և զվարճացնելու համար. հրթիռակոծման նախազգուշացնող համակարգեր. ինքնավար նավագնացական համակարգեր նավերի համար. ինքնասպասարկման տերմինալներ. փաստաթղթերի շարժական սկաներներ. ստեղնաշարով սմարտֆոնների պատյաններ. չափող սարքեր անիվների հավասարեցման համար. խառնիչներ տեսամոնտաժի համար. արհեստական բանականությամբ մարդանման ռոբոտներ՝ ըմպելիքներ պատրաստելու համար. օգտվողի կողմից ծրագրավորվող մարդանման ռոբոտներ, չկարգավորված. ներբեռնվող թվային ֆայլեր, նույնականացված ոչ փոխարկելի տոկեններով (NFT). չափաբերման նպատակով օզոնի գեներատորներ. բջջային հեռախոսների քուղեր. կայունարարներ թվային տեսախցիկների համար. կայունարարներ սմարտֆոնների համար. արևապաշտպան ակնոցներ ընտանի կենդանիների համար.

դաս 10. որովայնային գոտիներ. ենթաորովայնային գոտիներ. որովայնային իրանակալներ. բժշկական ներքնակներ ծննդաբերության համար. լսողական ապարատներ թույլ լսողություն ունեցողների համար. լսափողակներ. վիրաբուժական սեղմիչներ. բժշկական ասեղներ. ասեղներ կարեր դնելու համար. արգանդային (հեշտոցային) օղակներ. տաք օդի թերապևտիկ ապարատներ. տաք օդի թրթռիչներ բժշկական նպատակների համար. տակը դնելու մոմլաթներ հիվանդանոցային մահճակալների համար. սավաններ անպահությամբ տառապողների համար. փողաձողեր (կաթետերներ). ռադիումային խողովակներ բժշկական նպատակների համար. մանկական ատամնաօղակներ. ոսկրաբուժական վիրակապեր հոդերի համար. վիրաբուժական սևեռաթիթեղներ. ձգուն (էլաստիկ) կալանդներ. գալվանական գոտիներ բժշկական նպատակների համար. ռենտգենյան ապարատներ բժշկական նպատակների համար. սանիտարահիգիենիկ տակադիր պետքանոթներ. տակադիր պետքանոթներ բժշկական նպատակների համար. մանկաբարձական գործիքներ անասնաբույժների համար. ծծակով կերակրման շշեր. վիրաբուժական դանակներ. հերձադանակներ. ոտնամաններ բժշկական նպատակների համար. վիրաբուժական ընդարձակիչներ. թքամաններ բժշկական նպատակների համար. աղելարեր. անվավոր պատգարակներ հիվանդների համար. պատգարակներ հիվանդների համար. ոսկրաբուժական իրեր. կալանդներ ճողվածքների համար. կոշիկների սուպինատորներ (վերհակիչներ). զսպաշապիկներ. կանյուլներ (փողակներ). ձեռնոցներ բժշկական նպատակների համար. հարմարանքներ մարմնի խոռոչները լվանալու համար. գոտիներ բժշկական նպատակների համար. կալանդներ հղիների համար. ոսկրաբուժական գոտիներ. ատամնաբույժի բազկաթոռներ. ամորձատման աքցաններ. էլեկտրական բարձիկ-ջեռոցներ բժշկական նպատակների համար. ոսկրահարդար կոշիկներ. արհեստական ատամներ. վիրաբուժական սպունգներ. վիրաբուժական ապարատուրա և գործիքներ. պայուսակներ բժշկական գործիքների հավաքածուներով. վիրաբուժական թելեր. ապարատուրա անզգայացման համար. վիրաբուժական մկրատներ.

ջերմաէլեկտրական ճնշակներ (վիրաբուժական). ճնշակներ (վիրաբուժական). կաթոցիչներ բժշկական նպատակների համար. հարմարանքներ կոշտուկները կտրելու համար. կոսմետիկական մերսման սարքեր. բարձիկներ բժշկական նպատակների համար. վիրաբուժական կտրող գործիքներ. ինկուբատորներ բժշկական նպատակների համար. գդալներ դեղ ընդունելու համար. քերակներ լեզուն մաքրելու համար. ականջի ունելյակներ. ատամնաբուժական շաղափներ. ատամնաբուժական ապարատուրա և գործիքներ. բույթեր ատամների պրոթեզավորման համար. ատամի պրոթեզներ. նշտարներ. ատամնաբուժական հայելիներ. մատակալներ բժշկական նպատակների համար. ներարկիչներ ներարկումների համար. ջրաքաշման փողակներ բժշկական նպատակների համար. ջրի պարկեր բժշկական նպատակների համար. ռենտգենյան ապարատների էկրաններ բժշկական նպատակների համար. էլեկտրասրտագիրներ. զոնդեր (զննաձողեր) բժշկական նպատակների համար. պոմպեր բժշկական նպատակների համար. ապարատուրա արյան անալիզների համար. բազկաթոռներ բժշկական կամ ատամնաբուժական նպատակների համար. պղպջակային կաթոցիչներ բժշկական նպատակների համար. մանկաբարձական աքցաններ. ապարատուրա գալվանաթերապիայի համար. ձեռնոցներ մերսման համար. գաստրոսկոպներ (ստամոքսադիտակներ). բժշկական սառցապարկեր. արյունաչափիչներ. ջրային մահճակալներ բժշկական նպատակների համար. ներարկիչներ ենթամաշկային ներարկումների համար. որովայնային բարձիկներ. ինհալատորներ (ներշնչակներ). ներարկիչներ բժշկական նպատակների համար. քնաբեր բարձիկներ անքնության դեմ. ուրոլոգիական (միզաբանական) սարքեր և գործիքներ. ինսուֆլյատորներ. հոգնաներ. ուլտրամանուշակագույն լամպեր բժշկական նպատակների համար. լազերներ բժշկական նպատակների համար. կաթնածծիչներ. լամպեր բժշկական նպատակների համար. գոլորշիարարներ բժշկական նպատակների համար. միզանոթներ. ծնոտների պրոթեզներ. անզգայացման դիմակալներ. մերսման սարքեր. բժշկական սարքեր և գործիքներ. բժշկական անոթներ. բժշկական գործիքների պիտոյատուփեր (ճամպրուկներ). վերջույթների պրոթեզներ. վիրաբուժական հայելիներ. հատուկ կահույք բժշկական նպատակների համար. մանկաբարձական գործիքներ. գոտիներ պորտի համար. կերատոմետրեր, ակնաչափներ. ակնադիտակներ. լսողական օրգանները պաշտպանող միջոցներ. արհեստական մաշկ վիրաբուժական նպատակների համար. հենակների (անթացուպերի) ծայրապանակներ. դեղահաբերը ներածելու հարմարանքներ. նախապահպանակներ. զարկերակային ճնշման չափման սարքեր. քվարցային լամպեր բժշկական նպատակների համար. ռենտգենյան ապարատներ և տեղակայանքներ բժշկական նպատակների համար. ռենտգենագրեր բժշկական նպատակների համար. ռադիոգիտական ապարատներ բժշկական նպատակների համար. ապարատներ ճառագայթային բուժման համար. վերակենդանացման ապարատուրա. ռենտգենյան խողովակներ բժշկական նպատակների համար. հարմարանքներ ռենտգենյան ճառագայթներից պաշտպանվելու համար. շնչադիմակներ արհեստական շնչառության համար. ապարատուրա արհեստական շնչառության համար. սղոցներ վիրաբուժական նպատակների համար. կրծքի պրոթեզներ. արգանդային ներարկիչներ. հեշտոցային սրսկիչներ. լսափողակներ. ծծակներ երեխաների համար. հենարաններ տափակաթաթության դեպքում օգտագործելու համար. ապարատուրա խլությունը բուժելու համար. պահող վիրակապեր. կարեր դնելու նյութեր. վիրահատական սեղաններ. հերյուններ. միզուկային զոնդեր (զննաձողեր). միզուկային ներարկիչներ. բժշկական բանկաներ. անասնաբուժական սարքեր և գործիքներ. թրթռական ապարատներ մահճակալների համար. թրթռամերսիչներ. աչքի պրոթեզներ. փչովի բարձեր բժշկական նպատակների համար. փչովի բարձիկներ բժշկական նպատակների համար. փչովի ներքնակներ բժշկական նպատակների համար. ներարկիչներ բժշկական նպատակների համար. վիրաբուժական առաձգական գուլպաներ. երակների լայնացման ժամանակ օգտագործվող ձգուն (էլաստիկ) գուլպաներ. հենակներ (անթացուպեր). ծծակով կերակրման շշերի կափարիչներ. կերակրման շշերի ծծակներ. ոսկրահարդար

միջատակեր. մանրէազերծված վիրաբուժական սավաններ. հատուկ բժշկական նպատակների համար հարմարեցված մահճակալներ. էլեկտրոդներ բժշկական նպատակների համար. էլեկտրական գոտիներ բժշկական նպատակների համար. ապարատուրա ֆիզիկական վարժությունների համար բժշկական նպատակներով. ինկուբատորներ նորածինների համար. հարմարանքներ մարմնի խոռոչները մաքրելու համար. ատամնաբուժական էլեկտրական ապարատուրա. ապարատուրա բժշկական անալիզների համար. ուլտրամանուշակագույն ճառագայթների զտիչներ բժշկական նպատակների համար. ծխահարման ապարատներ բժշկական նպատակների համար. իրանակալներ բժշկական նպատակների համար. ոչ քիմիական հակաբեղմնավորիչ միջոցներ. էլեկտրական ծածկոցներ բժշկական նպատակների համար. մազի պրոթեզներ. վիրաբուժական ծնկակալներ. ոսպնյակներ (ներակնային պրոթեզներ) ներպատվաստման համար. պառկելախոցերի առաջացումը կանխող բարձիկներ. ֆիզիոթերապևտիկ ապարատուրա. շնչաչափներ (բժշկական գործիքներ). ջերմաչափներ բժշկական նպատակների համար. ասեղներ ասեղնաբուժության համար. հատուկ հագուստ վիրահատական սենյակների համար. ախտորոշման ապարատներ բժշկական նպատակների համար. գործիքներ էլեկտրաասեղնաբուժության համար. սրտախթանիչներ. բուժվող հիվանդներին բարձրացնելու ամբարձիչներ. դիմկալներ բժշկական անձնակազմի համար. ոսկրաբուժական գիպսի կապեր. վիրաբուժական սավաններ. վիրաբուժական ներպատվաստիչներ արհեստական նյութերից. ջերմաճնշակներ առաջին օգնության համար. գիշերանոթների նստոցներ. սրտի դեֆիբրիլյատորներ. դիալիզորդ սարքեր. լարային ուղղորդիչներ (բժշկական). օրթոդոնտիկ սարքեր. բժշկության մեջ օգտագործվող օդաքաշ ապարատներ. հատուկ տարողություններ բժշկական թափոնների համար. վիրակապ (աջակցող կալանդ). պարկիկներ հեշտոցային ցնցուղման համար. էրոտիկ տիկնիկներ (սեքս տիկնիկներ). միկրոողորկման ապարատներ մաշկի համար բժշկական կամ թերապևտիկ նպատակների համար. ապարատներ ֆիզիկական վերականգնման համար բժշկական նպատակներով. սարքեր զարկերակի չափման համար. ստենտներ. ականջի խցաններ (լողության պաշտպանության սարքեր). ջերմաստիճանի կպչուն ցուցասարքեր բժշկական նպատակների համար. հենասայլակներ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար. տոմոգրաֆներ բժշկական նպատակներով օգտագործելու համար. կորյակային ցանը բուժելու սարքեր. սանրեր ոջիլների դեմ. քառակուսի հենարանով ձեռնափայտեր բժշկական նպատակների համար. ներդիտակ խցիկներ բժշկական նպատակների համար. սրտի աշխատանքը դիտարկող սարքեր. սեղմող (կոմպրեսիոն) հագուստ. սեքս-խաղալիքներ. ուղեղի էլեկտրախթանիչներ. ներդրվող միջոցներ դեղերը մաշկի տակ ներարկելու համար. կենսաքայքայիչ իմպլանտներ ոսկորի սևեռակման համար. բժշկական մածկաթիակներ. ասպիրատորներ քթի համար. պաշտպանիչ ատամնակալներ ատամնաբուժական նպատակների համար. դաշտանային թասակիկներ. շնչառական դիմակներ արհեստական շնչառության համար. օրթոդոնտիկ ռետինե կապեր. վերլուծիչներ մանրէների նույնականացման համար բժշկական նպատակներով. ապարատներ ԴՆԹ և ՌՆԹ հետազոտությունների համար բժշկական նպատակներով. ցողունային բջիջների վերականգնման ապարատներ բժշկական նպատակներով. մարմնի ճարպը հսկող-չափող սարքեր. մարմնի կազմությունը հսկող-չափող սարքեր. ոտքերի մատների բաժանիչներ ոսկրաբուժական նպատակների համար. հակառևմատիկ ապարանջաններ. հակառևմատիկ օղակներ. ապարանջաններ բժշկական նպատակների համար. վիրաբուժական ռոբոտներ. ծծակներ մանուկներին կերակրելու համար. ապարանջաններ սրտխառնոցի դեմ. քայլավարժանքի անվավոր սայլակներ. ջրածնային ինհալյատորներ (ներշնչակներ). մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի (ՄՌՏ) ապարատներ, բժշկական նպատակների համար. մահճակալների փչովի ներքնակներ բժշկական նպատակների համար. սառեցնող սպեղանալաթեր բժշկական նպատակների համար. սառեցնող բարձիկներ առաջին օգնության համար. ձեռքի շարժական միզամաններ. ձեռնափայտեր բժշկական նպատակների համար. ռոբոտային էքզոկմախքների կոստյում-

ներ բժշկական նպատակների համար. ակուպրեսուրային ապարանջաններ. ամրակներ ծծակների համար. խոլեստերինը չափող գործիքներ. հիվանդի հետազոտման խալաթներ. բիոմագնիսական օղակներ թերապևտիկ կամ բժշկական նպատակների համար. դեմքի թերապևտիկ դիմակներ. լնդերի մերսման ռետինե պարագաներ մանկիկների համար. հաբերի մանրատիչներ. արյան մեջ գլյուկոզան չափող գործիքներ. պնդացման լամպեր բժշկական նպատակների համար. արհեստական նյութերից պատրաստված ոսկրային լցանյութեր. ինհալատորների (ներշնչակների) խցիկներ. բժշկական զննման համար սեղաններ. նանոռոբոտներ բժշկական նպատակների համար. կինեզիոլոգիայի ժապավեններ. բժշկական սառեցնող սարքեր ջերմահարվածը բուժելու համար. թերապևտիկ հիպոթերմիայում օգտագործելու համար նախատեսված բժշկական սառեցնող սարքեր. հաբեր կտրող գործիքներ. պաշտպանիչ դիմակներ բժշկական նպատակների համար. ԼԱԴ դիմակներ թերապևտիկ նպատակների համար. թթվածնի խտանյութեր բժշկական նպատակների համար. պահող կալանդներ. լազերային սաղավարտներ մազաթափության բուժման համար. գոլորշիով տաքացվող մեկանգամյա օգտագործման դիմակներ թերապևտիկ նպատակների համար. գոլորշիով տաքացվող մեկանգամյա օգտագործման վիրակապեր թերապևտիկ նպատակների համար. հակաբեղմնավորիչ իմպլանտներ. ներարգանդայի սարքեր. շաքարախտի հսկողության սարքավորումներ. լսաչափներ. հապտիկ կոստյումներ բժշկական նպատակների համար. կրծքի կաթի թեստավորման սարքավորումներ բժշկական նպատակների համար. մազական խողովակներ բժշկական նպատակների համար. բյուրեղներ թերապևտիկ նպատակների համար. դեղապատ ստենտներ թրոմբոզի համար, դեղ ցողող ստենտներ թրոմբոզի համար. դյուրակիր ականջմաքրիչներ էնդոսկոպիայի գործառույթով. մերսման էլեկտրական ատրճանակներ. նյարդային սաղավարտներ բժշկական նպատակների համար. հիգիենիկ դիմակներ. բազմակի օգտագործման հիգիենիկ դիմակներ, որոնք պատրաստված են շղարշով. դեմքի գեղագիտական բուժման սարքավորումներ՝ ուլտրաձայնային ալիքների օգտագործմամբ. գդալներ ցնցում ունեցող հիվանդների համար. չափաբաժնով բաշխիչներ բժշկական նպատակների համար. նեբուլայզերներ բժշկական նպատակների համար. զտիչներ շնչադիմակների համար բժշկական նպատակների համար. շնչադիմակներ օդի զտման համար բժշկական նպատակների համար. շնչադիմակներ բժշկական նպատակների համար. շնչառական ապարատներ բժշկական նպատակների համար. թերապևտիկ մագնիսներ. հիվանդանոցային մահճակալներ. մերսման աթոռներ՝ ներկառուցված մերսման ապարատով. դեմքի էսթետիկ բուժման համար լուսարձակող դիոդներով (ԼԱԴ) ապարատներ. ականջի խցաններ.

դաս 11. ավտոմատ տեղակայանքներ ոռոգման համար. ջերմային կուտակիչներ. ացետիլենային այրոցներ. ացետիլենային գեներատորներ. ացետիլենային լամպեր. օդաքաշ թասակներ. լուսավորող համակարգեր թռչող ապարատների համար. խուղակային վառարաններ. ապարատներ օդի հոտազերծման համար. սարքվածքներ օդի սառեցման համար. զտիչներ օդորակման համար. օդաջեռուցիչներ. օդային չորուցիչներ. օդորակման կայանքներ. օդի զտման տեղակայանքներ. տաք օդով աշխատող ջեռուցման սարքեր. սարքավորանք տաք օդով բաղնիքների համար. շփական բռնկորդներ գազային վառիչների համար. գազային վառիչներ. լամպանոթներ. էլեկտրական լամպերի անոթներ. աղեղային լամպեր. էլեկտրական լամպեր. հիմնակմախքներ վառարանների համար. սառնապահարաններ. լապտերներ տրանսպորտային միջոցների համար. ցոլալապտերներ մեքենաների համար. սառեցնող բաքեր վառարանների համար. վաննաներ. նստելու վաննաներ. շարժական խցիկներ թուրքական բաղնիքների համար. սարքավորանք լոգարանների համար. ջեռուցիչներ վաննաների համար. սանիտարատեխնիկական տեղակայանքներ լոգարանների համար. լուսատուներ. լուսավորման լապտերներ. լամպերի կոթառներ. շիկարանային այրոցներ. այրոցներ լամպերի համար. լապտերներ հեծանիվների համար. բիդե. ջրաջեռուցիչներ, բացառությամբ մեքենայի մասերի. թրծման վառարաններ. ջրածորաններ. խցաններ ռադիատորների համար. գրպանի էլեկտրական լապ-

տերներ. ջրատաքացուցիչներ. վառարաններ հացաբուլկեղենի համար. հակացրցողիչ գլխադիրներ ծորակների համար. հարմարանքներ շամփուրները շրջելու համար. շամփուրներ. լաբորատորիայի այրոցներ. ջահավոր տեղակայանքներ նավթարդյունաբերության համար. այրոցներ. այրոցներ մանրէների ոչնչացման համար. կաթսաներ լվացքատների համար. շարժական զուգարաններ. օդափոխիչներ (օդորակում). սուրճ բովելու ապարատներ. օդաջեռուցիչներ. խողովակների և խողովակաշարերի ծորակներ. ջերմության վերականգնիչներ. հրահեստ աղյուսապատվածքներ վառարանների համար. լամպեր տրանսպորտային միջոցների շրջադարձի ցուցիչների համար. ածխային էլեկտրոդներ աղեղային լամպերի համար. ջեռուցման տեղակայանքներ. լվացման բաքեր զուգարանների համար. եռացրած ջրով աշխատող ջեռուցման տեղակայանքներ. ջեռուցման կաթսաներ. ջեռուցման կաթսաների խողովակներ. օդորակիչներ տրանսպորտային միջոցների համար. ջեռուցման սարքեր, որոնք աշխատում են պինդ, հեղուկ և գազային վառելիքով. ջեռուցման տեղակայանքներ տրանսպորտային միջոցների համար. ջեռուցման էլեկտրական սարքեր. կենտրոնական ջեռուցման ռադիատորներ. խոնավարարներ կենտրոնական ջեռուցման ռադիատորների համար. ջեռուցիչ տարրեր. ջեռուցիչներ արդուկների համար. էլեկտրական կամ ոչ էլեկտրական ջերմակներ ոտքերի համար. էլեկտրական տաքացվող ոտնամուշտակներ. կերակուրներ տաքացնելու հարմարանքներ. ընկղմվող ջեռուցիչներ. լամպի ապակիներ. լամպերի խողովակներ. ծխնելույզների ծխանցքեր. ծխանցքերի սահափականներ. չորուցիչներ մազերի համար. ջրի բաշխման տեղակայանքներ. չորացման ապարատներ. օդորակիչներ. սարքեր սոսինձը տաքացնելու համար. թորման սյուներ. խողովակներ (սանիտարատեխնիկական համակարգերի մասեր). ջրմուղի տեղակայանքներ. զուգարաններ. սառցարանային ապարատներ. էլեկտրական սպասք կերակուր պատրաստելու համար. խոհանոցային սալօջախներ. խոհանոցային սարքեր և տեղակայանքներ. լապտերներ մոտոցիկլետների համար. էլեկտրական գազապարպիչ խողովակներ լուսավորման համար. հակասառցապատիչներ տրանսպորտային միջոցների համար. ապարատներ ախտահանման համար. ծովային ջրի աղազրկման տեղակայանքներ. ապարատներ չորացման համար. լույսի ցրիչներ. ըմպելիքներ սառեցնելու ապարատներ. թորման ապարատներ. ցնցուղներ. էլեկտրական լամպերի կոթառներ. ջրի մաքրման տեղակայանքներ. ջրի զտման սարքեր. տեղակայանքներ ջրի սառեցման համար. շատրվաններ. տարողություններ ջուրը ճնշման տակ պահելու համար. ջրի մանրէազերծիչներ. ջերմափոխանակիչներ, բացի մեքենայի մասերից. լուսավորման սարքեր և տեղակայանքներ. ջահեր. հոսաջրերի մաքրման տեղակայանքներ. առաստաղի լուսամփոփներ. էլեկտրական ռադիատորներ. գազերի զտման սարքեր. սարքեր կերերը չորացնելու համար. գոլորշիարարներ. վառարաններ (ջեռուցիչ սարքեր). էլեկտրական լամպերի թելեր. զտիչներ խմելու ջրի համար. կերոններ. շարժական դարբնոցներ. վառարաններ, բացառությամբ լաբորատոր վառարանների. ձևավոր աղյուսապատվածքներ վառարանների համար. հրակալներ վառարանների համար. օջախներ. մոխրատաշտեր վառարանների համար. սառնարանային ապարատներ և մեքենաներ. սառնարանի խցիկներ. սառնարանային տարողություններ. լամպեր մազերը գանգրացնելու համար. մրգերը չորացնելու ապարատներ. գազազտիչներ (գազային սարքավորանքի մասեր). գազայրոցներ. գազի կաթսաներ. գազալցված լամպեր. շոգեարտադրիչներ, բացառությամբ մեքենաների մասերի. մանրէասպան լամպեր օդը մաքրելու համար. սարքեր և մեքենաներ սառույց պատրաստելու համար. էլեկտրական սառնախցիկներ. գնդաձև թասակներ լամպերի համար. ջեռուցման սալեր. հաց բովելու սարքեր (տոստեր). գրիլներ (խոհանոցային սարքեր). աղբայրիչներ (վառարաններ). ապարատներ օդի կամ ջրի իոնացման համար. դեկորատիվ շատրվաններ. լաբորատոր լամպեր. կաթի սառեցման տեղակայանքներ. պաստերիչներ. յուղային լամպեր. ուլտրամանուշակագույն ճառագայթման լամպեր, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. պայթանվտանգ լամպեր. անդրադարձիչներ լամպերի համար. չինական լապտերներ. լվացարաններ (սանիտարատեխնիկական սարքավորման մասեր). հեղուկների սառեցման տեղակայանքներ. լու-

մինեսցենտային խողովակներ լուսավորման համար. մագնեզիումային թելեր լուսավորման սարքերի համար. չորուցիչներ ածիկի համար. հանքափորի լամպեր. տեղակայանքներ միջուկային վառելիքի և միջուկային ռեակցիաների դանդաղարարների համար. կափույրներ պահեստարաններում մակարդակի կարգավորման համար. էլեկտրական լամպեր տոնածառերի համար. լուսավորվող համարներ շենքերի համար. թթվածնա-ջրածնային այրոցներ. ջեռուցման ռադիատորներ. յուղային այրոցներ. ցոլալապտերներ տրանսպորտային միջոցների համար. ջեռուցման թիթեղներ. լուսարձակներ. պոլիմերացված տեղակայանքներ. խոհանոցային վառարաններ (ջեռոցներ). օդի ոչ ավտոմատ կափույրներ շոգեջեռուցման տեղակայանքների համար. ապարատներ և մեքենաներ ջուրը մաքրելու համար. օդի մաքրման սարքեր և մեքենաներ. թորման աշտարակներ թորման համար. տեղակայանքներ և մեքենաներ սառեցման համար. խոհանոցային ջեռուցիչ սարքեր. անդրադարձիչներ տրանսպորտային միջոցների համար. սառնարանային սարքավորումներ և տեղակայանքներ. սարքեր և տեղակայանքներ սառեցման համար. քարշի կարգավորման ձգափականներ. կարգավորիչ պարագաներ ջրասարքերի կամ գազասարքերի և ջրմուղների կամ գազամուղների համար. պահպանիչ պարագաներ ջրասարքերի կամ գազասարքերի և ջրմուղների կամ գազամուղների համար. ծորակներ. ջրատար ծորակների միջադիրներ. շամփուր պարունակող հարմարանքներ միս տապակելու համար. սանիտարատեխնիկական սարքեր և տեղակայանքներ. չորացման ապարատներ և տեղակայանքներ. ապարատներ լվացասենյակներում ձեռքերը չորացնելու համար. գալարախողովակներ (թորման, ջեռուցման կամ սառեցման տեղակայանքների մասեր). օդափոխիչներ (օդորակման կայանքների մասեր). մանրէազերծիչներ. ծխախոտի սառեցման տեղակայանքներ. չորուցիչներ ծխախոտի համար. լուսավորման սարքեր տրանսպորտային միջոցների համար. տապակոցներ. մոխիր տեղափոխելու ավտոմատ սարքվածքներ. գոլորշու արտադրման տեղակայանքներ. օդափոխության կայանքներ և ապարատներ (օդորակում). օդափոխման (օդորակում) տեղակայանքներ և ապարատներ տրանսպորտային միջոցների համար. զուգարանակոնքեր. նստոցներ զուգարանների համար. լուսամփոփներ. լուսամփոփների կալիչներ (բռնիչներ). խառնիչ ծորակներ ջրատար խողովակների համար. կարգավորիչ և պահպանիչ պարագաներ գազամուղների համար. կարգավորիչ և պահպանիչ պարագաներ ջրմուղային սարքավորումների համար. շոգու կուտակիչներ. տեղակայանքներ և ապարատներ ջուրը փափկացնելու համար. օդաքաշ լաբորատոր թասակներ. օդի մանրէազերծիչներ. թորիչներ. սպիրտայրոցներ. հակաշլացնող հարմարանքներ տրանսպորտային միջոցների համար (լամպերի պարագաներ). տրանսպորտային միջոցների ապակիների տաքացուցիչներ. գլխադիրներ գազայրոցների համար. ջրամատակարարման համակարգերի տեղակայանքներ. միջուկային ռեակտորներ. խոհանոցային էլեկտրական ավտոկլավներ, էլեկտրական շուտեփուկներ. լապտերներ ավտոմեքենաների համար. ծծակով շշերի էլեկտրական տաքացիչներ. էլեկտրական վաֆլեկաղապարներ. պահպանիչ և կարգավորիչ պարագաներ գազասարքերի համար. էլեկտրական լուծակորզիչներ սուրճի համար. էլեկտրական սրճեփներ. փողոցային լապտերներ. շոգեկաթսաների ջերմախողովակներ. կրակարաններ (մանղալներ). էլեկտրական ճարպաջեռոցներ. սենյակային բուխարիներ. ջերմային պոմպեր. արևային ջերմային հավաքիչներ (ջեռուցում). արևի վառարաններ. սոլյարիումներ. ջրթողներ զուգարանների համար. սնուցիչներ ջեռուցիչ կաթսաների համար. սառնարաններ. հոտազերծման սարքեր, բացառությամբ անձնական օգտագործման համար նախատեսվածների. ջրառու սարքեր. յուղերի զտման սարքեր. սարքեր ծխահարման համար, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. սարքավորանք թրծող վառարանների համար (հենարաններ). գրպանի ջերմակներ. հիդրոմերսման լոգարաններ (անոթներ). քրոմատագրիչներ արդյունաբերական նպատակների համար. էլեկտրական շիկացման թելիկներ. գազապաղիչներ (մեքենաների մասեր չհանդիսացող). բարձեր էլեկտրաջեռուցմամբ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. սարքավորանք շոգեբաղնիքների համար. լողախցիկներ. լվացարանա-

կոնքեր. չոր գոլորշիով աշխատող սարքեր դեմքի խնամքի համար (սաունաներ դեմքի համար). միզամաններ՝ որպես սանիտարատեխնիկական սարքավորանք. ջերմակներ. էլեկտրական թեյամաններ. ջերմակներ անկողնու համար. էլեկտրաջեռուցմամբ ծածկոցներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. անկողինը տաքացնելու ջերմակներ. զտման սարքվածքներ ակվարիումների համար. տաքացիչներ ակվարիումների համար. լուսատուներ ակվարիումների համար. էլեկտրաջեռուցմամբ գորգեր. ատամնաբուժական վառարաններ. յոգուրտ պատրաստելու էլեկտրական սարքեր. ընդարձակման բաքեր կենտրոնական ջեռուցման համակարգերի համար. օդամաքրիչներ խոհանոցների համար. կենցաղային էլեկտրական օդափոխիչներ. սպիտակեղենի էլեկտրական չորացուցիչներ. միկրոալիքային վառարաններ (խոհանոցային սարքեր). տեղակայանքներ լողավազանների ջուրը քլորացնելու համար. ջերմապահպանիչ կափույրներ (ջեռուցման տեղակայանքների մասեր). սարքվածքներ ջրի պտտական շարժում ստեղծելու համար. սարքեր սննդամթերքը ջրազրկելու համար. ստորջրյա լուսարձակներ. ոռոգման կաթիլային ցրիչներ (ոռոգման պարագաներ). մանրէազերծված սենյակներ (սանիտարատեխնիկական սարքավորանք). կրակարաններում (մանղալներում) օգտագործվող լավայի կտորներ. գյուղատնտեսական մեքենաներ ջրելու և ոռոգելու համար. միկրոալիքային վառարաններ արդյունաբերական նպատակների համար. հաց թխելու մեքենաներ. սառեցնող ցուցափեղկեր (ցուցապահարաններ). գործվածքները գոլորշիով փափկացնող սարքեր. հացթուխներ. լուսարձակող դիոդների (ԼԱԴ) լուսավորման սարքեր. հիդրոմերսման լոգարանների ապարատներ. տաքացվող ցուցափեղկեր (ցուցապահարաններ). բազմապրոֆիլ կաթսաներ. սննդի էլեկտրական գոլորշեփներ. տորտիլա պատրաստելու էլեկտրական մամլիչներ. գրքերի ախտահանման պահարաններ. ջերմային թնդանոթներ. շոկոլադային էլեկտրական շատրվաններ. ախտահանող ապարատներ բժշկական նպատակներով. գինու էլեկտրական մառաններ. լուսային շարաններ տոնական զարդարանքի համար. էլեկտրատաքացմամբ կիսագուլպաներ. ճակատի լապտերներ. լամպեր եղունգների համար. վակուումում սնունդը պատրաստելու էլեկտրական կաթսաներ. միկրոպղպջակների գեներատորներ լոգանքի համար. ջեռուցման և հովացման սարքեր տաք և սառը ըմպելիքներ բաշխելու համար. էլեկտրական ջեռուցմամբ հագուստ. ծեծած բրնձից թխվածքաբլիթների պատրաստման էլեկտրական կենցաղային մեքենաներ. պատրույգներ հեղուկ վառելիքով վառարանների համար. եփման էլեկտրական սալեր. մոմի լապտերներ. տաք օդով տապակող ճարպաջեռոցներ. պաղպաղակ պատրաստելու մեքենաներ. հեծանիվների շրջադարձի ցուցիչների լույսեր. սառնարաններ, սառեցման ապարատներ և սառցարաններ բժշկական նպատակներով պահեստավորման համար. պնդացման լամպեր ոչ բժշկական նպատակների համար. աճեցման հիդրոպոնիկ համակարգեր. էլեկտրական ջերմամեկուսիչ անոթներ. սննդամթերքը ջրազրկելու էլեկտրական սարքեր. ՀՀԴ-սնուցումով ձեռքի տաքացուցիչներ. ՀՀԴ-սնուցումով բաժակի ջեռուցիչներ. կուսկուս պատրաստելու էլեկտրական սալիկներ. հատակի լապտեր. էլեկտրական թաժիններ. լուսային լուսարձակներ. մառախուղային մեքենաներ. հատակի ջեռուցման սարքեր և հարմարանքներ. օդի խոնավացուցիչներ. էլեկտրական մեքենաներ սոյայի կաթ պատրաստելու համար. սուրճի դատարկ պարկուճներ սուրճի էլեկտրական մեքենաների համար. էլեկտրական ինքնաեռներ. խոնավակլանիչներ. սանիտարատեխնիկական սարքավորանքի համար ջրատար խողովակներում լուծույթներ տարածող ախտահանող ապարատներ. թաղանթներ հակադարձ օսմոսային միացությունների համար. թաղանթային զտման միավորներ ջրի մաքրման սարքավորման համար. զտիչներ ջրի զտման սարքի համար. հակադարձ օսմոսային թաղանթի զտիչներ ջրի մաքրման համար. խոհանոցային լվացարանակոնքեր, որոնք ներառում ներկառուցված սեղաներեսներ. սուրճի մեքենաներ, որոնք ներառում են ջրի մաքրիչներ. մարտկոցով աշխատող փայլուն ձողիկներ. հակադարձ օսմոսային միացություններ. սառույց և պաղպաղակ պատրաստելու էլեկտրական սարքեր. խոհարարական էլեկտրական կաթսաներ. գազ արտադրող ադսորբցիոն ապարատներ. գազ արտադրող

թաղանթային ապարատներ. կենսառեակտորներ կեղտաջրերի մաքրման համար. խմորման ապարատներ արդյունաբերական նպատակների համար. պարարտանյութերով ոռոգման սարքեր. էլեկտրականությամբ տաքացվող գավաթներ. տրանսպորտային միջոցների համար վազող լույսեր. ձյուն պատրաստող մեքենաներ, ձյան հրանոթներ. գարեջրի պատրաստման էլեկտրական կենցաղային մեքենաներ. կենսառեակտորներ թափոնների վերամշակման համար. ջերմակայունացված պոլիպրոպիլենային խողովակներ ջեռուցման կայանքների համար. փայլուն ձողիկներ լուսավորության համար. Վենտուրիի գազազտիչներ. թաղանթներ ջրի զտման ապարատների համար. խելացի լամպեր լուսավորման համար. մարմինը չորացնող ապարատներ. ախտահանման նպատակով օզոնի գեներատորներ. բժշկական գործիքների մանրէազերծիչներ.

դաս 12. եղանավոր ամբարձիչներ. երկաթուղային կցիչներ. կցորդիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. օդային փոխակրիչներ. օդային տրանսպորտային միջոցներ. ջերմային օդապարիկներ. օդախցիկներ օդաճնշական դողերի համար. գործիքների և պիտույքների հավաքակազմեր դողերի օդախցիկների նորոգման համար. օդապոմպեր (տրանսպորտային միջոցների պիտույքներ). կախոցների մեղմիչներ տրանսպորտային միջոցների համար. մեղմիչ զսպանակներ տրանսպորտային միջոցների համար. «երկկենցաղ» ինքնաթիռ. սահելուց պաշտպանող հարմարանքներ տրանսպորտային միջոցների դողերի համար. հակասահքային շղթաներ. տրանսպորտային միջոցների նստոցների գլխակալներ. ջրելու մեքենաներ. կցանքների կցիչներ տրանսպորտային միջոցների համար. ավտոբուսներ. հեռընթաց ավտոբուսներ. կատերներ. բեռնատար ավտոմեքենաներ. շասսիներ ավտոմոբիլների համար. ետընթացքի ազդասարքեր տրանսպորտային միջոցների համար. ինքնաթիռներ (օդանավեր). լաստանավեր. բեռնախցիկներ տրանսպորտային միջոցների համար. դիրիժաբլներ. դողեր տրանսպորտային միջոցների անիվների համար. տրանսպորտային միջոցների դողերի փականներ. երկաթուղային շարժակազմերի անիվների կալանդների կատարներ. ոլորալիսեռներ տրանսպորտային միջոցների համար. նավիրաններ. նավերի կեռեր. ղեկային հարմարանքներ նավերի համար. հարմարանքներ նավերը զատելու համար. թեք նավարաններ նավերի համար. պտուտակային շարժասարքեր փոքր նավերի համար. թիեր. բեռնատար ավտոմոբիլների թափքեր. հանքասայլի անիվներ. հեծանիվներ. հենակներ հեծանիվների համար. երկաթուղային վագոնների սայլակներ. նավամակույկների մակույկահեծաններ. ցեխապաշտպան վահանակներ. երկանիվ սայլակներ. կախովի ճոպանուղիների խցիկներ. կեսոններ (տրանսպորտային միջոցներ). անիվներ տրանսպորտային միջոցների համար. տրանսպորտային միջոցների շարժիչների ծածկեր. տրանսպորտային միջոցների հետգցովի թափքաձածկեր. ավտոկցանքներ. քարշակներ (տրանսպորտային միջոցներ). ցամաքային տրանսպորտային միջոցների մեխանիզմների քարտեր, բացառությամբ շարժիչների. անվտանգության գոտիներ տրանսպորտային միջոցների նստոցների համար. տրանսպորտային միջոցների անվակունդեր. շղթաներ հեծանիվների համար. անվասայլակներ. բեռնանավեր (կցանավեր). մակույկներ. բեռնատար սայլակներ. սայլակներ ճկափողերի համար. ձուլասայլակներ. մեքենաներ գոլֆի համար. տրանսպորտային միջոցների շասսիներ. ղեկեր. շարժակազմեր ֆունիկուլյորների համար. երկաթուղային շարժակազմեր. ծխատար խողովակներ նավերի համար. թրթուրներ (թրթուրային ժապավեններ) տրանսպորտային միջոցների համար. տրակտորներ. վագոնիկներ. տրանսպորտային միջոցների թափարգելներ. երկաթուղային տրանսպորտային միջոցների թափարգելներ (բուֆերներ). հիդրավլիկական համակարգեր տրանսպորտային միջոցների համար. հեծանիվների ղեկեր. քնամահճակներ տրանսպորտային միջոցների համար. ողնակողեր (նավերի). հեծանիվների դողեր. հեծանիվների ատամնանիվներ. արգելակներ հեծանիվների համար. հեծանիվների ցեխապաշտպան վահանակներ. հեծանիվների անվահեցեր. ծնկավոր լծակներ հեծանիվների համար. շարժիչներ հեծանիվների համար. հեծանիվների անվակունդեր. հեծանիվների ոտնակներ. պոմպեր հեծանիվների համար. հեծանվային անվաճաղեր. հեծանիվների անիվ-

ներ. թամբեր հեծանիվների համար. մոտոցիկլետների ոտնակներ. ատամնավոր փոխանցիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. լողուն դրագներ (նավեր). երկաթուղասայլակներ. էլեկտրաշարժիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. էլեկտրական տրանսպորտային միջոցներ. կցորդիչների ագույցներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. մանկական անվտանգ նստոցներ տրանսպորտային միջոցների համար. պարաշյուտներ. դողաձածկաններ օդաճնշական դողերի համար. տրանսպորտային միջոցների հակակշիռներ անիվների հավասարակշռման համար. տիեզերական ապարատներ. նավերի կայմասարքեր (ծովային նավատորմիղ). սռնիներ տրանսպորտային միջոցների համար. սռնիների վզիկներ. հողմապակիների ապակեմաքրիչներ. պահպանական ցանցեր հեծանիվների համար. բեռնացանցեր տրանսպորտային միջոցների համար. անվակունդերի (անիվների) թասակներ. ֆուրգոններ (տրանսպորտային միջոցներ). արգելակներ տրանսպորտային միջոցների համար. անվակունդերի ամրակապեր. ավտոմոբիլ-սառնարաններ. վագոն-սառնարաններ (երկաթուղային տրանսպորտ). շարժիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. նավախելի թիեր. պատյաններ տրանսպորտային միջոցների նստոցների համար. լուսանցույցներ. հիդրոհինքնաթիռներ. սահանավ. ննջավագոններ. լոկոմոտիվներ. քարշուժային շարժիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. երկաթուղային վագոններ. ոտնատեղեր տրանսպորտային միջոցների համար. փոխանցման մեխանիզմներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. ուժային մեխանիզմներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. ռազմական տրանսպորտ. ռեակտիվ շարժիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. մոտոցիկլետներ. վազանցի կցորդիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. ջրային տրանսպորտային միջոցներ. նավեր. նավերի թիապատուտակներ. թիեր կանոեի համար. հողմապակիներ. անվադողերի բութակներ. պահպանաշերտեր անվադողերը վերականգնելու համար. օդաճնշական դողեր. կամրջանավեր. դռներ տրանսպորտային միջոցների համար. ավտոմոբիլային բեռնախցիկներ դահուկների համար. եռանիվ տրանսպորտային միջոցներ բեռների փոխադրման համար. մանկասայլակներ. պատյաններ մանկասայլակների համար. մանկասայլակների հետգցովի թափքաձածկեր. պտուտակային շարժասարքեր. տրանսպորտային միջոցների անվաճաղեր. պրկման սարքվածքներ անվաճաղերի համար. վերելակներ լեռնագնացների համար. կախոցների զսպաններ տրանսպորտային միջոցների համար. վագոն – ռեստորաններ. հետևի դիտահայելիներ. տրանսպորտային միջոցների անվահեցեր. թամբեր մոտոցիկլետների համար. մոտոցիկլետների սայլակներ. նստոցներ տրանսպորտային միջոցների համար. սպորտային ավտոմոբիլներ (ավտոմեքենաներ). ճոպանասյուն (ծովային). թիկնաթոռով վերելակներ. թիակալներ. կործվող (շրջվող) սայլակներ. թռչող ապարատներ. տրանսպորտային միջոցների ընթացային մասեր. սահնակներ (տրանսպորտային միջոցներ). տրամվայներ. սարքվածքներ և հարմարանքներ ճոպանուղիների համար. ֆունիկուլյորներ. կախովի ճոպանուղիներ. եռանիվ տրանսպորտային միջոցներ. տուրբիններ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. տրանսպորտային միջոցներ ցամաքով, օդով, ջրով կամ երկաթուղով տեղաշարժման համար. ինքնասոսնձվող ռետինե կարկատաններ դողերի օդախցիկները նորոգելու համար. տրանսպորտային միջոցների ներսի պաստառներ. մոպեդներ. պատուհաններ տրանսպորտային միջոցների համար. մարդատար ավտոմոբիլներ. հակահափշտակիչ հարմարանքներ տրանսպորտային միջոցների համար. շրջվող սարքեր (վագոնների, վագոնետների մասեր). զբոսանավեր. օդագնացության մեջ օգտագործվող ապարատներ, մեքենաներ և հարմարանքներ. հակաշլացման հարմարանքներ տրանսպորտային միջոցների համար. ավտոմոբիլների դողեր. ավտոմոբիլների թափքեր. ավտոմոբիլների թափարգելներ. մեղմիչներ ավտոմոբիլների համար. հակահափշտակիչ ազդասարքեր տրանսպորտային միջոցների համար. ազդանշանային շչակներ տրանսպորտային միջոցների համար. ավտոմոբիլ–բետոնախառնիչներ. հեծանիվների անվախուցեր. արգելակային լրակազմեր տրանսպորտային միջոցների համար. արգելա-

կային կալուններ տրանսպորտային միջոցների համար. ցամաքային տրանսպորտային միջոցների փոխանցատուփեր. ձեռնասայլակներ. սայլեր. հեծանիվների շրջանակներ. թափքեր տրանսպորտային միջոցների համար. ինքնանետվող բազկաթոռներ թռչող ապարատների համար. պատյաններ տրանսպորտային միջոցների համար. շարժահաղորդ շղթաներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. փոխհաղորդիչ շղթաներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. պտտման մոմենտի կերպափոխիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. ազդանշանային լծակներ տրանսպորտային միջոցների համար. ծխատար խողովակներ լոկոմոտիվների համար. ղեկանիվներ տրանսպորտային միջոցների համար. թամբերի պատյաններ հեծանիվների համար. սանիտարական տրանսպորտային միջոցներ. անխուց դողեր հեծանիվների համար. ռեդուկտորներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. արգելակային սեգմենտներ տրանսպորտային միջոցների համար. օդասահնակ. տրանսպորտային միջոցների վառելիքի բաքերի կափարիչներ. շարժաձողեր ցամաքային տրանսպորտային միջոցների համար (բացառությամբ մոտորների և շարժիչների մաս կազմողների). հետնամասի բեռնամբարձիչներ (տրանսպորտային միջոցների մասեր). անվտանգության կապովի գոտիներ տրանսպորտային միջոցների նստելատեղերի համար. արևապաշտպան հարմարանքներ ավտոմոբիլների համար. շարժահաղորդման տուփի լիսեռներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. անվտանգության բարձիկներ (ավտոմոբիլների անվտանգության միջոցներ). հեծանիվների զամբյուղներ. ավտոտներ. սայլակների անվակներ (տրանսպորտային միջոցների). սայլակներ մաքրման համար. նավերի բախամեղմիչներ. ձեռնասահնակներ (ֆիննական սահնակներ). հեծանիվների կողովներ. սայլակներ մթերքների համար. ձնագնաց մեքենաներ. հեռակառավարվող տրանսպորտային միջոցներ, բացառությամբ խաղալիքների. ինքնագլորներ (տրանսպորտային միջոցներ). նավի կայմեր. պատյաններ տրանսպորտային միջոցների ղեկերի համար. սփոյլերներ տրանսպորտային միջոցների համար. ցոլալապտերների մաքրիչներ. արգելակային կոճղակներ ավտոմոբիլների համար. պահեստային անիվների պատյաններ. շրջովի թափքով բեռնատար վագոնիկներ. սիգարետի վառիչներ ավտոմոբիլների համար. արգելակային սկավառակներ տրանսպորտային միջոցների համար. հեծանիվների խուրջիններ. հեծանիվների զանգեր. զրահապատված տրանսպորտային միջոցներ. շարժիչների հենարաններ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. ռազմական նշանակության անօդաչու թռչող սարքեր. կանոե. քաղաքացիական նշանակության անօդաչու թռչող սարքեր. հետևի կողային դիտահայելիներ տրանսպորտային միջոցների համար. մոծակապաշտպան ցանցեր մանկասայլակների համար. տրանսպորտային միջոցների կառավարման բռնակներ. անվարորդ ավտոմեքենաներ (ինքնավար ավտոմեքենաներ). մոտոռոլլեր. սկուտերներ սահմանափակ հնարավորություններով անձանց համար. ավտոմոբիլների մոխրամաններ. շղթաներ մոտոցիկլետների համար. մոտոցիկլետների շրջանակներ. մոտոցիկլետների ղեկեր. շարժիչներ մոտոցիկլետների համար. մոտոցիկլետների կողովներ. պինդ դողեր տրանսպորտային միջոցների անիվների համար. նորածինների սայլակներ. մանկասայլակներին հարմարեցված ոտնամուշտակներ. մանկական զբոսասայլակներին հարմարեցված ոտնամուշտակներ. անվադողերի ներդրվող օդախցիկներ. զբոսասայլակներին հարմարեցված պայուսակներ. հեռակառավարվող տրանսպորտային միջոցներ ստորջրյա զննումների համար. ինքնավար ստորջրյա տրանսպորտային միջոցներ ծովի հատակի զննումների համար. սիլֆոններ միակցված ավտոբուսների համար. էլեկտրական հեծանիվներ. թամբերի պատյաններ մոտոցիկլետների համար. մրցարշավային ավտոմեքենաներ. ռոբոտացված ավտոմեքենաներ. լուսանկարչական անօդաչու թռչող սարքեր. ձկնորսական սայլակներ. անիվներով վանդակավոր սայլակներ. տրանսպորտային միջոցների անիվների պնդօղակներ. սեղմակներ նախատեսված ավտոմեքենայի պահեստամասերը ավտոմեքենայի թափքին ամրացնելու համար. փրկարարական սահնակներ. էվակուատորներ. աղբատար ավտոմեքենաներ. կցանքներ հեծանիվներ փոխադրելու համար. հեծանիվի կցանքներ. սայլակներ

ընտանի կենդանիների համար. բեռնատարներ ներկառուցված կռունկով. առաքման դրոններ. տեսախցիկներով հեռակառավարվող ուղղաթիռներ. գիրոկոպտերներ. ուղղաթիռներ. ինքնակառավարիչ սկուտերներ. ինքնահավասարակշռվող տախտակներ. ինքնահավասարակշռվող էլեկտրական ունիցիկլեր. տրանսպորտային միջոցների ծածկերի ամրակներ. դողեր ձյունամաքրիչների համար. ջրասուզակի զանգեր. բաժակակալներ տրանսպորտային միջոցների համար. սայլակներ. ձիասայլեր. «երկկենցաղ» տրանսպորտային միջոցներ. ամենագնաց տրանսպորտային միջոցներ. ջրածնային վառելիքով աշխատող ավտոմեքենաներ. ջրային սկուտերներ (անձնական ջրային նավեր). տրանսպորտային միջոցների համար հատուկ հարմարեցված հսկիչ աշտարակներ. պուլկաներ փոխադրման համար. փրկարար նավակներ. ձյան մեքենաներ. տրանսպորտային միջոցների վահանակի ծածկոցներ. ինքնակառավարվող ռոբոտներ առաքման համար. օդաճնշական կամ հիդրավլիկական գծային շարժաբերներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. դարպասային բեռնիչ. տրանսպորտային միջոցներ ճահճուտների համար. շարժիչով սքեյթբորդներ. առանցքակալներ (տրանսպորտային միջոցների մասեր). վառելիքային բաքեր տրանսպորտային միջոցների համար. ցամաքային ինքնավար տրանսպորտային միջոցներ. ռազմանավեր. ավիակիրներ.

դաս 13. ացետիլնիտրաթաղանթանյութ. հրետասայլեր (րետանիհ). պայթուցիկ փամփուշտներ. պայթուցիկ նյութեր ամոնիումի նիտրատի հիմքի վրա. ճայթիչներ (դետոնատոր). ինքնագնաց զենքեր. արցունքաբեր գազով զենքեր. հրազեն. հրազենի փողանցքերի մաքրման խոզանակներ. հրավառելիք. հրետանային զենքեր (հրանոթ). բալիստիկ արկեր. հարմարանքներ փամփշտակալները լցավորելու համար. բենգալյան կրակներ. բռնկիչ մոմեր. փամփուշտի պարկուճներ. թնդանոթներ. զենքի փողեր. կարաբիններ. փամփուշտներ. հարմարանքներ փամփուշտներով լիցքավորելու համար. փամփշտակալներ. որսորդական հրազեն. ռազմամթերք. հրազենի հրահաններ. վառոդամաններ. հրաբամբակ. հրազենի հրանոթափողերի հետնամասեր. դինամիտ. զենքի պատյաններ. պայթուցիկ նյութեր. ազդանշանային հրթիռներ. հրացաններ (զենք). հրացանի ագուստներ. նշանառության հայելիներ հրազենի համար. հրազենի ձգանների պաշտպանիչ բռնակներ. որսորդական կոտորուք. ռազմամթերք հրազենի համար. հրթիռանետներ. ականների պայթուցիչներ. ականներ (զինամթերք). գնդացիրներ. ականանետներ (հրազեն). հրետանային արկեր. ատրճանակներ (զենք). սև վառոդ. վառոդ. արկեր(զենք). ինքնաբոցավառվող նյութեր. հրատեխնիկական միջոցներ. ատրճանակներ. ծանր հրանոթների դարձյակներ. հրետանային հենարաններ. նշանոցներ հրազենի համար, բացառությամբ օպտիկականի. օդաճնշական ատրճանակներ (զենք). բռնկման պատրույգներ հրազենի համար. պայթուցիչներ. բռնկման քուղեր հրազենի համար. զենքերի սրակալներ. մառախուղի ժամանակ օգտագործվող պայթունային ազդանշանիչներ. նշանոցներ հրազենի համար (բացառությամբ օպտիկականի). հրապատիճ–ճայթիչներ, բացառությամբ խաղալիքների. ռեակտիվ արկեր (արկեր). որսատեգային հրացաններ. խլարարներ զենքերի համար. տանկեր. վառոդապատիճներ. հեղուկացիրներ անհատական պաշտպանության համար. զինամթերքի համար նախատեսված գոտիներ. ավտոմատ զենքի փամփուշտի ժապավեններ. տորպեդներ. ձեռքի զենք (հրազեն). ձեռքի նռնակներ. ազդանշանային ատրճանակներ. փրկարարական, պայթուցիկ կամ հրատեխնիկական ազդանշաններ. մեկնարկային ատրճանակներ. որսատեգեր (հարպուններ) որսատեգով հրացանների համար.

դաս 14. ագատներ. ժամացույցների սլաքներ (բացառությամբ ձեռքի ժամացույցների). ազնիվ մետաղների ձուլակտորներ. թանկարժեք իրեր սաթից. ուլունքներ մամլած սաթից. համայիլներ (թանկարժեք իրեր). արծաթյա մետաղաթել. արծաթյա թելեր (թանկարժեք իրեր). ժամացույցներ (բացառությամբ ձեռքի). ճոճանակներ (ժամագործություն). թմբուկներ (ժամացույցների արտադրություն). ապարանջաններ (թանկարժեք իրեր). ժամացույց–ապարանջաններ. ժամացույցների ապարանջաններ. կախազարդեր ոսկերչական իրերի համար. կրծքազարդեր (թանկարժեք իրեր). թվահարթակներ (ժամագործություն). արևի ժամացույցներ. ժամացույցների մեխանիզմներ. շղթաներ

(թանկարժեք իրեր). ժամացույցների շղթաներ. ձեռքի ժամագիրներ (ժամացույցներ). ժամանակաչափներ. ժամանակադիտակներ. ժամանակաչափ սարքեր. վզնոցներ (թանկարժեք իրեր). էլեկտրական ժամացույցներ. փողկապների սեղմիչներ. մետաղադրամներ. ալմաստներ. թելեր ազնիվ մետաղներից (թանկարժեք իրեր). ատոմային ժամացույցներ. էտալոնային ժամացույցներ (ազդանշանների տվիչ գեներատոր). ժամացույցների իրաններ. իրիդիում. թանկարժեք իրեր փղոսկրից. զարդարանքներ սև սաթից. չմշակված կամ մասնակի մշակված սև սաթ. պղնձե ժետոններ (մետաղանիշներ). ոսկերչական իրեր. մեդալիոններ (թանկարժեք իրեր). մեդալներ. չմշակված կամ մասնակի մշակված ազնիվ մետաղներ. ձեռքի ժամացույցներ. ձեռքի ժամացույցների զսպանակներ. ձեռքի ժամացույցների ապակիներ. ժամացույցների ընթացային մեխանիզմներ. ձիթակն (թանկարժեք քար), պերիդոտ. չմշակված կամ դրոշմահատված ոսկի. ոսկյա թելեր (թանկարժեք իրեր). օսմիում. պալադիում. դեկորատիվ գնդասեղներ. մարգարիտ (թանկարժեք իրեր). կիսաթանկարժեք քարեր. թանկարժեք քարեր. պլատին (մետաղ). զարթուցիչներ. ռոդիում. ռութենիում. շպինելներ (թանկարժեք քարեր). արձաններ ազնիվ մետաղներից. ստրաս (արհեստական՝ կեղծ ադամանդ). ազնիվ մետաղների համահալվածքներ. խարիսխներ (ժամացույցների արտադրություն). մատանիներ (թանկարժեք իրեր). գեղարվեստական իրեր ազնիվ մետաղներից. տուփեր ազնիվ մետաղներից. գլխարկների ոսկյա զարդարանքներ. ականջօղեր. կոշիկների ոսկյա զարդարանքներ. թևքաճարմանդներ. կիսանդրիներ ազնիվ մետաղներից. գրպանի կամ ձեռքի ժամացույցների իրաններ. նվերի պատյաններ ժամացույցների համար. արձանիկներ, պատկերներ ազնիվ մետաղներից. գնդասեղներ (թանկարժեք իրեր). փողկապների գնդասեղներ. կրծքանշաններ ազնիվ մետաղներից. օղակներ բանալիների համար (անջատովի օղակներ կախազարդերի կամ դեկորատիվ զարդերի համար). անմշակ կամ դրվագված արծաթեղեն. շարժականգով վայրկյանաչափներ. կլուազոնե տեխնոլոգիայով պատրաստված իրեր. զարդատուփեր. ուլունքներ թանկարժեք և ոչ թանկարժեք իրեր պատրաստելու համար. օղլակներ թանկարժեք իրերի համար. նախապատրաստվածք (գրունտովկա) թանկարժեք իրերի համար. գլանիկներ թանկարժեք իրերի համար. կաբոշոններ. անջատովի օղակներ թանկարժեք մետաղներից բանալիների համար. նվերների տուփեր թանկարժեք իրերի համար. ձեռքի ժամացույցների սլաքներ. միսբահա (աղոթելու տերողորմյա). ասեղնագործած ապարանջաններ մանածագործվածքից (թանկարժեք իրեր). հուռութներ բանալիների օղակների համար. համրիչներ (տերողորմյա), խաչելություններ թանկարժեք մետաղներից, բացառությամբ ոսկերչական իրերի. որպես զարդեր օգտագործվող խաչելություններ. հանովի օղակներ բանալիների համար. գլխարկների թանկարժեք գնդասեղներ. թանկարժեք մետաղներից պատրաստված հուշագավաթներ՝ արձանիկի տեսքով. թանկարժեք մետաղներից պատրաստված մրցանակային գավաթներ. թանկարժեք մետաղներից կարովի պիտակներ հագուստի համար. բանալիների քուղեր.

դաս 15. ակորդեոններ. բանալիներ (մուրճեր) լարային գործիքները լարելու համար. լեզվակավոր փողային գործիքներ. երաժշտական գործիքների աղեղներ. երաժշտական գործիքների աղեղների դրոցներ. երաժշտական գործիքների աղեղների փայտիկներ. ձիու մազ երաժշտական գործիքների աղեղների համար. դաշնամուրներ. չափ տալու ձողիկներ (խմբավարի). թմբուկի փայտիկներ. բանդոնիոններ. երգեհոնիկներ. բասեր (ստեղներ, լարեր) (ցածր ռեգիստրի երաժշտական գործիքներ). հարմոններ. աղելարեր երաժշտական գործիքների համար. բուկցիններ (զինվորական փողեր). կարիլիոններ (երաժշտական գործիքներ). կաստանիետներ (չխչխկաններ). բունչուկներ (երաժշտական գործիքներ). կիսագնդաձև թմբուկների դրոցներ. երաժշտական գործիքների ականջներ. ցիտրաներ (կիթառներ). կլարնետներ. երաժշտական գործիքների ստեղնաշարեր. երաժշտական գործիքներ. կոնցերտինո. կոնտրաբասներ. երաժշտական գործիքների նվագալարեր. լարային գործիքներ. եղջերափողեր (երաժշտական գործիքներ). կոռնետներ (երաժշտական գործիքներ). ծնծղաներ (երաժշտական գործիքներ). կամերտոններ. ծայրոցներ երաժշտական գործիքների համար. երաժշտական գործիքների պատյան-

ներ. ֆլեյտաներ. կոչնազանգեր. վարգաններ (երաժշտական գործիքներ). կիթառներ. ֆիսհարմոնիաներ. տավիղներ. տավիղների նվագալարեր. հոբոյներ. էլեկտրոնային երաժշտական գործիքներ. մեխանիկական դաշնամուրների ձայնն ուժգնացնող կարգավորիչներ. քնարներ. մեդիատորներ (կնտնտոցներ) լարային գործիքների համար. մանդոլիններ. ջութակների դնչափոկեր. պարկապզուկներ. երաժշտական արկղիկներ. նոտաները շրջելու հարմարանքներ. երաժշտական գործիքների կամրջակներ. եռանկյուններ (երաժշտական գործիքներ). օկարինաներ. երգեհոններ. երգեհոնների օդատար խողովակներ. կաշի թմբուկների համար. երաժշտական գործիքների ոտնակներ. դաշնամուրների ստեղնաշարեր. դաշնամուրների նվագալարեր. դաշնամուրի ստեղներ. փուքսեր երաժշտական գործիքների համար. երաժշտական գործիքների մեղմոցներ. թմբուկներ (երաժշտական գործիքներ). դափեր (դահիրաներ). տամտամներ. կիսագնդաձև թմբուկներ (գոսեր) (երաժշտական գործիքներ). տրոմբոններ (փողային երաժշտական գործիքներ). շեփորներ. փողեր. երաժշտական գործիքների կափույրներ. վիոլաներ. ջութակներ. քսիլոֆոններ. երաժշտական գործիքների ստեղներ. մեղեդիների ձայնագրման ժապավեններ մեխանիկական երաժշտական գործիքների համար. մեղեդիների ձայնագրման ծակոտված ժապավեններ մեխանիկական երաժշտական գործիքների համար. նոտակալներ. հաքիններ (չինական ջութակներ). ֆլեյտաներ հնդեղեգից (բամբուկից). պիպաներ (չինական կիթառներ). շենգեր (չինական փողային երաժշտական գործիքներ). սուոնաներ (չինական փող). զանգակներ (երաժշտական գործիքներ). երաժշտության սինթեզարարներ (համադրիչներ). երաժշտական գործիքների դրոցներ. սաքսոֆոններ. բալալայկա (երաժշտական լարային գործիքներ). բանջո. մելոդիկաներ. բևեկնախեժ երաժշտական լարային գործիքների համար. ռոբոտացված հարվածային գործիքներ (երաժշտական գործիքներ). մուրճիկներ երաժշտական գործիքների համար. փոկեր երաժշտական գործիքների համար. երգող գավաթներ. թմբուկային մեքենաներ. երաժշտական գործիքներ երեխաների համար.

դաս 16. պողպատե տառամարմիններ. պողպատե գրչածայրեր. կպչուն ժապավենի բաշխիչ հարմարանքներ (գրասենյակային պիտույքներ). հասցեներով դրոշմակնիքներ. հասցեատիպիչ մեքենաներ. թուղթ. ազդագրեր. ազդագրերի թղթե կամ ստվարաթղթե վահանակներ. գրասենյակային մակնշման մեքենաներ. գրասենյակային ամրակներ. սեղմիչներ գրիչների համար. հարմարանքներ ճարմանդներով ամրացնելու համար (գրասենյակային պիտույքներ). ալբոմներ. նկարներ. էստամպներ (փորագրանկարներ). սիգարների օղակներ (սիգարների ժապավեններ). մատիտներ սրելու էլեկտրական կամ ոչ էլեկտրական մեքենաներ. հենակալներ գրքերի համար. հենաձողիկներ նկարիչների համար. ջրաներկեր. ճարտարապետական մանրակերտներ. թղթապանակ արագակարներ (գրասենյակային). քարետախտակներ գրելու համար. գրիֆելներ. նրբաթիթեղ. ծեփելու համար կավ. հաշվողական աղյուսակներ. փորագրանկարներ. արվեստի վիմագրական ստեղծագործություններ. նկարներ շրջանակված կամ չշրջանակված. մատիտներ. լրագրեր. պարբերական մամուլ. ատլասներ (քարտեզագրքեր). օղակներով թղթապանակներ. ռետինե ժապավեններ (գրասենյակային պիտույքներ). թղթե տակդիրներ գարեջրի գավաթների համար. տոմսեր. կենսաբանական կտրվածքներ մանրադիտակով ուսումնասիրելու համար (ուսուցողական նյութեր). տպարանային կլիշեներ. բլոկնոտներ նկարչության, գծագրության համար. բլոկնոտներ (գրասենյակային պիտույքներ). ներկանյութով ժապավենների կոճեր. ապարանջաններ գրենական պիտույքները պահելու համար. բրոշյուրներ. ասեղնագործության նմուշներ (սխեմաներ). գրասենյակային կոճգամներ. խոնավարարներ (գրասենյակային պիտույքներ). նկարիչների վրձիններ. բյուվարներ (սեղանի թղթապանակներ). դրոշմակներ (կնիքներ). զմուռսի կնիքներ. թանաքի բարձիկներ. զմուռս. գրասենյակային հարմարանքներ կնքելու համար. գրասենյակային նյութեր կնքելու համար. տետրեր. սկուտեղներ դրամի տեսակավորման և հաշվարկի համար. կալկա (մոմաթուղթ). թղթե կալկա (մոմաթուղթ). կալկա (մոմաթուղթ) գործվածքի հիմքի վրա. գրասենյակային մատնակալներ. տպատառեր. պատճենահան թուղթ. թուղթ

գրանցող սարքերի համար. նոթատետրեր. քառանկյուն գծագրական քանոններ. քարտեր. ուսուցողական նյութեր (բացառությամբ սարքերի). կատալոգային քարտեր (գրասենյակային պիտույքներ). թերթերով թղթեր (գրասենյակային պիտույքներ). ստվարաթուղթ. ստվարաթղթե տուփեր բոլորագլխարկների համար. ծակոտված քարտեր ժակքարդյան մանածագործական հաստոցների համար. ստվարաթղթե դիտափողակներ. կատալոգներ. սեղմիչներ կատալոգային քարտերի համար. երգարաններ. տպագրական շարվածքի սեղաններ. թղթապանակներ փաստաթղթերի համար. նկարակալներ. տպարանային թվային տառամարմիններ. տուշ. գունավիմագրիչներ. մոմ մոդելավորման համար, բացառությամբ ատամնաբուժության մեջ օգտագործվողի. քարտարաններ (գրասենյակային պիտույքներ). գրասենյակային ծակատիչներ. զուգարանի թուղթ. գրքեր. գծագրական կարկիններ. տպարանային տառամարմիններ (թվային և տառային). շարվածքային դազգահներ. արկղիկ պանակներ նամակագրության համար. թղթե տոպրակներ. ուղղիչ հեղուկներ (գրասենյակային ապրանքներ). թանաք ուղղումներ կատարելու համար (հելիոգրաֆիա). մատիտների համար գրիֆելներ. հյուսվածքաբանական կտրվածքներ (դիտողական պիտույքներ). գծագրական կորաքանոններ. կազմեր (գրասենյակային պիտույքներ). գրելու կավիճ. կավիճ վիմագրության համար. կավիճ դերձակների համար. կավիճի բռնիչներ. մատիտների բռնիչներ. ավտոմատ մատիտներ. թղթե տարողություններ սերուցքի համար. գրասենյակային ճարմանդներ. գրամեքենաների գլանիկներ. փոխադրանկարներ. գծանկարչական տպագիր նյութեր. մարմարի նմանակմամբ կազմարարական կափարիչների հարդարման (ներկման) գործիքներ. գծագրական տախտակներ. գծագրական պիտույքներ. գծագրական գործիքներ. դիագրամներ (տրամագրեր). ծրարներ (գրասենյակային ապրանքներ). կրկնակիչներ. օֆորտներ. փաթեթավորման թուղթ. գրչածայրեր. գրամեքենաներ (էլեկտրական կամ ոչ էլեկտրական). գրչատուփեր. ոսկե գրչածայրեր. ջնջելու միջոցներ. գրենական պիտույքներ. խորհրդանշաններ (թղթե կնիքներ). ջնջելու շաբլոններ. ռետիններ ջնջելու համար. թուղթ էլեկտրատագրիչների համար. ծակոտիչներ (գրասենյակային պիտույքներ). թանաք. ներկանյութով ժապավեններ. թանաքամաններ. գրասենյակային հարմարանքներ ծրարները կնքելու համար. լուսանկարներ. գրչամաքրիչներ. կնիքներ (գրասենյակային պարագաներ). գործվածք կազմարարական աշխատանքների համար. գծագրագործիքատուփեր. ռեգիստրներ (գրքեր). գրանցամատյաններ. արձանիկներ, պատկերներ պապիեմաշեից. զտաթուղթ. թղթե զտող նյութեր. բլանկներ (տպագրված). գրասենյակային պարագաներ, բացառությամբ կահույքի. ածխային մատիտներ. կորաքանոններ (գրասենյակային ապրանքներ). շարվածքատախտակներ (պոլիգրաֆիա). գալվանաստերեոտիպեր. տպագիր աշխարհագրական քարտեզներ. գլոբուսներ. ջրաներկ բացելու բաժակապնակներ նկարիչների համար. գրաֆիկական վերարտադրություններ. գրաֆիկական (գծանկարչական) պատկերներ. գրասենյակային քերակներ (տեքստում ուղղումներ անելու պիտույքներ). փորագրման տախտակներ. հեկտոգրաֆներ. տպագիր կարգացուցակներ. խոնավարարներ մակերևույթների համար (գրասենյակային պիտույքներ). փոստային բացիկներ. տպագիր արտադրանք. պիտակները ձեռքով սոսնձելու հարմարանքներ. ոչ մանածագործական օֆսեթային պաստառ. տպագրական դյուրակիր շարվածքներ (գրասենյակային պիտույքներ). տպագրական հրատարակություններ. դասագրքեր (ձեռնարկ). փոստային թուղթ. ճնշաձծաններ. չափանշման ասեղներ գծագրության համար. գծագրական գրչաձայրեր. սեղանի թղթե սպիտակեղեն. վիմատիպ նկարներ. վիմագրական քարեր. բուկլետներ. փայլուն թուղթ. պապիեմաշե. անդորրագրերի գրքույկներ (գրասենյակային ապրանքներ). կավիճ չափանշման համար. պլաստիկական զանգված ծեփելու համար. ծեփանյութեր. ծեփելու մածուկներ. թղթե թաշկինակներ. գործված պաստառ բազմացման ապարատներում ներկով պատելու համար. սեղանի թղթե սփռոցներ. գրատախտակներ. թղթի ամրակներ. համարադրոշմիչներ. յուղանկարատիպեր. կպչուն շերտեր կազմերը ամրացնելու համար (կազմարարական գործ). սոսնձաթղթիկներ կնքելու համար. ներկապնակներ նկարիչների համար. պան-

տոգրաֆներ (գծագրական գործիքներ). թղթագրենական ապրանքներ. մագաղաթաթուղթ. պաստելներ (գունամատիտներ). ձևվածքներ կարի համար. տրաֆարետների պատյաններ. ներկարարական գլանիկներ. կտավներ նկարների համար. ներկատուփեր (դպրոցական պիտույքներ). պլաստմասսայե թաղանթներ փաթեթավորման համար. հարմարանքներ լուսանկարներ սոսնձելու համար. հենակալներ լուսանկարների համար. լուսափորագրանկարներ. գծագրեր (կապտաթուղթ). ծալքագծման գործիքներ (գրասենյակային պիտույքներ). ինքնահոս գրիչներ. տրաֆարետներ նկարելու համար. շաբլոններ. դիմանկարներ. թղթե կաշպոներ (դեկորատիվ ծաղկամաններ). գլանատիպներ. քարտեր կամ թղթյա ժապավեններ հաշվիչ մեքենաների ծրագրերը գրանցելու համար. ծանուցատետրեր. թուղթ ռենտգենյան նկարների համար. գծագրական քանոններ. տպագրական ռեգլետներ. կազմարարական նյութեր. գործված պաստառ կազմարարական աշխատանքների համար. թելեր կազմարարական աշխատանքների համար. գործված պաստառ փաստաթղթերը վերարտադրող մեքենաներում ներկով պատելու համար. գրչածայրեր (գրասենյակային պարագաներ). ամսագրեր (պարբերական). թղթե ժապավեններ, բացառությամբ գալանտերեայի կամ մազերի զարդերի. գրամեքենաների ժապավեններ. թղթե կամ պլաստմասսայե տոպրակներ (ծրարներ, կապոցներ) փաթեթավորելու համար. բարձիկներ դրոշմակնիքների համար. դպրոցական պիտույքներ (գրասենյակային.էջանիշներ գրքերի համար. շնորհավորական բացիկներ. ստեատիտ (դերձակի կավիճ). գնդիկավոր գրիչների գնդիկներ. սեղանի թղթե տակդիրներ. տակդիր-գորգիկներ աշխատասեղանի համար. գրամեքենաների ստեղներ. կնիքների, դրոշմակների կալիչներ. կնիքների, դրոշմակների տուփեր. փոստային նամականիշներ. տակդիրներ կնիքների, դրոշմակնիքների, դրոշմակների համար. թափանցիկ թաղանթներ (գրասենյակային ապրանքներ). հարմարանքներ գլխազարդեր պատրաստելու համար. սոսնձանյութ (սոսինձ) գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. կպչուն նյութեր (սոսինձներ) գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. կպչուն ժապավեններ գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. հասցեներով թիթեղիկներ հասցեատիպիչ մեքենաների համար. ալմանախներ. օրացույցներ. օսլայի շրեշ (սոսնձող նյութ) գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. նկարելու վրձիններ. ինքնասոսնձվող ժապավեններ գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. գրասենյակային ռետիններ. մանկական թղթե կրծկալներ. ստվարաթուղթ փայտանյութից (գրասենյակային պիտույքներ). թուղթ փայտազանգվածից. թղթե կամ ստվարաթղթե տուփեր. դրոցներ գրիչների և մատիտների համար. թղթե կամ ստվարաթղթե փաթաթվածքներ շշերի համար. գրաֆինների թղթե տակդիրներ. ծանուցագրեր (գրասենյակային). պղպջակավոր պլաստմասսայե թերթեր փաթեթավորման կամ կշռաբաշխման համար. թղթե դրոշներ. թղթի մանրատիչներ գրասենյակային նպատակների համար. վերականգնված թաղանթանյութից թերթեր փաթեթավորման համար. գրասեղանի պահարաններ գրասենյակային պիտույքների համար (գրասենյակային պարագաներ). սոսինձներ գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. թուղթ կտրելու դանակներ (նամակ բացելու). թղթե կամ պլաստմասսայե տոպրակներ աղբի համար. մատիտ սրելու հարմարանքներ (էլեկտրական կամ ոչ էլեկտրական). թղթե անձեռոցիկներ գրիմը հեռացնելու համար. սեղանի թղթե անձեռոցիկներ. թղթե անձեռոցիկներ սեղանի սպասքի տակ դնելու համար. գծագրական անկյունաքանոններ. ռեյսշինաներ (գծագրական T – ածև քանոններ). գրչակոթեր. գրենական պիտույքների հավաքակազմեր (գրասենյակային պիտույքներ). թանաքային պարագաներ. գրասարքեր. ձեռագրերի նմուշներ. շշերի փաթեթվածք թղթից կամ ստվարաթղթից. ցուցատախտակներ թղթից կամ ստվարաթղթից հայտարարությունների համար. թղթե սրբիչներ ձեռքերի համար. թղթե երեսսրբիչներ. թղթից կամ ստվարաթղթից պիտակներ. փորագրական ասեղներ օֆորտների համար. վիսկոզից թերթեր փաթեթավորման համար. բուսախեժ (սոսինձներ) գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. կպչուն պաստառ գրասենյակային նպատակների համար. ձկան սոսինձ. թղթե զտիչներ սուրճի համար. ձգուն (էլաստիկ) պլաստիկ

թաղանթներ դարսակման համար. թղթե կամ ստվարաթղթե ցուցանակներ. ինքնասոսնձվող պիտակներ (գրասենյակային). կազմարարական մեքենաներ և հարմարանքներ (գրասենյակային սարքավորանք). կոմիքսների գրքույկներ. գրասենյակային թուղթ. վճարագրերի գրքույկների բռնիչներ. թանաքի ձողիկներ. թանաքաքարեր (թանաքապահոց). երաժշտական բացիկներ. տեղեկագրեր. փաթեթավորման նյութեր պատրաստված օսլայից. մոմած թղթեր. անձնագրերի կազմեր. գրելու վրձիններ. գրելու պիտույքներ. թուղթ պահարանների արկղերի համար (բուրավետացված կամ ոչ). վարկային քարտերի ոչ էլեկտրական տպիչներ. փաստաթղթերի մակաշերտման ապարատներ (գրասենյակային). թուղթ նկարչության և գեղագրության համար. ջնջոցներ գրատախտակի համար. գծագրոցներ սեղմիչներով. ցուցափայտեր, ոչ էլեկտրոնային. թղթե ժապավեններ, բացառությամբ արդուզարդեղենի կամ մազերի զարդերի. կավե կաղապարներ մոդելավորման համար (նյութեր նկարիչների համար). սեղմիչներ թղթադրամների համար. հավաքաքարտեր, բացառությամբ խաղաքարտերի. թղթե կամ պլաստիկից ներծծող թերթիկներ սննդամթերքը փաթեթավորելու համար. խոնավությունը կարգավորող թղթե կամ պլաստիկից թերթիկներ սննդամթերքը փաթեթավորելու համար. սխալն ուղղելու ժապավեններ (գրասենյակային ապրանքներ). ներկերի արկղեր. գծանշիչ գրիչներ (գրասենյակային). թռուցիկներ (գովազդային թերթիկներ). բռնիչներ փաստաթղթերի համար (գրասենյակային պարագաներ). էջերը պահող բռնիչներ. մոդելավորելու համար պոլիմերային կավ. մաքրելու բարձիկներ. թղթե կամ ստվարաթղթե փաթեթավորման (միջադրման, խծուծման) նյութեր. թղթե կամ ստվարաթղթե խծուծման նյութեր. բանկատոմսեր. ցողվող կավիճ. տպված կտրոններ. բրնձաթուղթ. պլաստմասսայե տոպրակներ ընտանի կենդանիների թափոնները հեռացնելու համար. ճապոնական թուղթ (Վասի). սեղանի թղթե ուղելաթեր. տպագրված նոտաներ. թղթե բաններներ. տոնական գունազարդ թղթե դրոշակներ. մուլտիպլիկացիոն ցելուլոիդներ. թղթե տոպրակներ բժշկական գործիքների մանրէազերծման համար. անձը հաստատող փաստաթղթերի բռնիչներ (գրասենյակային պիտույքներ). ոլորակներ անձը հաստատող փաստաթղթերի բռնիչների համար (գրասենյակային պիտույքներ). ամրակներ անձը հաստատող փաստաթղթերի բռնիչների համար (գրասենյակային պիտույքներ). թուղթ բժշկական զննման սեղանների համար. ատամնաբուժական սկուտեղների թղթյա ծածկեր. թևքերով մանկական թղթյա կրծկալներ. թուղթ կտրող գործիքներ (գրասենյակային պիտույքներ). տրաֆարետներ սննդամթերքի և ըմպելիքների ձևավորման համար. անվանական բաջեր (գրասենյակային պիտույքներ). շտրիխ կոդերի ժապավեններ. փայլեր գրասենյակային նպատակների համար. ուղեբեռների պահանջման թղթե հաշվեպիտակներ. թղթե անձեռոցիկներ մաքրելու համար. գրքերի պաշտպանիչ կազմեր. գունազարդման գրքեր. գունազարդման նկարներ. թուղթ օրիգամիի համար. թղթից կամ պլաստիկից պայուսակներ գնումների համար, թղթից կամ պլաստիկից տնտեսական պայուսակներ. մեզուզայի մագաղաթներ. մեզուզայի պատյաններ. թխելու թուղթ. մագնիսական տախտակներ՝ որպես գրասենյակային պիտույքներ. մատնահետքերի տախտակներ. հուշանվերային թղթադրամներ. սերմացու ցանելու թուղթ (գրասենյակային պարագաներ). հատակի կպչուն պիտակներ. ջրիմուռի հիմքով թաղանթ փաթեթավորման համար.

դաս 17. մասնակի մշակված ացետիլ թաղանթանյութ. ակրիլային խեժեր, կիսաֆաբրիկատներ. ասբեստե պահպանիչ վարագույրներ. ռետինե օղեր. ասբեստե հերձաքար. ջրցանման ճկափողեր. ձայնամեկուսիչ նյութեր. անջրանցիկ խտարար օղակներ. բալատա. անջրանցիկ խցվածքներ. ռետինե խցվածքներ բանկաների համար. ճեղքերի խցանիչ միջադիրներ. խցկանյութեր ռետինից կամ պլաստմասսայից. նյութեր հերմետիկացման համար. ջերմամեկուսիչ նյութեր. անմշակ կամ մասնակի մշակված կաուչուկ. ռետինե խցաններ. ռետինե կափույրներ. սինթետիկ կաուչուկ. ռետինե հարվածամեղմիչներ. ռետինե թափարգելներ. ճկուն ոչ մետաղական փողրակներ. մեկուսիչ նյութեր. ջերմային ճառագայթումը կասեցնող նյութեր. խողովակներ մանածագործվածքից. ջերմամեկուսիչ նյութեր կաթսաների համար. թուղթ էլեկտրական կոնդենսատորների համար. խցանիչ միջադիրներ խողովակների

համար. ռետինաքուղեր. բամբակ խծուծման համար. միջադիրներ գլանների համար. դիէլեկտրիկներ (մեկուսիչներ). ասբեստի թերթեր. էբոնիտ. ձայնամեկուսիչ պատվածքներ կեղևից. առածգական թելեր ոչ մանածագործական նպատակների համար. մակադրակներ կցորդիչների համար. խծուծման նյութեր. միջադիրներ ջերմային ընդարձակման ազդազերծման (կոմպենսացման) համար. քիմիական բաղադրություններ արտահոսքերը փակելու համար. միջադիրներ. ասբեստաթաղիք. մեկուսացման թաղիք. ռետինացված (վուլկանացված) թելք. զոդման պլաստմասսայե թելեր. մասնակի մշակված նյութեր արգելակային միջադիրների համար. գուտապերչ. մեկուսիչ յուղեր տրանսֆորմատորների համար. մեկուսիչ յուղեր. վերականգնված թաղանթանյութից թերթեր, բացառությամբ փաթեթավորման. մեկուսաթուղթ. մեկուսիչ գործվածքներ. մեկուսիչ լաքեր. մեկուսիչ բաղադրություններ շենքերը խոնավությունից պաշտպանելու համար. մետաղական մեկուսիչ նրբաթիթեղ. մեկուսիչ ներկեր. մեկուսիչ խարամաբամբակ. հանքային բամբակ (մեկուսիչ). մեկուսիչ ապակե բամբակ. լատեքս (կաուչուկ). կոպիտ պաստառից ճկափողեր. մածիկներ. խողովակների ոչ մետաղական կցորդիչներ. ռետինե կցորդիչներ մեքենաների մասերը պաշտպանելու համար. խտացնող հերմետիկ նյութեր միացքների համար. չմշակված կամ մասնակի մշակված փայլար. ասբեստաթուղթ. պլաստմասսայե թաղանթներ, բացառությամբ փաթեթվածքի համար օգտագործվողների. ոչ մետաղական միացքներ ճկուն խողովակների համար. միակցիչ խողովակներ տրանսպորտային միջոցների ջերմափոխանակիչների համար. սինթետիկ խեժեր, կիսաֆաբրիկատներ. օղաձև միջադիրներ ռետինից կամ ռետինացված (վուլկանացված) թելքից. ռետինե տոպրակներ (ծրարներ, փաթեթներ) փաթեթավորման համար. ասբեստե պատվածքներ. ասբեստե գործվածքներ. ասբեստե պաստառներ. ասբեստե խծուծվածք. կափույրներ բնական կաուչուկից կամ ռետինացված (վուլկանացված) թելքից. վիսկոզային թերթեր, բացառությամբ փաթեթվածքայինի. մեկուսիչներ երկաթուղիների համար. կպչուն ժապավեններ, բացառությամբ բժշկականի, գրասենյակայինի կամ կենցաղայինի. ոչ մետաղական ամրաններ սեղմած օդը առբերելու համար. ասբեստային ստվարաթուղթ. ասբեստաթելքեր. ամրանավորող ոչ մետաղական նյութեր խողովակների համար. ասբեստ. ինքնասոսնձվող ժապավեններ, բացառությամբ բժշկականի, գրասենյակայինի կամ կենցաղայինի. ռետինե սահմանափակիչներ. մալուխային մեկուսիչներ. ռետինե թելեր ոչ մանածագործական նպատակների համար. ածխածնային թելքեր, բացառությամբ մանածագործվածքայինի. մասնակի մշակված պլաստմասսաներ. մեկուսիչներ էլեկտրահաղորդման գծերի համար. մեկուսիչներ. էբոնիտե կաղապարներ. ռետինե կամ պլաստմասսայե փաթեթավորման (միջադրման, խծուծման) նյութեր. պլաստմասսայե թելքեր, բացառությամբ մանածագործվածքայինի. մեկուսիչ ապակեթելք. գործվածքներ ապակեթելքից մեկուսացման համար. պլաստմասսայե թելեր, ոչ մանածագործական նպատակների համար. զտող նյութեր մասնակի մշակված փրփրապլաստից. մեկուսիչ ժապավեններ. ջրի մակերևույթի աղտոտումը խոչընդոտող լողուն փակոցներ. ռետինե նյութեր դողերի պահպանաշերտերը վերականգնելու համար. մեկուսիչ ծեփեր. պլաստմասսայե թաղանթներ գյուղատնտեսական նպատակների համար. ծաղկակալիչներ փրփրանյութից (կիսաֆաբրիկատներ). հեղուկ կաուչուկ. կաուչուկի լուծույթներ. հակաշլացման (գունամշակված) թաղանթներ պատուհանների համար. հրահեստ մեկուսիչ նյութեր. անմշակ կամ մասնակի մշակված ռետիններ. հերմետիկացնող կպչուն ժապավեններ. դռների կաուչուկից սահմանափակիչներ. պատուհանների կաուչուկից սահմանափակիչներ. ոչ մետաղական ճկուն խողովակները միացնող հարմարակցիչներ. ոչ մետաղական կոշտ խողովակները միացնող հարմարակցիչներ. կառանման համար պատին ամրացվող ռետինե հարվածահատներ. զտող նյութեր մասնակի մշակված պլաստմասսայե թաղանթներից. պլաստիկե թելեր 3D տպագրության համար. մեկուսիչ թանաքներ. ակրիլային ապակի, կիսամշակված. օրգանական ապակի, կիսամշակված. ռետինե կարովի պիտակներ հագուստի համար. խցուկներ. խտարար օղակներ. ռետինե չսահող մակադրակներ. մեկուսիչ թաղանթներ.

դաս 18. ալպենշտոկներ. կենդանիների կաշիներ. օղակներ հովանոցների համար. թամբերի հիմնակմախքներ. շնակապեր. թամբերի ամրակապեր. անձրևի կամ արևի հովանոցների ճաղեր. անգազանցիկ թաղանթներ կենդանիների աղիքներից. քսակներ. ձիասարքի լկամներ. փոկեր ռազմական հանդերձանքի համար. թղթապանակներ երաժշտական նոտաների համար. հովանոցների կոթեր. ձեռնափայտեր (գավազաններ). նստոցների վերածվող ծալովի ձեռնափայտեր. սանձեր (լծասարք). անձրևի կամ արևի հովանոցների հիմնակմախքներ. որսապարկեր (որսորդական պարագաներ). դպրոցական պայուսակներ. այցեքարտերի թղթապանակներ. կաշեստվարաթուղթ. բոլորագլխարկների կաշվե տուփեր. անուրներ ձիերի համար. ձիու ծածկոցներ. շևրո (փափուկ այծակաշի). դնչկալներ. ճամփորդական սնդուկներ. վզնոցներ կենդանիների համար. կաշվե քուղեր. մշակված կաշիներ. փոկեր լծասարքի համար. կաշեփոկեր թամբագործական իրերի համար (փոկային շինվածքներ). փոկեր չմուշկների համար. կաշեփոկիկներ. ուղղանկյուն մեջքակաշիներ (կաշվե կիսաֆաբրիկատներ). չմշակված կամ մասնակի մշակված կաշի. կահույքի կաշվե հարդարանք. արհեստական կաշի. հովանոցներ. ուսափոկերով համակներ երեխաներ կրելու համար. ռետինե դետալներ ասպանդակների համար. ասպանդակի փոկեր. կաշվե պայուսակներ փականագործական գործիքների համար. մտրակներ. կերի տոպրակներ. պատյաններ անձրևի հովանոցների համար. զսպանների կաշվե պատյաններ. ձիերի ծնկակալներ. ծածկոցներ կենդանիների համար. լծասարքեր կենդանիների համար. ձիերի աչքակալներ (լծասարք). ձգափոկեր (լծասարք). թիկնապայուսակներ. ձիերի երասանակներ. բռնակներ գավազանների համար. բազմաճյուղ մտրակներ. կաշվե դնչափոկեր. մոլեսկին (գործվածք՝ կաշվի նմանակ). հիմնակմախքներ պայուսակների համար (պայուսակների կառուցվածքային մասեր). արևի հովանոցներ. մորթեղեն. բռնակներ հովանոցների համար. դրամապանակներ. անվավոր տնտեսական պայուսակներ. բազմակի օգտագործման տնտեսական պայուսակներ. սանձեր. տափակ ճամպրուկներ փաստաթղթերի համար. պայուսակներ ալպինիստների համար. տուրիստական պայուսակներ. ծովափի պայուսակներ. կանացի պայուսակներ. ուղեպայուսակներ. կաշվե պարկեր (ծրարներ, պայուսակներ) փաթեթավորման համար. կաշվե թամբակալներ. ձիաթամբեր. կաշեգործական - թամբագործական իրեր. թղթապայուսակներ (կաշեգալանտերեա). ճամփորդական կաշվե հավաքակազմեր (կաշեգալանտերեա). ճամպրուկներ. բռնակներ ճամպրուկների համար. կաշվե փականներ (կափույրներ). խոշոր եղջերավոր անասունների կաշիներ. կաշվից կամ կաշեստվարաթղթից արկղեր. մետաղական օղակներից պատրաստված քսակներ. կաշվե կամ կաշեստվարաթղթե տուփեր. ճամփորդական սնդուկներ (ուղեբեռի). դատարկ պիտույքատուփեր արդուզարդի պարագաների համար. թավշակաշի, բացառությամբ մաքրելու համար օգտագործվողների. կաշվե սրակալներ, սուսերի ուսակապեր. թամքատակեր ձիերի համար. ֆիբրից տուփեր, արկղեր և սնդուկներ. կռնապայուսակներ. պորտպլեդներ. երասաններ (լծասարք). բանալիների պատյաններ. տնտեսական մթերացանցեր. տափակ ճամպրուկներ. կահույքի կաշվե պաստառներ. ձիաթամբերի տակ դրվող փափուկ տակդիրներ. սպորտային պայուսակներ. ասպանդակներ. հեծելասարքերի լրակազմեր. պայտեր. լանջակապեր երեխաներ կրելու համար. կենգուրու պայուսակներ երեխաներ կրելու համար. պայուսակներ. վարկային քարտերի պատյաններ (դրամապանակներ). այցեքարտերի պատյաններ. ռանդոսերու (ճապոնական դպրոցական կռնապայուսակ). ուղեբեռների հաշվեպիտակներ. թամբատակեր ձիերի համար. կաշվե պիտակներ. բռնակներ տնտեսական պայուսակները և տոպրակները տեղափոխելու համար. թիֆիլին (ֆիլաքթրի). անվավոր ճամպրուկներ. խուրջիններ. հագուստ ընտանի կենդանիների համար. սանձեր քայլելիս երեխաներին պահելու համար. շարժիչավոր ճամպրուկներ. ուղեբեռի տեսակավորման համար հարմարեցվող պայուսակներ. կոնֆերանսների համար նախատեսված թղթապանակներ. զբոսանքի ձեռնափայտեր. կաշվե պաստառներ. թիկնապայուսակներ երեխաներ կրելու համար. արդուզարդի պարագաների դատարկ պայուսակներ. ճամպրուկի կազմակերպիչներ, ուղեբեռի կազմակերպիչների հավաքածու. վեգան

կաշի. կաշվից կարովի պիտակներ հագուստի համար. կաշվից կպչուն պիտակներ պայուսակների համար. շների արտաթորանքի տոպրակների բաշխիչներ՝ հարմարեցված շնակապերի հետ օգտագործման համար. արհեստական կաշի միցելիումի հիմքով. քսակների հիմնամախքներ (քսակների կառուցվածքային մասեր).

դաս 19. հայտարարությունների ոչ մետաղական սյուներ. ալաբաստրե ապակի շինարարության համար. ալաբաստր. ասբեստացեմենտ. ասբեստ պարունակող շինարարական լուծույթներ. հերձաքար. տանիքի հերձաքար. հերձաքարի փոշի. ծպեղներ տանիքների համար. արծաթաբեր ավազ. բրուտակավ. հրակայուն աղյուսներ. ասֆալտ. ճանապարհային ասֆալտային պատվածքներ. փայտե ձողեր պատերի երեսվածքի համար. ոչ մետաղական ճաղաշարքեր. բիտումներ. խեժապատված շինարարական սղոցանյութեր. բարաքներ. առևտրային կրպակներ. հերձաններ տանիքը ծածկելու համար. փեղկավոր ոչ մետաղական դռներ. բետոն. բետոնե շինարարական տարրեր. բիտումային շինանյութեր. մասնակի մշակված անտառանյութ. շինարարական ոչ մետաղական տախտակամածներ. սոսնձած բազմաշերտ ֆաներ. մշակված անտառանյութ. ատաղձափայտ. սղոցված անտառանյութ. ճանապարհային փայտե պատվածքներ. միաշերտ նրբատախտակ. նրբատախտակի փայտ. փայտե երեսվածք. ցեմենտ. մածուցիկ շինանյութեր. աղյուսներ. աղյուսակավ. կապակցող նյութեր բրիկետավորման համար. հեռախոսի ոչ մետաղական խցիկներ. սուզարկղեր ստորջրյա շինարարական աշխատանքների համար. կրաքար. ոչ մետաղական ջրհորդաններ (տանիքի). շինարարական ստվարաթուղթ. բիտումավորված ստվարաթուղթ (շինարարական). հրահեստ նյութեր (շամոտ). բուխարու ոչ մետաղական ծածկեր. ոչ մետաղական շինարարական հիմնակմախքներ. նյութեր ճանապարհաշինության և ճանապարհային պատվածքների համար. կիր. շինարարական լուծույթներ. սվաղ (ծեփ) ներքին աշխատանքների համար. ծխնելույզի ոչ մետաղական խողովակներ. հրահեստ պատվածքներ ցեմենտի հիմքի վրա պատրաստված նյութերից. սալեր ցեմենտի հիմքի վրա պատրաստված նյութերից. ցեմենտից պատրաստված սյուներ. շերտաքարեր. ոչ մետաղական միջնապատեր. ոչ մետաղական կառուցվածքներ. շինարարական թուղթ. շինարարական ապակի. ոչ մետաղական քիվեր. քիվերի ոչ մետաղական ձուլվածքներ. ոչ մետաղական կցվանքային մակադրակներ տանիքների ջրամեկուսացման համար. ոչ մետաղական անկյունակներ. ոչ մետաղական պատուհաններ. ոչ մետաղական դռներ. դիտահորերի ոչ մետաղական կափարիչներ. ոչ մետաղական տանիքապատվածքներ. չմշակված կավիճ. քվարց (որձաքար). սանդուղքի ոչ մետաղական աստիճաններ. ջրատար ոչ մետաղական խողովակներ. ջրմուղի ոչ մետաղական խողովակներ. ջրատար խողովակների կափույրներ, բացառությամբ մետաղից և պլաստմասսայից պատրաստվածների. ոչ մետաղական լաստակներ. բարձրաբերձ ուղղաձիգ ոչ մետաղական կառուցվածք էլեկտրահաղորդման գծերի համար. խողովակաշարերի ոչ մետաղական ճյուղավորումներ. գերեզմանների ոչ մետաղական շրջանակներ. բիտումե տանիքապատվածքներ. ոչ մետաղական հեծաններ. ոչ մետաղական խոզանոցներ. ոչ մետաղական գոմեր. ոչ մետաղական հենարաններ. գերեզմանաքարեր (ոչ մետաղական). հուշատախտակներ (ոչ մետաղական). թաղիք շինարարության համար. լցակաղապարներ (ոչ մետաղական). ցեմենտ վառարանների համար. ցեմենտ դոմնային վառարանների համար. քար. պատուհանի շինարարական հայելապակի. կավ. քարածխային ձյութ. գրանիտ. կոպիճ. ավազաքար շինարարության համար. ավազաքարային խողովակներ. գիպս (շինանյութ). ոչ մետաղական շերտափեղկեր (շերտավարագույրներ). խարամ (շինանյութ). խիճ. հատակի փայտասալիկների տախտակներ. արտաքին շերտափեղկեր, բացառությամբ մետաղականի և մանածագործականի. հրթիռների թողարկման տեղակայանքների ոչ մետաղական հարթակներ. ոչ մետաղական կավարամածներ. կապակցող նյութեր ճանապարհային պատվածքների վերանորոգման համար. մամլած խցան շինարարության համար. մանրահատակ. ոչ մետաղական սանդղահեծաններ (աստիճանների մասեր). դռան կամ պատուհանի ոչ մետաղական միջակապեր. ճանապարհային լուսատու պատվածքներ. ճանապարհային «Մակադամ» տեսակի խճային պատվածքներ. ոչ մետաղա-

լու դանակներ (ձեռքի գործիքներ). արդուկներ. զմռնիտե սկավառակներ. խարտոցներ (գործիքներ). անցքահան աքցաններ (ձեռքի գործիքներ). մամլամատներ (ձեռքի գործիքներ). կտրող գործիքներ (ձեռքի գործիքներ). գործիքների հավաքակազմեր մատնահարդարման համար. ձեռքի ատրճանակներ մածիկներն արտաճզմելու համար. քաղհանիչներ խաղողի այգիները մշակելու համար (ձեռքի գործիքներ). քերակներ (ձեռքի գործիքներ). միս կտրող դանակներ. քերաններ (ձեռքի գործիքներ). ականջ դակելու գործիքներ. մազազրկման էլեկտրական և ոչ էլեկտրական հարմարանքներ. էլեկտրական գործիքների հավաքակազմեր մատնահարդարման համար. մամլակներ. ձեռքի պոմպեր. դաշույններ. ձեռքի գործիքների կալիչ գոտիներ. պանիր կտրելու ոչ էլեկտրական դանակներ. պիցա կտրելու ոչ էլեկտրական դանակներ. լինգեր. ձու կտրելու ոչ էլեկտրական դանակներ. նրբունելիներ թարթիչները ոլորելու համար. թեք (անկյան տակ) եզրակտրման ձեռքի գործիքներ. փոցխեր գոլֆի արահետները խնամելու համար. բուխարիների փուքսեր (ձեռքի գործիքներ). ապարատներ դաջվածքի համար. զմռնիտե խարտոցներ. ձգովի մետաղալար (ձեռքի գործիքներ). մեկուսիչ հանելու գործիքներ (ձեռքի գործիքներ). էջատման մամլակներ (ձեռքի գործիքներ). ոչ էլեկտրական ատրճանակներ ճեղքերը փակելու համար. մետաղալարերը ձգելու սարքեր (ձեռքի գործիքներ). դանակներ ստեղծագործական ժամանցի համար (հերձադանակներ). ձեռքով կառավարվող օդային պոմպեր. խեցեղեն դանակներ. ստվարաթղթից զմռնիտե սղոցիկներ. ձեռքի գործիքներ դահուկների եզրակները սրելու համար, եզրակներ հատելու ձեռքի գործիքներ. դաջվածք անելու ասեղներ. մածկիչներ նկարիչների համար. դուրեր քանդակագործների համար. սեղանի պլաստմասսայե գդալներ, պատառաքաղներ և դանակներ. սեղանի մանկական գդալներ, պատառաքաղներ և դանակներ. քերակներ դահուկների համար. ձեռքով կառավարվող ձեռքի գործիքների կոթեր. դանակների կոթեր. գերանդիների մետաղական կոթեր. ձեռքով կառավարվող պարուրաձև բանջարակտրատիչներ. բանջարամաքրիչներ (ձեռքի գործիքներ). դանակներ դուրս հանովի սայրով. մազ հյուսող էլեկտրական գործիքներ. ներկեր խառնելու փայտիկներ. գինու շշի փայլաթիթեղը կտրող ձեռքի գործիքներ. միրգ կտրող դանակներ. մրգի միջուկը հանելու դանակներ. խոհանոցային մանդոլիններ. ճանկեր մսի համար. մանրէազերծված գործիքներ մարմնի պիրսինգի համար. մազահեռացման լազերային սարքեր, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. վթարային մուրճեր. բանջարեղենի դանակներ. կտրատելու պատառաքաղներ. կտրատող դանակներ. բազմաֆունկցիոնալ դանակներ. եգիպտացորենի կողերը մաքրող ձեռքի գործիքներ. միրգ կտրելու ձեռքի գործիքներ. ձեռքով կառավարվող խոհանոցային պրոցեսորներ. ձեռքով կառավարվող շարժական մանածագործական հաստոցներ. ձեռքով կառավարվող խողովակաձև մամլիչներ, բացառությամբ կենցաղային նպատակների համար օգտագործվողների.

դաս 9. էլեկտրական կոճեր. մասնիկների ուժեղարարներ. հագուստին ամրացվող լույս անդրադարձնող սկավառակներ տրանսպորտային վթարները կանխելու համար. դժբախտ պատահարներից պաշտպանության անհատական միջոցներ. դժբախտ պատահարներից, ճառագայթումից և կրակից պաշտպանող հագուստ. էլեկտրական կուտակիչներ տրանսպորտային միջոցների համար. կուտակիչների բանկաներ. էլեկտրական կուտակիչների պատյաններ. կուտակչային մարտկոցների խտաչափներ. ջրաչափներ. կուտակիչի թիթեղներ. տագնապի ազդասարքեր. ձայնային ազդանշանային սարքեր. ձայնահաղորդիչներ. ձայնագրման սկավառակներ. խոսափողեր. ճառագայթաչափներ. գումարման սարքեր. գազախտաչափներ. լուսախոշորացուցիչներ. երկաթուղային ուղեփոխ սլաքների հեռակառավարման էլեկտրադինամիկական ապարատուրա. մագնիսներ. էլեկտրամագնիսների կոճեր. օդի բաղադրության անալիզի ապարատներ. վթարային ազդասարքեր. սպիրտաչափներ. շարժաքանոններ. սննդամթերքի և կերերի անալիզի սարքեր. էլեկտրական հեռավառոցքային ապարատներ. վառոցքի համակարգերի մարտկոցներ. բարձրաչափներ. դժբախտ պատահարներից պաշտպանող ասբեստե գործվածքից ձեռնոցներ. կրակից պաշտպանող հագուստ ասբեստե գործվածքներից. ամպերաչափներ. ձայնի ուժեղարարներ.

էլեկտրոնային ուժեղարար լամպեր. հողմաչափներ. տրամաչափիչ օղեր. կրակմարիչներ. անոդներ. անոդային մարտկոցներ. ալեհավաքներ. հակաշլացման լուսապաշտպան ապակիներ. սաղավարտների հովարներ. խանգարումապաշտպան սարքեր (էլեկտրականություն). տրանսֆորմատորներ (էլեկտրականություն). բացվածքաչափներ (օպտիկական). դրամները հաշվելու և տեսակավորելու մեքենաներ. բաշխիչ տուփեր (էլեկտրականություն). տեղագրական գործիքներ. չափիչ ժապավեններ. օբյեկտիվներ աստղալուսանկարչության համար. ջերմաէլեկտրոնային լամպեր. ուսուցման տեսալսողական միջոցներ. կանխավճարով աշխատող երաժշտական ավտոմատներ. կանխավճարով աշխատող ավտոմատների մեխանիզմներ. ժետոնով աշխատող ապարատների մեխանիզմներ. տրամաչափիչներ. համեմատիչներ. հրդեհի ազդանշանիչներ. ավտոմեքենայի անվադողերում ցածր ճնշման ավտոմատ ցուցիչներ. հատուկ պաշտպանիչ կոմբինեզոններ օդաչուների համար. վթարային էլեկտրական զանգեր. ձողիկներ ստորգետնյա ջրերի աղբյուրների տեղադրությունը որոշելու համար. փրկարարական լաստեր. կշեռքներ. օդերևութաբանական զոնդ-գնդեր. մագնիսական ժապավենների մագնիսաթափման սարքեր. մագնիսական ժապավենների վրա գրանցման սարքեր. մագնիսական ժապավենների. ճնշաչափներ. կշռման սարքավորանք. հարթակավոր կշեռքներ. հրդեհաշիջման ժամանակ օգտագործվող հարվածող հարմարանքներ. լիցքավորիչներ էլեկտրական կուտակիչների համար. բետատրոններ. տոմսերի վաճառքի ավտոմատներ. բարձրախոսների պատյաններ. մակրոոսպնյակներ, հավելադիր ոսպնյակներ. ծայրային կցորդիչներ (էլեկտրականություն). ճնշման ցուցիչ-խցաններ փականների համար. գալվանաչափներ. զանգերի կոճակներ. ճյուղավորման տուփեր (էլեկտրականություն). նվագարկիչների տոնարմներ. սպիրտային հարթաչափներ. գրասենյակային սարքավորանք ծակոտաքարտերի օգտագործմամբ. էլեկտրական մալուխների պարուտակներ. շրջանակներ դիապոզիտիվների (պատկերների) համար. հաշվիչ սկավառակներ, լոգարիթմական շրջանաձև քանոններ. լոգարիթմական քանոններ. հաշվասարքեր. բացովի տրամաչափիչներ. ձևանմուշներ (չափիչ գործիքներ). լուսապատճենման ապարատներ. կինոնկարահանման խցիկներ. մազական լաբորատոր խողովակներ. ձայնագրությունների կրիչներ. պաշտպանիչ սաղավարտներ. շնչադիմակներ, բացառությամբ արհեստական շնչառության համար նախատեսվածների. եռակցողի դիմապանակներ. ակնոցների շղթաներ. ջերմակարգավորման սարքեր. լուսանկարչական լաբորատորիաներ. ստուգիչ-չափիչ սարքեր շոգեկաթսաների համար. չորացուցիչներ (լուսանկարչություն). կինոֆիլմերի (կինոժապավենների) մոնտաժման հարմարանքներ. տպասխեմաներ. լուսաազդանշային (առկայծումային) ապարատներ. ազդանշանային զանգեր. մանրադիտակների առարկայական ապակիների պատյաններ. էլեկտրական կոլեկտորներ. արտադրական գործընթացների հեռակառավարման էլեկտրական տեղակայանքներ. փակ անջատիչներ (էլեկտրականություն). կոմուտատորներ. ծովային կողմնացույցներ. օկուլյարներ (ակնապակիներ). ջուլիակային խոշորացույցներ. քայլաչափներ. հաշվիչներ. մետրոնոմներ. էլեկտրական կոնդենսատորներ. էլեկտրահաղորդիչներ. էլեկտրական մայրուղիներ. էլեկտրական շղթայի գործարկիչներ. գծային միացիչներ (էլեկտրականություն). միացման տուփեր (էլեկտրականություն). կոմուտացման վահաններ. էլեկտրական հպակներ. նամականիշներով վճարումների վերահսկողության ապարատներ. էլեկտրական կարգավորող սարքեր. հսկողության էլեկտրական սարքավորումներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. տրանսպորտային միջոցների արագությունը վերահսկող սարքեր. էլեկտրական կերպափոխիչներ. լուսապատճենման սարքեր (լուսանկարչական, էլեկտրաստատիկ, ջերմային). ակնոցների նրբաքուղեր. թորանոթներ. թորանոթները պահող հարմարանքներ. ուղղիչ ոսպնյակներ (օպտիկա). օբյեկտիվներ (ոսպնյակներ) (օպտիկա). տիեզերագրական գործիքներ. կոստյումներ ջրասուզակության համար. կոմուտացման էլեկտրական ապարատներ. էլեկտրական փոխարկիչներ. սահմանափակիչներ (էլեկտրականություն). խցակի էլեկտրական երկժանիներ. հոսանքի ուղղիչներ. ռեդուկտորներ (էլեկտրական). դերձակների մետրեր. հալքանոթներ (լաբորատոր).

կաշիների հաստությունը չափող սարքեր. ցիկլոտրոններ. կեղծ դրամների դետեկտորներ. փականակներն իջեցնող մեխանիզմներ (լուսանկարչություն). խտաչափներ. մուլտիպլիկացիոն ֆիլմեր. լաբորատոր տակդիրներ. մետաղադետեկտորներ արդյունաբերական կամ ռազմական նպատակների համար. սոնարներ. դետեկտորներ. լուսանկարչական փականներ. մեմբրաններ (ակուստիկա). դիապոզիտիվների կենտրոնադրման սարքեր. լուսանկարչական ապարատներ. դիապոզիտիվներ (լուսանկարչություն). դիասկոպներ. հեռավորություն չափող սարքեր. դիկտոֆոններ. դիֆրակցիոն ապարատներ (մանրազննություն). բարձրախոսներ. էլեկտրական ապահովիչներ. նվագարկիչներ. մանրադիտակներ. հեռաձայնագրման սարքեր. հեռաչափներ (սարքեր). բաշխիչ վահաններ (էլեկտրականություն). բաշխիչ կառավարակետեր (էլեկտրականություն). չափակարկիններ. չափիչներ. չափիչ սարքեր. դինամոմետրեր (ուժաչափներ). ջրի մակարդակի ցուցիչներ. հրշեջային փրկասանդուղքներ. բռնկումային լամպեր (լուսանկարչություն). հեռախոսափողեր. ֆլուորեսցենտող (լուսածոր) էկրաններ. պրոյեկցիոն էկրաններ. աշխատողների դեմքը պաշտպանող վահաններ. էկրաններ (լուսանկարչություն). լուսանկարչության մեջ օգտագործվող չորացման հարմարանքներ. հոսանքի կորստի էլեկտրական ցուցիչներ. էլեկտրական չափիչ սրքեր. էլեկտրական մալուխներ. էլեկտրահաղորդագծեր. կառավարման վահաններ (էլեկտրականություն). գալվանական տարրեր. էլեկտրական գծերի միացքներ. էլեկտրական միացքներ. էլեկտրական ռելեներ. էլեկտրոնային ազդանշանների հաղորդիչներ. ռադիոհաղորդիչներ (հեռակապ). ակուստիկ սկավառակները մաքրելու հարմարանքներ. ձայնագրման ժապավեններ. տրանսպորտային միջոցների անցած տարածության (կմ, մղոն) հաշվիչներ. կոճեր (լուսանկարչության). մեխանիկական ցուցանակներ. էպիդիասկոպներ. փորձանոթներ. հավասարակշռման սարքեր. թերմոստատներ (ջերմապահպանիչներ). էրգաչափներ. նյութերը փորձարկելու մեքենաներ և սարքեր. ձվադիտակներ. ցուցիչներ. բենզինի մակարդակի ցուցիչներ. կայծմարիչներ. լուսանկարչական ապարատների և լուսանկարչական պարագաների հատուկ պատյաններ. ապարատուրա անալիզների համար, բացառությամբ բժշկականի. բեկումաչափներ. լուսակայացույցներ (լուսավորվածության չափիչներ). հաշիվները դուրս գրելու սարքեր. խմորման լաբորատոր ապարատներ. երկաթուղային տրանսպորտում անվտանգություն ապահովող սարքեր. էլեկտրահաղորդալարեր. մագնիսական լարեր. ուղղալարի ծանրոցներ. ուղղալարեր. ցանցեր դժբախտ դեպքերից պաշտպանելու համար. փրկարարական ցանցեր. բրեզենտ փրկարարական աշխատանքների համար. ժապավեններ կտրելու սարքեր. շնչադիմակների զտիչներ. լուսանկարչությունում օգտագործվող զտիչներ. լիցքավորող սարքեր կուտակիչների համար. բարձր հաճախականության ապարատուրա. հաճախաչափներ. հալուն ապահովիչներ. ռադիոսարքեր. գալենիտային բյուրեղներ (դետեկտորներ). գալվանական տարրերի մարտկոցներ. դժբախտ պատահարներից պաշտպանող ձեռնոցներ. ջրասուզակների ձեռնոցներ. ռենտգենյան ճառագայթումից պաշտպանող ձեռնոցներ արդյունաբերական նպատակների համար. գազաանալիզարարներ. գազաչափներ (չափիչ գործիքներ). երկրաբաշխական սարքեր և գործիքներ. նշաձողեր (գեոդեզիական գործիքներ), մակարդակաչափ ցցանիշներ. լուսանկարները չորացնող սարքեր. լուսանկարչական փայլարկիչներ. քանոններ (չափիչ գործիքներ). աստիճանավորված ապակե անոթներ. ռաստրեր (պատկերացանցեր) լուսատպվածքների համար. էլեկտրական կուտակիչների թիթեղների ցանցեր. կրակից պաշտպանող հագուստ. ընդունիչներ (ձայնա- և տեսա-). արևագրիչներ. հոլոգրամներ. խոնավաչափներ. էլեկտրական լարերի նույնականացման ջղեր. էլեկտրական լարերի նույնականացման պարուտակներ. փրկարարական սարքեր և սարքավորումներ . հրշեջ փողրակների ճայրապանակներ. հրշեջ ավտոմեքենաներ. հրշեջ պոմպեր. թեքաչափներ. սակահաշվիչներ. քանակի ցուցիչներ. վակուումաչափներ. արագաչափներ. ինդուկտիվության կոճերի միջաձողեր (էլեկտրականություն). խարիսխներ (էլեկտրականություն). տեղեկատվության մշակման սարքեր. հայելիներ զննման աշխատանքների համար. խոսակցական ապարատներ. լուսանկարչական թիթեղների տու-

փեր. կերպափոխիչներ (էլեկտրականություն). իոնարարներ, բացառությամբ օդը մշակելու համար օգտագործվողների. դռան օպտիկական դիտանցքեր (խոշորացուցիչ ոսպնյակներ). հարմարանքներ զգեստների ներքևի մասը շտկելու համար. հատուկ կահույք լաբորատորիաների համար. կաթնախտաչափներ. կաթնաչափներ. լամպեր լուսանկարչական լաբորատորիաների համար. օպտիկական համակարգով լապտերներ. մոգական լապտերներ. ազդանշանային լապտերներ. լազերներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. օպտիկական ոսպնյակներ. գրասենյակային կշեռքներ նամակների համար. լագեր (չափիչ գործիքներ). խորաչափների գծեր. խոշորացույցներ (օպտիկա). լույս արձակող ցուցանակներ, լույս արձակող նշաններ. նեոնային խողովակներ ցուցանակների համար. ակնոցներ (օպտիկա). օպտիկական օկուլյարներով (ակնապակիներով) գործիքներ. օպտիկական մակարդակաչափներ. ակնոցների ապակիներ. օպտիկական իրեր. ճնշաչափներ (մանոմետրեր). շրջադիտակներ. պաշտպանիչ դիմակներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. մաթեմատիկական գործիքներ. կանխավճարով աշխատող մեխանիզմներ հեռուստացույցների համար. մեգաֆոններ. համակարգիչների հիշողության բլոկներ. ատաղձագործների քանոններ (մետրեր). սնդիկային հարթաչափներ. արագություն չափող սարքեր (լուսանկարչություն). ճշգրիտ չափման սարքեր. չափիչ գործիքներ. օդերևութաբանական սարքեր. քանոններ, մետրեր (չափիչ գործիքներ). օպտիկական սարքերի և գործիքների մանրաչափական պտուտակներ. միկրոֆոններ. մանրահատիչներ. ժամանակի ավտոմատ ռելեներ. անդրադարձիչներ (օպտիկա). շնչառական ապարատներ ստորջրյա լողի համար. ծովային սարքեր և գործիքներ. ծովային ազդանշանային սարքեր. նավագնացական սարքեր և գործիքներ. ակնոցների շրջանակներ. էլեկտրական մարտկոցներ. էլեկտրական կուտակիչներ. հարթաչափներ (հորիզոնական դիրքի որոշման սարքեր). մակարդակաչափական գործիքներ. քթակնոցների (պենսնե) շրջանակներ. պրիզմաներ (օպտիկա). դիտասարքեր. օկտանտներ (անկյունաչափներ). օմաչափներ. ալիքաչափներ. օպտիկական սարքեր և գործիքներ. օպտիկական ապակիներ. համակարգիչներ. համակարգչային գրառված ծրագրեր. օսցիլոգրաֆներ (տատանագրիչներ). թթվածնի վերալցման (տարաթողման) սարքեր. օզոնարարներ. միկրոմետրեր (մանրաչափներ). լուսատու կամ մեխանիկական ազդանշանային պանելներ. շանթարգելներ. ավտոմեքենաների կայանման վճարովի ժամանակի հաշվիչներ. աստղագիտական սարքեր և գործիքներ. մաշկի հաստությունը չափող սարքեր. թթվաչափներ. կշռման սարքեր և գործիքներ. աղային լուծույթների խտության որոշման խտաչափներ. լվացման ռեզերվուարներ (լուսանկարչություն). լուսանկարչական ապարատների կանգնակներ. լուսանկարչական ապարատների դիտաններ. լուսաչափներ. լուսահեռագրական ապարատներ. ֆիզիկական սարքեր և գործիքներ. տրանսպորտային միջոցների ավտոմատ կառավարման սարքեր. քթակնոցներ (պենսնե). լաբորատորային կաթոցիկներ. պլանշետներ (երկրաբաշխական գործիքներ). մակերեսաչափներ. ստորջրյա լողի ժամանակ օգտագործվող ականջի ներդրակներ. զանգեր (տագնապի ազդասարքեր). կշռաքարեր. բևեռաչափներ. ռադիոհեռախոսային կայաններ. ռադիոհեռագրական կայաններ. ճնշման չափիչներ. ճնշման ցուցիչներ. պրոյեկցիոն ապարատներ. կոռոզիայից պաշտպանող կաթոդային սարքեր. ատամնապաշտպանիչներ. հրաչափներ. ռադարներ. ռադիոհաղորդիչներ տրանսպորտային միջոցների համար. ռենտգենյան ապարատներ արդյունաբերական նպատակների համար. անկյունաչափներ (չափիչ գործիքներ). ռենտգենյան ճառագայթման արտադրման (գեներացման) ապարատներ և տեղակայանքներ, բացառությամբ բժշկության մեջ օգտագործվողների. ռենտգենյան խողովակներ, բացառությամբ բժշկության մեջ օգտագործվողների. ռենտգենյան ճառագայթներից պաշտպանող սարքեր, բացառությամբ բժշկության մեջ օգտագործվողների. հեռախոսային ապարատներ. բեկումային աստղադիտակներ. ռենտգենյան ապարատներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. սպեկտրադիտակներ. էլեկտրական դիմադրություններ. ջերմաչափներ, բացառությամբ բժշկական ջերմաչափների. շնչադիմակներ օդի զտման

համար. շնչառական ապարատներ, բացառությամբ արհեստական շնչառության ապարատների. ռեոստատներ. բեզմեններ (կշեռքներ). լուսային կամ մեխանիկական ազդասարքեր. շաքարաչափներ. զոնդեր գիտական հետազոտությունների համար. արբանյակներ գիտական հետազոտությունների համար. մեմբրաններ գիտական ապարատուրայի համար. ուսուցանող սարքեր. ինդուկտիվության կոճեր (փաթույթներ). սեղմակներ (էլեկտրականություն). էլեկտրական փականներ. սեքստանտներ. ազդանշանային սուլիչներ. կանխող եռանկյուններ անսարք տրանսպորտային միջոցների համար. ազդանշանների հեռակառավարման էլեկտրադինամիկական ապարատուրա. տրանսպորտային միջոցների կառավարման կամ ստուգման նմանակիչներ. շչակներ. ձայնի հաղորդման ապարատներ. ձայնագրիչ ապարատուրա. ձայնի վերարտադրման սարքեր. խորազննման սարքեր և մեքենաներ. զոնդերի ծանրոցներ, խորաչափների ծանրոցներ. սոնոմետրեր. սպեկտրագրիչներ. գնդոլորտաչափներ. տարածադիտակներ. տարածադիտական ապարատներ. նվագարկիչների ասեղներ. սուլֆիտաչափներ. հեռատիպներ. պտուտաչափներ (դարձաչափներ). պարուրակային տրամաչափիչներ. հեռագրասարքեր (ապարատներ). հեռուստացույցներ. հեռագրալարեր. հեռակառավարման ապարատուրա. ռադիոկայմեր. հեռուստահուշարարներ. հեռախոսային հաղորդիչներ. հեռագործ ընդհատիչներ. հեռադիտակներ. աստղադիտակներ. ջերմաստիճանային ցուցիչներ. ժամանակը գրանցող սարքեր. թեոդոլիտներ (անկյունաչափ գործիքներ). թերմոստատներ փոխադրամիջոցների համար. տոտալիզատորներ. պտուտաթվերի հաշվիչներ. նվագարկիչների պտուտաթվերի կարգավորիչներ. հաղորդիչներ (հեռակապ). ճշգրիտ կշեռքներ. խազքաշներ (ռեյսմուսներ). վակուումային կաթոդային լամպեր (ռադիո). միզաչափներ. փոփոխաչափներ. նոնիուսներ, վերնիերներ. մագնիսական ժապավեններ տեսագրման համար. մածուցիկաչափներ. էլեկտրական սարքեր գողությունները կանխելու համար. լարման կարգավորիչներ տրանսպորտային միջոցների համար. ընտրաձայները հաշվելու մեքենաներ. վոլտաչափներ. հարմարանքներ նվագարկիչների ասեղները փոխարինելու համար. լաբորատոր թորիչ ապարատներ. հալուն մետաղալար. հակակաթոդներ. սուլիչներ շներին հրահանգներ հաղորդելու համար. օպտիկական նշանոցներ հրազենի համար. պահպանական ազդանշանային սարքեր. անկյունաչափական գործիքներ. լուսատու ազդալողաններ. էլեկտրական կոճերի հիմնակմախքներ. լուսակայված ժապավեններ. լույս արձակող կամ մեխանիկական ճանապարհային նշաններ. փրկարար ազդալողաններ. ազդանշանային ազդալողաններ. զումմերներ. բուսոլներ (կողմնացույց-անկյունաչափներ), կողմնացույցներ. հակամառախուղային ազդասարքեր, բացառությամբ պայթուցիկների. դրամարկղային ապարատներ. ռենտգենյան ապարատների էկրաններ արդյունաբերական նպատակների համար. նույնականացման մագնիսական քարտեր. փակող շերտով լուսատարրեր (ֆոտոէլեմենտներ). օպտիկական խտաչափներ. մագնիսական սկավառակներ. դիսկետներ. ընթերցող գլխիկների մաքրման ժապավեններ. տեսագրման սարքեր. համակարգիչների ստեղնաշարեր. ինտեգրալ սխեմաներ. կիսահաղորդիչներ. չիպեր (ինտեգրալ սխեմաներ). կաթոդներ. փրկարար բաճկոնակներ. փրկագոտիներ. քիմիական սարքեր և գործիքներ. լուսակայված կինոժապավեններ. նյութեր էլեկտրահաղորդման գծերի համար (լարեր, մալուխներ). հպաոսպնյակներ. հպաոսպնյակների պատյաններ. մանրէական կուլտուրաների ինկուբատորներ. արևային մարտկոցներ. մեկուսացված պղնձալար. գազապարպիչ էլեկտրական խողովակներ, բացառությամբ լուսավորության համար օգտագործվողների. դիաֆրագմաներ (լուսանկարչություն). թորիչ ապարատներ գիտական նպատակների համար. բաժանավորիչ սարքեր. դռան էլեկտրական զանգեր. ակնոցների պատյաններ. լաբորատորիայի վառարաններ. օպտիկական մանրաթելեր (լույս հաղորդող շիկացման թելեր). հեռախոսալարեր. լուսակայված ռենտգենյան ժապավեններ. լուսանկարչության մեջ օգտագործվող ուլտրամանուշակագույն ճառագայթների զտիչներ. բարձրախոսների խոսափողներ. լուսանկարչական ապարատների կալաններ. գծիկավոր կոդերն ընթերցող սարքեր. գնդականթափանց բաճկոնակներ. ցուցիչ ազդալո-

ղաններ. մեկուսատախտակներ ինտեգրալ սխեմաների համար. լաբորատոր քրոմատագրիչներ. ժամանակագրիչներ (ժամանակի գրանցման սարքեր). խտասկավառակներ (ձայնա-, տեսա-). խտասկավառակներ (չվերագրանցելի). համակարգչային գործառնական գրառված ծրագրեր. համակարգիչներին կից սարքեր. համակարգչային գրառված ծրագրային ապահովում. լուսահավաք ոսպնյակներ. կապի ձայնային սարքեր . կոմուտացման սարքեր (տեղեկատվության մշակման սարքավորանք). ճնշամեղմման խցիկներ. կորակառուցիչներ. ստորջրյա սուզման դիմապանակներ. էլեկտրոնային մատիտներ (ցուցասարքերի տարրեր). մագնիսական ծածկագրով քարտեր. ֆաքսիմիլային ապարատներ. հրշեջ նավեր. ինտերֆեյսներ համակարգիչների համար. սկավառակակիրներ սկավառակների ավտոմատ հերթափոխությամբ համակարգիչների համար. ծնկակալներ բանվորների համար. լուսավորության էլեկտրական կարգավորիչներ. մագնիսական տեղեկակիրներ. մագնիսական կոդավորիչներ. մագնիսական ժապավենի բլոկներ համակարգիչների համար. միկրոպրոցեսորներ. մոդեմներ. մոնիտորներ (համակարգչային սարքավորանք). մոնիտորներ (համակարգչային ծրագրեր). «Մկնիկ» տեսակի մանիպուլյատորներ (կից սարքավորումներ). նշաններն ընթերցելու օպտիկական սարքեր. օպտիկական տեղեկակիրներ. օպտիկական սկավառակներ. համակարգչային տպիչներ. պրոցեսորներ (տեղեկատվության մշակման կենտրոնական բլոկներ). ընթերցող սարքեր (տեղեկատվության մշակման սարքեր). անվտանգության գոտիներ, բացառությամբ տրանսպորտային միջոցների նստոցների և սպորտային սարքավորանքի համար նախատեսվածների. պատկերամուտներ (սարքավորանք տեղեկատվության մշակման համար). ծխի դետեկտորներ. տրանզիստորներ (էլեկտրոնիկա). ռենտգենագրեր, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. մալուխների միացման կցորդիչներ. համրիչներ. էլեկտրոնային ծոցատետրեր. հեռախոսային ինքնապատասխանիչներ. տեսախցիկներ. պարկուճային նվագարկիչներ. խտասկավառակների նվագարկիչներ. ախտորոշման սարքեր, բացառությամբ բժշկական նպատակների համար նախատեսվածների. սկավառակակիրներ համակարգիչների համար. հաղորդաձողեր լույսի կետային աղբյուրների մոնտաժման համար. գրպանի էլեկտրոնային թարգմանիչներ. ապրանքների էլեկտրոնային բեռնապիտակներ. հակահրդեհային պաշտպանիչ ծածկոցներ. բռնկալամպեր (լուսանկարչություն). սմարթ-քարտեր (միկրոսխեմաներով քարտեր). չափագդալներ. դյուրակիր համակարգիչներ. հայտարարությունների էլեկտրոնային տախտակներ. գրպանի հաշվասարքեր. դժբախտ պատահարներից, ճառագայթումից և կրակից պաշտպանող կոշկեղեն. հակահրդեհային ջրցաններ. գործարկման մետաղաճոպաններ շարժիչների համար. արևապաշտպան ակնոցներ. հաշվառման (հաշվեցուցակային) ժամացույցներ (ժամանակ գրանցելու սարքեր). տեսաժապավեններ. տեսախաղերի քարթրիջներ. տեսաէկրաններ. տեսահեռախոսներ. սպորտային ակնոցներ. քթասեղմիչներ լողորդների և սուզորդների համար. պաշտպանական սաղավարտներ սպորտսմենների համար. էլեկտրոնային ներբեռնվող հրապարակումներ. համակարգչային ներբեռնվող ծրագրեր. նավագնացական սարքեր տրանսպորտային միջոցների համար (նավակողային համակարգիչներ). դեկորատիվ մագնիսներ. անլար հեռախոսներ. մկնիկների գորգեր. դյուրակիր տարածաընդունիչներ. դաստակների հենարաններ համակարգիչների հետ աշխատանքի համար. համառանցք մալուխներ. օպտիկաթելքային մալուխներ. պաշտպանիչ կափարիչներ խցակի վարդակների համար. խորջրյա զոնդեր. էլեկտրաֆիկացված ցանկապատեր. գրառված ծրագրային ապահովում համակարգչային խաղերի համար . ականջակալներ. լուսավորման համակարգերի բալաստային դիմադրություններ. փեյջերներ. արբանյակային նավագնացական սարքեր. սոլենոիդային կափույրներ (էլեկտրամագնիսական փոխարկիչներ). գերլարումից պաշտպանող կարգավորիչներ. դյուրակիր ռացիաներ. կոներ քամու ուղղությունը ցույց տալու համար. լուսային էմիսիայի էլեկտրոնային ցուցիչներ. մանեկեններ օգնություն ցուցաբերելուն վարժվելու համար (վարժասարքեր). բեմի լուսավորման կարգավորիչներ. թայմերներ (ավազի ժամացույցներ) ձու եփելու համար. ԴՆԹ-չիպեր. DVD -նվա-

գարկիչներ. բանկոմատներ. լուսացույցներ (ազդանշանային սարքավորումներ). անլար հավաքակազմեր հեռախոսների համար. ասբեստե առաջակալներ հրշեջների համար. սաղավարտներ ձիավարության համար. լաբորատորիայի հատուկ հագուստ. անհատականացման մագնիսական ապարանջաններ. տրանսպոնդերներ (հաղորդիչներ-պատասխանիչներ). ներբեռնվող հնչյունային ֆայլեր շարժական հեռախոսների զանգերի համար. ներբեռնվող երաժշտական ֆայլեր. ներբեռնվող պատկերների ֆայլեր. մանեկեններ վթարային փորձարկումների համար. լաբորատոր ցենտրիֆուգներ. տպատախտակներ. ՀՀԴ (USB) ֆլեշ-կրիչներ. դիրքորոշման համաշխարհային համակարգի ապարատներ (GPS). դյուրակիր մեդիանվագարկիչներ. նրբաքուղեր բջջային հեռախոսների համար. լույս արձակող դիոդներ (ԼԱԴ). տրիոդներ. բարձրացնող տրանսֆորմատորներ. անձնական դյուրակիր համակարգիչներ. հրդեհաշեջ փողրակներ. պայուսակներ դյուրակիր համակարգիչների համար. ծածկոցներ դյուրակիր համակարգիչների համար. թվային ֆոտոշրջանակներ. Պետրիի բաժակներ. Պիտոյի խողովակներ. ստրոբոսկոպներ. ճանապարհային ազդանշանային կոներ. ջերմաստիճանի կպչուն ցուցասարքեր ոչ բժշկական նպատակների համար. ներբեռնելի համակարգչային ծրագրային հավելվածներ. էլեկտրոնային գրքեր. սմարթֆոններ. դատարկ տոներային քարթրիջներ տպիչների և լուսապատճենահանող ապարատների համար. ռադիո-տեսադայակ, լսատեսասարքեր երեխաներին հետևելու համար. տեսախցիկներ երեխային հետևելու համար, տեսադայակ. օբյեկտիվների լուսապաշտպանիչ բլենդներ. պլանշետային համակարգիչներ. կոդավորված բանալի-քարտեր. 3D ակնոցներ. հիշողության քարտեր տեսախաղերի սարքերի համար. զրահաբաճկոններ. արագացումաչափներ. էլեկտրական ձայնահաններ (ադապտերներ). փրկարար պարկուճներ բնական աղետների համար. համակարգչային սարքավորումներ. արևային մարտկոցներ էլեկտրաէներգիայի արտադրության համար. շարժական հեռախոսներ, բջջային հեռախոսներ. հեռադիտական նշանոցներ հրանոթների համար. թվային ստորագրություն. մարմնի վրա կրվող սարքեր ֆիզիկական ակտիվությանը հետևելու համար. լիցքավորիչներ էլեկտրոնային սիգարետների համար . էլեկտրոնային ապարանջաններ (չափիչ գործիքներ). սմարթֆոնների ծածկոցներ. սմարթֆոնների պատյաններ. մոնոպոդներ (ձեռքի ամրակալաններ). կալորիաչափներ. ծախսաչափներ. լույս անդրադարձնող փրկարարական բաճկոններ. էլեկտրական վզնոցներ կենդանիներ վարժեցնելու համար. կառավարման լծակներ համակարգիչների համար, բացառությամբ տեսախաղերի համար նախատեսվածների. սմարթ-ակնոցներ. սմարթ-ժամացույցներ. հակահրդեհային ապարատներ. համակարգչային էկրանների պաշտպանիչ թաղանթներ. սպորտային սարքեր ատամները պաշտպանելու համար (կապպա). սպորտային սաղավարտներ. ասեղներ գեոդեզիական կողմնացույցների համար. անվտանգության սարքեր (կոդավորման սարքեր). ինֆրակարմիր դետեկտորներ. պատյաններ անձնական թվային օգնականների (ԱԹՕ) համար. կշեռքներ մանկիկների համար. էլեկտրոնային մուտքի հսկման համակարգեր դռների փակման համար. ջերմադիտման տեսախցիկներ. մարմնի զանգվածի վերլուծիչներով կշեռքներ. պլանշետային համակարգիչների պատյաններ. սև արկղեր (տվյալների գրանցիչներ). թվային օդերևութաբանական կայաններ. էլեկտրական տրանսպորտային միջոցների համար լիցքավորման կայաններ. ինտերակտիվ թաչսքրին տերմինալներ. սմարթ-մատանիներ. էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ երաժշտական գործիքների համար. ձայնային ինտերֆեյսներ. էքվալայզերներ (ձայնային ապարատներ). ցածր հաճախականության բարձրախոսներ. լոգարանի կշեռքներ. ջերմա-խոնավաչափներ. կենսաչիպեր. սմարթֆոնների համար հարմարեցված պաշտպանիչ ժապավեններ. վիրտուալ իրականության գլխադիր սաղավարտներ. ինտերակտիվ էլեկտրոնային գրատախտակներ. արհեստական բանականությամբ մարդանման ռոբոտներ գիտական հետազոտություններում օգտագործելու համար. ձայնային խառնիչներ. Էլեկտրոնային սիգարետների մարտկոցներ. էլեկտրոնային բանալի- բրելոկներ հեռակառավարման համար. ներբեռնելի էլեկտրոնային պարտիտուրա . գծագրական T – աձև քանոններ չափման համար. անկյունա-

քանոններ չափման համար. քառակուսի քանոններ չափման համար. էլեկտրոնային թվային ցուցասարքեր. լաբորատոր ռոբոտներ. ուսուցողական ռոբոտներ. անվտանգության ապահովման ռոբոտներ. անձնական թվային օգնականներ (ԱԹՕ). համակարգչային ծրագրային ապահովման հարթակներ, գրառված կամ բեռնվող. արբանյակային որոնիչներ. մատանու չափիչներ. մատի չափիչներ. բարակ հաճախորդ համակարգիչներ. հետևի տեսախցիկներ տրանսպորտային միջոցների համար. գրպանի էլեկտրոնային բառարաններ. մարզասարքեր վերակենդանացման հմտությունների ուսուցման համար. էլեկտրական մետաղալարեր ավտոմեքենաների համար. ակվալանգի խողովակներ. սպորտային սուլիչներ. համակարգչային էկրանները պաշտպանող ծրագրային ապահովում, գրառված կամ բեռնվող. ինքնանկարահանման (սելֆիի) օբյեկտիվներ. բեռնվող գրաֆիկական տարրեր բջջային հեռախոսների համար. հեռահաղորդակցային ապարատներ ոսկերչական զարդերի տեսքով. վրան կրովի համակարգիչներ. վրան կրովի մոնիտորների ցուցասարքեր. մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի (ՄՌՏ) ապարատներ, ոչ բժշկական նպատակների համար. փրկարարական լազերային ազդանշանային լույսեր. դատարկ թանաքային քարթրիջներ տպիչների և լուսապատճենահանող ապարատների համար. վահվահ ոտնակներ. հասակաչափներ. վարսահարդարների համար մանեկենգլուխներ (ուսումնական սարքեր). սարքեր վիրտուալ ստեղնաշարերի նախագծման համար. փրկարարական ծածկոցներ. փրկանավակներ. նանոմասնիկների չափերի վերլուծիչներ. բարձիկներ ականջակալների համար. վիրտուալ իրականության ձեռնոցներ. գնդաձև մկնիկներ (համակարգիչներին կից սարքեր). բջջային հեռախոսների համար բեռնվող զգայապատկերներ. հեռաներկայության ռոբոտներ. օդակարգավորման թվային թերմոստատներ. պիեզոէլեկտրական տվիչներ. օրգանական լույս արձակող դիոդներ (ՕԼԱԴ).) քվանտային կետերով լույս արձակող դիոդներ (ՔԼԱԴ). աստիճանավորված կաթոցիչներ, բացառությամբ բժշկական կամ կենցաղային նպատակներով օգտագործվողների. խցակի էլեկտրական վարդակներ. խաղային բեռնվող ծրագրեր համակարգիչների համար. փրկարարական, ոչ պայթուցիկ և ոչ հրատեխնիկական ազդանշաններ. դյուրակիր համակարգիչների տակդիրներ. գլխարկներ՝ որպես պաշտպանիչ սաղավարտներ. էլեկտրոնային կախովի կողպեքներ. ծանրագոտիներ ջրասուզակների համար. ականջակալներ հեռավոր կապի համար. տրանսպորտային միջոցների կայանման տվիչներ. տոմսերի տպիչներ. բեռները բարձրացնելիս օժանդակելու համար մարմնի լծասարքեր. անասուններին ուղղորդելու համար նախատեսված ազդանշանային չխչխկաններ. տեսապրոյեկտորներ. ներբեռնվող ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) բանալիներ կրիպտոակտիվների ստացման և ծախսման համար. ներբեռնելի էլեկտրոնային դրամապանակներ. վարկային քարտերի տերմինալներ. կենսաչափական անձնագրեր. նույնականացման կենսաչափական քարտեր. խելացի տան հանգույցներ, տան ավտոմատացման հանգույցներ. տվյալների հավաքածուներ, գրառված կամ բեռնվող. տրանսպորտային միջոցների դիմապակու վրա տեղեկատվության ցուցադրման սարք. խելացի բարձրախոսներ. կենսաչափական կողպեքներ. հրդեհաշիջման գնդակներ. կրելի բարձրախոսներ. գերմանր փոշու մասնիկների շարժական հաշվիչներ. ծալովի սմարթֆոններ. լուսաբռնկումներ սմարթֆոնների համար. 3D սկաներներ. գերբարակ թաղանթով բարձրախոսներ. անլար խոսափողներ բարձրախոսներով. սկաներներ (սարքավորումներ) ավտոմեքենայի ախտորոշում կատարելու համար. հապտիկ կոստյումներ, բացառությամբ բժշկական նպատակների համար. ինքնանկարահանման (սելֆիի) օղակլույսեր սմարթֆոնների համար. բջջային հեռախոսի լիցքավորիչներ. բջջային հեռախոսի էկրանի պաշտպանիչներ. նախազգուշական նշաններ (լուսավորված). անվտանգության նշաններ (լուսավորված). բջջային հեռախոսի օղակ-բռնիչներ. բջջային հեռախոսի օղակ-կանգնակներ. խոսափողով ականջակալներ. խոսափողով ականջակալներ տեսախաղեր խաղալու համար. խոսափողով ականջակալներ տեսախաղեր խաղալու համար. լաբորատոր էլեկտրոլիզարարներ. չափաբերման նպատակով գազի գեներատորներ. կրծքի կաթի թեստավորման սարքավորումներ, բացառությամբ

բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. էլեկտրաէներգիայի դյուրակիր լիցքավորիչներ. ուժեղացուցիչներ սերվոմոտորների համար. էլեկտրոնային կառավարման սարքեր սերվոմոտորների համար. քվանտային համակարգիչներ. երաժշտական գործիքների թվային ինտերֆեյսի կարգավորիչներ՝ որպես աուդիո միջերեսներ. լաբորատոր կենսառեակտորներ. բջիջների կուլտիվացման կենսառեակտորներ գիտական հետազոտությունների համար. բջջային հեռախոսների և սմարթֆոնների համար հարմարեցված բռնիչներ. հեռախոսի բռնիչներ մեքենայի համար. գլխին ամրացված ցուցասարքեր. անլար շարժական տպիչներ՝ դյուրակիր համակարգիչների և շարժական սարքերի հետ օգտագործելու համար. գունավոր կուրությունը ուղղելու ակնոցներ. հպասպնյակների պատյաններ՝ ուլտրաձայնային մաքրման գործառույթով. անկումից պաշտպանվելու համար անվտանգության բարձիկներ. նյարդային սաղավարտներ, ոչ բժշկական նպատակների համար. շարժական բարձրախոսներ. ալկոտեստերներ. դյուրակիր համակարգիչների հովացման բարձիկներ. հովացման օդափոխիչներ համակարգիչների համար. արտահայտչության ոտնակներ կիթառների համար. ներբեռնվող համակարգչային ծրագրային ապահովում՝ որպես բժշկական սարք. տարհանման աթոռներ. վահանակի գորգեր, որոնք նախատեսված են բջջային հեռախոսների և սմարթֆոնների համար. կարգավորող սարքեր սերվո շարժիչների համար. փոշու դիմակներ օդի մաքրմամբ. էլեկտրական շարժաբերներ. էլեկտրական գծային շարժաբերներ. դժբախտ պատահարներից պաշտպանող մեկուսիչ ձեռնոցներ. չափաբաժնով բաշխիչներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների (չափիչ սարքեր). չոր հիդրոկոստյումներ. հիդրոկոստյումներ ջրասուզակության համար. թաց հիդրոկոստյումներ. համակարգչային ցանցի երթուղարարներ. հաճախականության ընդլայնիչներ. շփման և ուսուցման գործառույթներով օժտված մարդանման ռոբոտներ՝ մարդկանց օգնելու և զվարճացնելու համար. հրթիռակոծման նախազգուշացնող համակարգեր ինքնավար նավագնացական համակարգեր նավերի համար. ինքնասպասարկման տերմինալներ. փաստաթղթերի շարժական սկաներներ. ստեղնաշարով սմարտֆոնների պատյաններ. չափող սարքեր անիվների հավասարեցման համար. խառնիչներ տեսամոնտաժի համար. արհեստական բանականությամբ մարդանման ռոբոտներ՝ ըմպելիքներ պատրաստելու համար. օգտվողի կողմից ծրագրավորվող մարդանման ռոբոտներ, չկարգավորված. ներբեռնվող թվային ֆայլեր, նույնականացված ոչ փոխարկելի տոկեններով (NFT). չափաբերման նպատակով օզոնի գեներատորներ. բջջային հեռախոսների քուղեր. կայունարարներ թվային տեսախցիկների համար կայունարարներ սմարտֆոնների համար. արևապաշտպան ակնոցներ ընտանի կենդանիների համար.

դաս 10. որովայնային գոտիներ. ենթաորովայնային գոտիներ. որովայնային իրանակալներ. բժշկական ներքնակներ ծննդաբերության համար. լողական ապարատներ թույլ լողունություն ունեցողների համար. լսափողակներ. վիրաբուժական սեղմիչներ. բժշկական ասեղներ. ասեղներ կարեր դնելու համար. արգանդային (հեշտոցային) օղակներ. տաք օդի թերապևտիկ ապարատներ. տաք օդի թրթռիչներ բժշկական նպատակների համար. տակը դնելու մոմլաթներ հիվանդանոցային մահճակալների համար. սավաններ անպահությամբ տառապողների համար. փողաձողեր (կաթետերներ). ռադիումային խողովակներ բժշկական նպատակների համար. մանկական ատամնաօղակներ. ոսկրաբուժական վիրակապեր հոդերի համար. վիրաբուժական սևեռաթիթեղներ. ձգուն (էլաստիկ) կալանդներ. գալվանական գոտիներ բժշկական նպատակների համար. ռենտգենյան ապարատներ բժշկական նպատակների համար. սանիտարահիգիենիկ տակադիր պետքանոթներ. տակադիր պետքանոթներ բժշկական նպատակների համար. մանկաբարձական գործիքներ անասնաբույժների համար. մանկական սննդի շշեր ծծակներով. վիրաբուժական դանակներ. հերձադանակներ. ոտնամաններ բժշկական նպատակների համար. վիրաբուժական ընդարձակիչներ. թքամաններ բժշկական նպատակների համար. աղելարեր. անվավոր պատգարակներ հիվանդների համար. պատգարակներ հիվանդների համար. ոսկրաբուժական իրեր. կալանդներ ճողվածքների համար.

կոշիկների սուպինատորներ (վերհակիչներ). զսպաշապիկներ. կանյուլներ (փողակներ). ձեռնոցներ բժշկական նպատակների համար. հարմարանքներ մարմնի խոռոչները լվանալու համար. գոտիներ բժշկական նպատակների համար. կալանդներ հղիների համար. ոսկրաբուժական գոտիներ. ատամնաբույժի բազկաթոռներ. ամորձատման աքցաններ. էլեկտրական բարձիկ-ջեռոցներ բժշկական նպատակների համար. ոսկրահարդար կոշիկներ. արհեստական ատամներ. վիրաբուժական սպունգներ. վիրաբուժական ապարատուրա և գործիքներ. պայուսակներ բժշկական գործիքների հավաքածուներով. վիրաբուժական թելեր. ապարատուրա անզգայացման համար. վիրաբուժական մկրատներ. ջերմաէլեկտրական ճնշակներ (վիրաբուժական). ճնշակներ (վիրաբուժական). կաթոցիչներ բժշկական նպատակների համար. հարմարանքներ կոշտուկները կտրելու համար. կոսմետիկական մերսման սարքեր. բարձիկներ բժշկական նպատակների համար. վիրաբուժական կտրող գործիքներ. ինկուբատորներ բժշկական նպատակների համար. գդալներ դեղ ընդունելու համար. քերակներ լեզուն մաքրելու համար. ականջի ունելյակներ. ատամնաբուժական շաղափներ. ատամնաբուժական ապարատուրա և գործիքներ. բույթեր ատամների պրոթեզավորման համար. ատամի պրոթեզներ. նշտարներ. ատամնաբուժական հայելիներ. մատակալներ բժշկական նպատակների համար. ներարկիչներ ներարկումների համար. ջրաքաշման փողակներ բժշկական նպատակների համար. ջրի պարկեր բժշկական նպատակների համար. ռենտգենյան ապարատների էկրաններ բժշկական նպատակների համար. էլեկտրասրտագիրներ. զոնդեր (զննաձողեր) բժշկական նպատակների համար. պոմպեր բժշկական նպատակների համար. ապարատուրա արյան անալիզների համար. բազկաթոռներ բժշկական կամ ատամնաբուժական նպատակների համար. պղպջակային կաթոցիչներ բժշկական նպատակների համար. մանկաբարձական աքցաններ. ապարատուրա գալվանաթերապիայի համար. ձեռնոցներ մերսման համար. գաստրոսկոպներ (ստամոքսադիտակներ). բժշկական սառցապարկեր. արյունաչափիչներ. ջրային մահճակալներ բժշկական նպատակների համար. ներարկիչներ ենթամաշկային ներարկումների համար. որովայնային բարձիկներ. ինհալատորներ (ներշնչակներ). ներարկիչներ բժշկական նպատակների համար. քնաբեր բարձիկներ անքնության դեմ. ուրոլոգիական (միզաբանական) սարքեր և գործիքներ. ինսուֆլյատորներ. հոգնաներ. ուլտրամանուշակագույն լամպեր բժշկական նպատակների համար. լազերներ բժշկական նպատակների համար. կաթնածծիչներ. լամպեր բժշկական նպատակների համար. գոլորշիարարներ բժշկական նպատակների համար. միզարաններ՝ որպես անոթներ. ծնոտների պրոթեզներ. անզգայացման դիմկալներ. մերսման սարքեր. բժշկական սարքեր և գործիքներ. բժշկական անոթներ. բժշկական գործիքների պիտոյատուփեր (ճամպրուկներ). վերջույթների պրոթեզներ. վիրաբուժական հայելիներ. հատուկ կահույք բժշկական նպատակների համար. մանկաբարձական գործիքներ. գոտիներ պորտի համար. կերատոմետրեր, ակնաչափներ. սարքեր զարկերակի չափման համար. ակնադիտակներ. լսողական օրգանները պաշտպանող միջոցներ. արհեստական մաշկ վիրաբուժական նպատակների համար. հենակների (անթացուպերի) ծայրապանակներ. դեղահաբերը ներածելու հարմարանքներ. նախապահպանակներ. զարկերակային ճնշման չափման սարքեր. քվարցային լամպեր բժշկական նպատակների համար. ռենտգենյան ապարատներ և տեղակայանքներ բժշկական նպատակների համար. ռենտգենագրեր բժշկական նպատակների համար. ռադիոգիտական ապարատներ բժշկական նպատակների համար. ապարատներ ճառագայթային բուժման համար. վերակենդանացման ապարատուրա. ռենտգենյան խողովակներ բժշկական նպատակների համար. հարմարանքներ ռենտգենյան ճառագայթներից պաշտպանվելու համար. շնչադիմակներ արհեստական շնչառության համար. ապարատուրա արհեստական շնչառության համար. սղոցներ վիրաբուժական նպատակների համար. կրծքի պրոթեզներ. արգանդային ներարկիչներ. հեշտոցային սրսկիչներ. լսափողակներ. ծծակներ երեխաների համար. հենարաններ տափակաթաթության դեպքում օգտագործելու համար. ապարատուրա խլությունը բուժելու համար. պահող վիրակապեր.

կարեր դնելու նյութեր. վիրահատական սեղաններ. հերյուններ. միզուկային զոնդեր (զննաձողեր). միզուկային ներարկիչներ. բժշկական բանկաներ. անասնաբուժական սարքեր և գործիքներ. թրթռական ապարատներ մահճակալների համար. թրթռամերսիչներ. աչքի պրոթեզներ. օդակախութային սարքեր բժշկական նպատակների համար. փչովի բարձեր բժշկական նպատակների համար. փչովի բարձիկներ բժշկական նպատակների համար. փչովի ներքնակներ բժշկական նպատակների համար. ներարկիչներ բժշկական նպատակների համար. վիրաբուժական առաձգական գուլպաներ. երակների լայնացման ժամանակ օգտագործվող ձգուն (էլաստիկ) երկար գուլպաներ. հենակներ (անթացուպեր). ծծակով շշերի կափարիչներ. ծծակներ մանկական շշերի համար. ոսկրահարդար միջատակեր. մանրէազերծված վիրաբուժական սավաններ. հատուկ բժշկական նպատակների համար հարմարեցված մահճակալներ. էլեկտրոդներ բժշկական նպատակների համար. էլեկտրական գոտիներ բժշկական նպատակների համար. ապարատուրա ֆիզիկական վարժությունների համար բժշկական նպատակներով. ինկուբատորներ նորածինների համար. հարմարանքներ մարմնի խոռոչները մաքրելու համար. ատամնաբուժական էլեկտրական ապարատուրա. ապարատուրա բժշկական անալիզների համար. ուլտրամանուշակագույն ճառագայթների զտիչներ բժշկական նպատակների համար. ծխահարման ապարատներ բժշկական նպատակների համար. իրանակալներ բժշկական նպատակների համար. ոչ քիմիական հակաբեղմնավորիչ միջոցներ. էլեկտրական ծածկոցներ բժշկական նպատակների համար. մազի պրոթեզներ. վիրաբուժական ծնկակալներ. ոսպնյակներ (ներակնային պրոթեզներ) ներպատվաստման համար. պառկելախոցերի առաջացումը կանխող բարձիկներ. ֆիզիոթերապևտիկ ապարատուրա. շնչաչափներ (բժշկական գործիքներ). ջերմաչափներ բժշկական նպատակների համար. ասեղներ ասեղնաբուժության համար. հատուկ հագուստ վիրահատական սենյակների համար. ախտորոշման ապարատներ բժշկական նպատակների համար. գործիքներ էլեկտրաասեղնաբուժության համար. սրտախթանիչներ. բուժվող հիվանդներին բարձրացնելու ամբարձիչներ. դիմկալներ բժշկական անձնակազմի համար. ոսկրաբուժական գիպսի կապեր. վիրաբուժական սավաններ. վիրաբուժական ներպատվաստիչներ արհեստական նյութերից. ջերմաճնշակներ առաջին օգնության համար. գիշերանոթների նստոցներ. սրտի դեֆիբրիլյատորներ. դիալիզորդ սարքեր. լարային ուղղորդիչներ (բժշկական). օրթոդոնտիկ սարքեր. բժշկության մեջ օգտագործվող օդաքաշ ապարատներ. հատուկ տարողություններ բժշկական թափոնների համար. վիրակապ (աջակցող կալանդ). պարկիկներ հեշտոցային ցնցուղման համար. էրոտիկ տիկնիկներ (սեքս տիկնիկներ). միկրոողորկման ապարատներ մաշկի համար. մարմնի ֆունկցիոնալ խանգարումները վերականգնելու համար ապարատուրա բժշկական նպատակներով. ստենտներ. ականջի խցաններ (լսողության պաշտպանության սարքեր). ջերմաստիճանի կպչուն ցուցասարքեր բժշկական նպատակների համար. հենասայլակներ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար. տոմոգրաֆներ բժշկական նպատակներով օգտագործելու համար. կորյակային ցանը բուժելու սարքեր. սաներ ոջիլների դեմ. քառակուսի հենարանով ձեռնափայտեր բժշկական նպատակների համար. ներդիտակ խցիկներ բժշկական նպատակների համար. սրտի աշխատանքը դիտարկող սարքեր. սեղմող (կոմպրեսիոն) հագուստ. սեքս-խաղալիքներ. ուղեղի էլեկտրախթանիչներ. ներդրվող միջոցներ դեղերը մաշկի տակ ներարկելու համար. կենսաքայքայիչ իմպլանտներ ոսկորի սևեռակման համար. բժշկական մածկաթիակներ. ասպիրատորներ քթի համար. պաշտպանիչ ատամնակալներ ատամնաբուժական նպատակների համար. դաշտանային թասակիկներ. շնչառական դիմակներ արհեստական շնչառության համար. օրթոդոնտիկ ռետինե կապեր. վերլուծիչներ մանրէների նույնականացման համար բժշկական նպատակներով. ապարատներ ԴՆԹ և ՌՆԹ հետազոտությունների համար բժշկական նպատակներով. ցողունային բջիջների վերականգնման ապարատներ բժշկական նպատակներով. մարմնի ճարպը հսկող-չափող սարքեր. մարմնի կազմությունը հսկողչափող սարքեր. ոտքերի մատների բաժանիչներ ոսկրաբուժական նպատակների համար.

հակառևմատիկ ապարանջաններ. հակառևմատիկ օղակներ. ապարանջաններ բժշկական նպատակների համար. վիրաբուժական ռոբոտներ. ծծակներ մանուկներին կերակրելու համար. ապարանջաններ սրտխառնոցի դեմ. քայլավարժանքի անվավոր սայլակներ. ջրածնային ինհալյատորներ (ներշնչակներ). մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի (ՄՌՏ) ապարատներ, բժշկական նպատակների համար. մահճակալների փչովի ներքնակներ բժշկական նպատակների համար. սառեցնող սպեղանալաթեր բժշկական նպատակների համար. սառեցնող բարձիկներ առաջին օգնության համար. ձեռքի շարժական միզամաններ. ձեռնափայտեր բժշկական նպատակների համար. ռոբոտային էքզոկմախքների կոստյումներ բժշկական նպատակներով օգտագործելու համար. ակուպրեսուրային ապարանջաններ. երեխաների ծծակների պնդակ-բռնիչներ. խոլեստերինը չափող գործիքներ. հիվանդի հետազոտման խալաթներ. բիոմագնիսական օղակներ թերապևտիկ կամ բժշկական նպատակների համար. դեմքի թերապևտիկ դիմակներ. լնդերի մերսման ռետինե պարագաներ մանկիկների համար. հաբերի մանրատիչներ. արյան մեջ գլյուկոզան չափող գործիքներ. պնդացման լամպեր բժշկական նպատակների համար. արհեստական նյութերից պատրաստված ոսկրային լցանյութեր. ինհալատորների (ներշնչակների) խցիկներ. բժշկական զննման համար սեղաններ. նանոռոբոտներ բժշկական նպատակների համար. կինեզիոլոգիայի ժապավեններ. բժշկական սառեցնող սարքեր ջերմահարվածը բուժելու համար. թերապևտիկ հիպոթերմիայում օգտագործելու համար նախատեսված բժշկական սառեցնող սարքեր. հաբեր կտրող գործիքներ. պաշտպանիչ դիմակներ բժշկական նպատակների համար. ԼԱԴ դիմակներ թերապևտիկ նպատակների համար. թթվածնի խտանյութեր բժշկական նպատակների համար. պահող կալանդներ. լազերային սաղավարտներ մազաթափության բուժման համար. գոլորշիով տաքացվող մեկանգամյա օգտագործման դիմակներ թերապևտիկ նպատակների համար. գոլորշիով տաքացվող մեկանգամյա օգտագործման վիրակապեր թերապևտիկ նպատակների համար. հակաբեղմնավորիչ իմպլանտներ. ներարգանդային սարքեր. շաքարախտի հսկողության սարքավորումներ. լսաչափներ. հապտիկ կոստյումներ բժշկական նպատակների համար. կրծքի կաթի թեստավորման սարքավորումներ բժշկական նպատակների համար. մազական խողովակներ բժշկական նպատակների համար. բյուրեղներ թերապևտիկ նպատակների համար. դեղապատ ստենտներ թրոմբոզի համար. դյուրակիր ականջմաքրիչներ էնդոսկոպիայի գործառույթով. մերսման էլեկտրական ատրճանակներ. նյարդային սաղավարտներ բժշկական նպատակների համար. հիգիենիկ դիմակներ. բազմակի օգտագործման հիգիենիկ դիմակներ, որոնք պատրաստված են շղարշով. դեմքի գեղագիտական բուժման սարքավորումներ՝ ուլտրաձայնային ալիքների օգտագործմամբ. գդալներ, ցնցում ունեցող հիվանդների համար. չափաբաժնով բաշխիչներ բժշկական նպատակների համար. նեբուլայզերներ բժշկական նպատակների համար. զտիչներ շնչադիմակների համար բժշկական նպատակների համար. շնչադիմակներ օդի զտման համար բժշկական նպատակների համար. շնչադիմակներ բժշկական նպատակների համար. շնչառական ապարատներ բժշկական նպատակների համար. թերապևտիկ մագնիսներ. հիվանդանոցային մահճակալներ. մերսման աթոռներ՝ ներկառուցված մերսման ապարատով. դեմքի էսթետիկ բուժման համար լուսարձակող դիոդներով (ԼԱԴ) ապարատներ. ականջի խցաններ.

դաս 11. ավտոմատ տեղակայանքներ ոռոգման համար. ջերմային կուտակիչներ. ացետիլենային այրոցներ. ացետիլենային գեներատորներ. ացետիլենային լամպեր. օդաքաշ թասակներ. լուսավորող համակարգեր թռչող ապարատների համար. խուղակային վառարաններ. ապարատներ օդի հոտազերծման համար. սարքվածքներ օդի սառեցման համար. զտիչներ օդորակման համար. օդաջեռուցիչներ. օդային չորուցիչներ. օդորակման կայանքներ. օդի զտման տեղակայանքներ. տաք օդով աշխատող ջեռուցման սարքեր. սարքավորանք տաք օդով բաղնիքների համար. շփական բռնկորդներ գազային վառիչների համար. գազային վառիչներ. լամպանոթներ. էլեկտրական լամպերի անոթներ. աղեղային լամպեր. էլեկտրական լամպեր. հիմնակմախքներ վառարանների համար. սառնապահարաններ. լապ-

տերներ տրանսպորտային միջոցների համար. ցոլալապտերներ մեքենաների համար. սառեցնող բաքեր վառարանների համար. վաննաներ. նստելու վաննաներ. շարժական խցիկներ թուրքական բաղնիքների համար. սարքավորանք լոգարանների համար. ջեռուցիչներ վաննաների համար. սանիտարատեխնիկական տեղակայանքներ լոգարանների համար. լուսատուներ. լուսավորման լապտերներ. լամպերի կոթառներ. շիկարանային այրոցներ. այրոցներ լամպերի համար. լապտերներ հեծանիվների համար. բիդե. ջրաջեռուցիչներ, բացառությամբ մեքենայի մասերի. թրծման վառարաններ. ջրածորաններ. խցաններ ռադիատորների համար. գրպանի էլեկտրական լապտերներ. ջրատաքացուցիչներ. վառարաններ հացաբուլկեղենի համար. հակացրցողիչ գլխադիրներ ծորակների համար. հարմարանքներ շամփուրները շրջելու համար. շամփուրներ. լաբորատորիայի այրոցներ. ջահավոր տեղակայանքներ նավթարդյունաբերության համար. այրոցներ. այրոցներ մանրէների ոչնչացման համար. կաթսաներ լվացքատների համար. շարժական զուգարաններ. օդափոխիչներ (օդորակում). սուրճ բովելու ապարատներ. օդաջեռուցիչներ (կալորիֆերներ). խողովակների և խողովակաշարերի ծորակներ. ջերմության վերականգնիչներ. հրահեստ աղյուսապատվածքներ վառարանների համար. լամպեր տրանսպորտային միջոցների շրջադարձի ցուցիչների համար. ածխային էլեկտրոդներ աղեղային լամպերի համար. ջեռուցման տեղակայանքներ. սարքավորանք վառարանները բեռնելու համար. լվացման բաքեր զուգարանների համար. եռացրած ջրով աշխատող ջեռուցման տեղակայանքներ. ջեռուցման կաթսաներ. ջեռուցման կաթսաների խողովակներ. օդորակիչներ տրանսպորտային միջոցների համար. ջեռուցման-տաքացման սարքեր, որոնք աշխատում են պինդ, հեղուկ և գազային վառելիքով. ջեռուցման տեղակայանքներ տրանսպորտային միջոցների համար. ջեռուցման էլեկտրական սարքեր. կենտրոնական ջեռուցման ռադիատորներ. խոնավարարներ կենտրոնական ջեռուցման ռադիատորների համար. ջեռուցիչ տարրեր. ջեռուցիչներ արդուկների համար. էլեկտրական կամ ոչ էլեկտրական ջերմակներ ոտքերի համար. էլեկտրական մուֆտաներ ոտքերը տաքացնելու համար. կերակուրներ տաքացնելու հարմարանքներ. ընկղմվող ջեռուցիչներ. լամպի ապակիներ. լամպերի խողովակներ. ծխնելույզների ծխանցքեր. ծխանցքերի սահափականներ. չորուցիչներ մազերի համար. ջրի բաշխման տեղակայանքներ. չորացման ապարատներ. օդորակիչներ. սարքեր սոսինձը տաքացնելու համար. թորման սյուներ. խողովակներ (սանիտարատեխնիկական համակարգերի մասեր). ջրմուղի տեղակայանքներ. զուգարաններ. սառցարանային ապարատներ. էլեկտրական սպասք կերակուր պատրաստելու համար. խոհանոցային սալօջախներ. սարքեր և տեղակայանքներ սննդամթերքի ջերմային մշակման համար. լապտերներ մոտոցիկլետների համար. էլեկտրական գազապարպիչ խողովակներ լուսավորման համար. հակասառցապատիչներ տրանսպորտային միջոցների համար. ապարատներ ախտահանման համար. ծովային ջրի աղազրկման տեղակայանքներ. ապարատներ չորացման համար. լույսի ցրիչներ. ըմպելիքներ սառեցնելու ապարատներ. թորման ապարատներ. ցնցուղներ. էլեկտրական լամպերի կոթառներ. ջրի մաքրման տեղակայանքներ. ջրի զտման սարքեր. տեղակայանքներ ջրի սառեցման համար. շատրվաններ. տարողություններ ջուրը ճնշման տակ պահելու համար. ջրի մանրէազերծիչներ. ջերմափոխանակիչներ, բացի մեքենայի մասերից. լուսավորման սարքեր և տեղակայանքներ. ջահեր. հոսաջրերի մաքրման տեղակայանքներ. առաստաղի լուսամփոփներ. էլեկտրական ռադիատորներ. գազերի զտման սարքեր. սարքեր կերերը չորացնելու համար. գոլորշիարարներ. վառարաններ (ջեռուցիչ սարքեր). էլեկտրական լամպերի թելեր. զտիչներ խմելու ջրի համար. կերոններ. շարժական դարբնոցներ. վառարաններ, բացառությամբ լաբորատոր վառարանների. ձևավոր աղյուսապատվածքներ վառարանների համար. հրակալներ վառարանների համար. օջախներ. մոխրատաշտեր վառարանների համար. սառնարանային ապարատներ և մեքենաներ. սառնարանի խցիկներ. սառնարանային տարողություններ. լամպեր մազերը գանգրացնելու համար. մրգերը չորացնելու ապարատներ. գազազտիչներ (գազային սարքավորանքի մասեր). գազայրոցներ. գազի կաթսաներ. գազալցված լամպեր. շոգեարտադրիչներ,

բացառությամբ մեքենաների մասերի. մանրէասպան լամպեր օդը մաքրելու համար. սարքեր և մեքենաներ սառույց պատրաստելու համար. էլեկտրական սառնախցիկներ. գնդաձև թասակներ լամպերի համար. ջեռուցման սալեր. հաց բովելու սարքեր (տոստեր). գրիլի խոհանոցային ապարատներ. աղբայրիչներ (վառարաններ). ապարատներ օդի կամ ջրի իոնացման համար. դեկորատիվ շատրվաններ. լաբորատոր լամպեր. կաթի սառեցման տեղակայանքներ. պաստերիչներ. յուղային լամպեր. ուլտրամանուշակագույն ճառագայթման լամպեր, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. պայթանվտանգ լամպեր. անդրադարձիչներ լամպերի համար. չինական լապտերներ. լվացարաններ (սանիտարատեխնիկական սարքավորման մասեր). հեղուկների սառեցման տեղակայանքներ. լյումինեսցենտային խողովակներ լուսավորման համար. մագնեզիումային թելեր լուսավորման սարքերի համար. չորուցիչներ ածիկի համար. հանքափորի լամպեր. տեղակայանքներ միջուկային վառելիքի և միջուկային ռեակցիաների դանդաղարարների համար. կափույրներ պահեստարաններում մակարդակի կարգավորման համար. էլեկտրական լամպեր տոնածառերի համար. լուսավորվող համարներ շենքերի համար. թթվածնա-ջրածնային այրոցներ. ջեռուցման ռադիատորներ. յուղային այրոցներ. ցոլալապտերներ տրանսպորտային միջոցների համար. ջեռուցման թիթեղներ. լուսարձակներ. պոլիմերացված տեղակայանքներ. խոհանոցային վառարաններ (ջեռոցներ). օդի ոչ ավտոմատ կափույրներ շոգեջեռուցման տեղակայանքների համար. ապարատներ և մեքենաներ ջուրը մաքրելու համար. օդի մաքրման սարքեր և մեքենաներ. թորման աշտարակներ թորման համար. տեղակայանքներ և մեքենաներ սառեցման համար. տաքացման խոհանոցային սարքեր. անդրադարձիչներ տրանսպորտային միջոցների համար. սառնարանային սարքավորումներ և տեղակայանքներ. սարքեր և տեղակայանքներ սառեցման համար. քարշի կարգավորման ձգափականներ. կարգավորիչ պարագաներ ջրասարքերի կամ գազասարքերի և ջրմուղների կամ գազամուղների համար. պահպանիչ պարագաներ ջրասարքերի կամ գազասարքերի և ջրմուղների կամ գազամուղների համար. ծորակներ. ջրատար ծորակների միջադիրներ. շամփուր պարունակող հարմարանքներ միս տապակելու համար. սանիտարատեխնիկական սարքեր և տեղակայանքներ. չորացման ապարատներ և տեղակայանքներ. ապարատներ լվացասենյակներում ձեռքերը չորացնելու համար. օդափոխիչներ (օդորակման կայանքների մասեր). մանրէազերծիչներ. գալարախողովակներ (թորման, ջեռուցման կամ սառեցման տեղակայանքների մասեր). ծխախոտի սառեցման տեղակայանքներ. չորուցիչներ ծխախոտի համար. լուսավորման սարքեր տրանսպորտային միջոցների համար. տապակոցներ. մոխիր տեղափոխելու ավտոմատ սարքվածքներ. գոլորշու արտադրման տեղակայանքներ. օդափոխության կայանքներ և ապարատներ (օդորակում). օդափոխման (օդորակում) տեղակայանքներ և ապարատներ տրանսպորտային միջոցների համար. զուգարանակոնքեր. նստոցներ զուգարանների համար. լուսամփոփներ. լուսամփոփների կալիչներ (բռնիչներ). խառնիչ ծորակներ ջրատար խողովակների համար. կարգավորիչ և պահպանիչ պարագաներ գազամուղների համար. կարգավորիչ և պահպանիչ պարագաներ ջրմուղային սարքավորումների համար. շոգու կուտակիչներ. տեղակայանքներ և ապարատներ ջուրը փափկացնելու համար. օդաքաշ լաբորատոր թասակներ. օդի մանրէազերծիչներ. թորիչներ. սպիրտայրոցներ. հակաշլացնող հարմարանքներ տրանսպորտային միջոցների համար (լամպերի պարագաներ). տրանսպորտային միջոցների ապակիների տաքացուցիչներ. գլխադիրներ գազայրոցների համար. ջրամատակարարման համակարգերի տեղակայանքներ. միջուկային ռեակտորներ. խոհանոցային էլեկտրական ավտոկլավներ, էլեկտրական շուտեփուկներ. լապտերներ ավտոմեքենաների համար. ծծակով շշերի էլեկտրական տաքացիչներ. էլեկտրական վաֆլեկաղապարներ. պահպանիչ և կարգավորիչ պարագաներ գազասարքերի համար. էլեկտրական լուծակորզիչներ սուրճի համար. էլեկտրական սրճեփներ. փողոցային լապտերներ. շոգեկաթսաների ջերմախողովակներ. կրակարաններ (մանղալներ). էլեկտրական ճարպաջեռոցներ. սենյակային բուխարիներ. ջերմային պոմպեր. արևային ջերմային հավաքիչներ (ջեռուցում). արևի վառա-

